Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հողմրդական
աղանդներ
Ա.
Մոլա Գասար-եր-դին

Բ-տրակ

894.362
Ս-86

Բ-1904

894.362
5-86
200

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

Ա

ՄՈՂՂԱ ՆԱՍՐ-ԷԴ-ԴԻՆ

Հաւաքեց
Ե. ԼԱԼԱՑԵԱՆ

Բ. տիպ.

ԹԻՖԼԻՍ, 1904 Թ.
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաթեան փ., № 15.
(63)

914-Հ.Հ
29427 Կ.2

Дозв. ценз. Тифлисъ. 4 Ноября 1904 г.

ՍՍՀ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա ССР
Ա. Մեսրոպի անվան
Ա. Мясникяна
12437-58

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սկսելով «Ժողովրդական առակներ» ի ներկայ շարքը, ես ցանկանում եմ հաւաքել հայ ժողովրդի մէջ պատմուած բազմաթիւ առակները, և ապա մի ուսումնասիրութիւն կատարել, ցոյց տալով սրանց ծագումը, զարգացումը, արտայայտած փիլիսոփայութիւնն ու բարոյական սկզբունքները, ժողովրդական ծաղրի ոյժը և այլն։

Ներկայ շարքի իւրաքանչիւր պրակի մէջ հաւաքուած են մի առակախօսի վերագրուած առակները։ Ընթերցողը կը տեսնի, որ միևնոյն առակը կրկնուած է մի

քանի անգամ, վերագրուելով զանազան առակախօսների. մենք չենք խուսափել այս կրկնութիւններից, որպէսզի ապագայում միջոց ունենանք որոշելու, թէ ո՞րն է առակի իսկական հեղինակը, կամ վարիանտներից ո՞րն է նախատիպը։

Առակների այս շարքը սկսում ենք Մոլլա-Նասր-էդ-դինին վերագրուած առակներով։ Ասացինք, որ մեր նպատակն է հայոց ժողովրդական առակներ հաւաքել, մինչդեռ սկսում ենք մի մոլլի առակներով։ Ճշմարիտ է, Մոլլան Թիւրք է, սակայն նրան վերագրուած առակների մեծագոյն մասը հայ ժողովրդի ստեղծագործութիւն է, նման այն բազմաթիւ թրքական երգերի, որ ասել են մեր հայ աշուղները կամ ժողովուրդը։ Մոլլա Նասր-էդ-դինի

առագին ժողովրդականութիւնը պատճառ է եղել, որ տեղական փոքրիկ առակախօսների, Հորոսների, Կիկոսների, Ծակ-Սահակների, Պըլը-Պուղինների և ուրիշ այսպիսիների առակները նրան են վերագրուել և այսպիսով Մոլլա Նասր-էդ-դինը կորցրել է իւր առանձնայատուկ տիպը. նա միաժամանակ ներկայանում է մեզ և՛ իբր յիմար՝ Հորոսի պէս, և իբր խելացի՝ Խիկար Իմաստունի պէս, և՛ իբր խորամանկ՝ Ծակ-Սահակի պէս, և իբր տխմար՝ Կաճեաի ծռերի պէս. այնպէս որ սա միաժամանակ է և՛ Կալինո, և՛ Տարտարէն, և՛ Գորզէկ, և Դոնքիշոտ, և՛ Սանչո-Պանչո, և՛ կոլոնել Ռամոլլո, և՛ Բարոն դը Մինշհաուզէն—մի խօսքով նրա մէջ մարմնացած են այն բոլոր տիպերը, որ զանազան տեղերի ժո-

ղովրդական հոգեբանութիւնը կամ հուսորը կամեցել է ստեղծել։ Իրենք թիւրք հրատարակիչները նրան միմիայն 145 առակ են վերագրում, մինչդեռ իմ այս պրակի մէջ կրկնապատիկն է գրի առնուած, և դեռ որքան կան որ անծանօթ են մնած, չհաշուած բաբառակները, որոնց թիւը հազարից անցնում է։

Մոլլա Նասր-էդ-դինը, թիւրքական աղբիւրների ասելով, ծնուել է ԺԴ դարում, Փոքր Ասիայի Անգորա գաւառի Աղ-Շէհիր քաղաքում, որ սելճուկ թուրքերի մայրաքաղաքն է եղել։ Այստեղ բանտարկուած էր հռչակաւոր սուլթան Բայազիտ III-ը, որ ստացել էր կայծակ մականունը։ Սա նուաճել էր Փոքր Ասիայի շատ քաղաքներ, տասն տարի անընդհատ պաշարել էր Կ. Պոլիսը և վերջը

Անգորայի մօտ կռուելով Լանկ-Թեմուրի հետ՝ գերի էր ընկել նրա ձեռքը 1402 թուին։ Այս դէպքերը տեղի էին ունեցել մոլլա Նասր-էդ-դինի օրով, այնպէս որ նա ժամանակցել է անցքերին և իւր առակների մէջ յիշում է Լանկ-Թեմուրին։

Մոլլի գերեզմանը, աւանդութեան ասելով, գտնուում է Աղ-Շէհիրում, երեք կողմից բաց է, իսկ չորրորդ կողմում մի դարպաս է ահագին կողպէքով։ Գերեզմանի վրայ մի մեծ քար է ձգած, որի վրայ, ասում են [1]), թէ գրուած է. «Այստեղ է Նասր-էդ-դին խոջան, աշխատիր չը-մտնել այստեղ, ապա թէ ոչ չես դուրս գալ։ Իմ առողջութեան, քէֆի և դրութեան մասին հար-

---

[1]) Кавказъ 1876.

ցրու այն քաջին, որ դուրս կը գայ այստեղից»։

Ոմանք էլ ասում են [2]), թէ այդ տապանագիրը այս է պատուիրում. «Անցորդ, մի ներս մտնիր և մի խանգարիր քաղցր մրափող խոջա Նասր-էդ-դինի հանգիստը»։

Մի աւանդութիւն էլ ասում է, իբր թէ մոլլա Նասր-էդ-դինը ապրել է Հարուն-ալ-Ռաշիդի ժամանակ և մի շատ իմաստուն մարդ է եղել։ Իւր իմաստուն խրատներով մի անգամ յանդիմանել է Հարուն-ալ-Ռաշիդին, որը, սակայն, հրամայել է այս յանդգնութեան համար գլխատել նրան։ Այս պատժից ազատուելու համար, մոլլան խելագար է ձևացել և դիտմամբ յիմար առակներ ասել։

---

[2]) Новое Обозрѣніе 1895.

Այժմ հայ ժողովրդի մէջ տիրում է այն նախապաշարմունքը, որ ով մոլլա Նասր-էդ-դինի մի առակն ասէ, անշուշտ եօթը լը-բացնելու է, իսկ եթէ եօթն ասի՝ եօթն անգամ եօթը՝ քառասուն և ինը լրացնելու է, ապա թէ ոչ անիծուած կը լինի։

Ներկայ պրակի մէջ ամփոփուած առակների մեծագոյն մասը ինքս գրի եմ առել ժողովրդից, առաւելապէս Բորչալուի գաւառում, միւս մասը թարգմանել եմ Աղ. Երիցեանի հաւաքածուից, որ տպուած է «Новое Обозрѣніе»-ի մէջ։ Մի քանի առակներ էլ թարգմանել եմ «Кавказскій Вѣстникъ»-ում տպուածներից։ Բացի սրանից 'ի նկատի եմ ունեցել հետևեալ աշխատութիւնները.—

«Бегичевъ. «Анекдоты Муллы Насръ Эддина», որը հայերէն էր

թարգմանել արժ. Նիկողոսեանը, որ տեսնելով իմ ժողովածուն, հրաժարուեց իւր թարգմանութիւնը հրատարակելուց և բարեկամաբար ինձ տուեց օգտուելու։ Շնորհակալութիւնս եմ յայտնում արժանապատիւ հօրը։

Լէթայիֆի հօճա Նասրէդդին. հայերէն տառերով թուրքերէն ընագիրը։

Les plaisanterie de Nasr Eddin Hodja, trad. par Decourdemanche. Paris, վերոյիշեալի թարգմանութիւնն է։

Ծաղրաբանութիւնք Նասրէդդին խօճայի. թարգմանեց 'ի գաղղիարէնէ Հ. Յ. Տ Զմիւռնիա 1858.

Сборникъ свѣдѣній о Кавказскихъ горцахъ, выд VII.

Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа. IX вып. ուր պ. Ա. Զա-

խարովը զետեղել է մոլլի տռակներից 64 հատ.

Ցոլա Ցանրա ոնոն ժոնՎրեՅոլո Նոգ-ՎՎեՅո. գաՀՑոտարգՑ ՑորաքՀ Ցոլ 1902 Վ. Ցոլա ՑանրաՀոնոն ՑոքՑոլ Ցա ՎՎեՀՑեՅոլո Ց. ՀեՅաՀՑելՀՑոՎոնաՀՑան 1901 Վ. վրացերէն այս երկու աշխատութիւնները ինձ մօտ կարդաց և թարգմանեց համեմատութեան համար պ. Տ. Փիրումեանը, որին շնորհակալութիւնս եմ յայտնում։

Անեկդոտներ Նազարեանի, Շահազիզի և Շիրմազանեանի։

Ներկայ ժողովածուն պ. Ա. Դիրրի հետ միասին թարգմանել ենք ֆրանսերէն։

ՄՈԼԼԱՆ ՍՐԱՄԻՏ

1

Մոլլա Նասր-էդ-դինի բնակած քաղաքի ամիրան շատ հեշտասէր էր և բոլոր ժամանակը հարեմումն էր անցկացնում։

Մոլլա Նասր-էդ-դինը մտածեց իր խրատներով յետ կանգնեցնել նրան այս ախտից։ Եւ ահա նա խօսակցելով ամիրայի հետ, սկսեց ապացուցանել, թէ որքան նրա վարմունքն անվայել է նրա բարձր դիրքին և որ նա ստորացնում է իրան իր հպատակների աչքում, թոյլ տալով որ կանայք իշխեն իր վրայ։

Մոլլի խօսքերն ազդեցին ամիրայի վրայ։ Նա հրաժարուեց հա-

բեմի բոլոր զուարճութիւններից և խօսք տուեց խուսափիլ կանանց ընկերութիւնից։

Մի գեղեցիկ աղախին, դէպի որն ամիրան մի առանձին սէր էր տածում, նկատելով, որ ամիրան սառել է իրենից, հարցրեց նրանից պատճառը։ Ամիրան իր պատասխան բացատրեց նրան, որ մոլլա Նասր-էդ-դինը միանգամայն համոզել է իրեն, որ կանանցից ձեռք քաշի։

Լսելով այս բացատրութիւնը՝ աղախինը խնդրեց ամիրային, որ իրեն մի կարճ ժամանակով ընծայէ մոլլին, և կը տեսնի, որ մոլլան բոլորովին կը փոխէ իւր հայեացքը կանանց վրայ։

Ամիրան զիջանելով աղախնի աղաչանքներին, նուիրեց նրան մոլլին։

Գեղեցկուհին շատ շուտով դիւ-

թեց իւր նոր տիրոջը և որքան աւելի մոլլա Նասր-էդ-դինը ծանօթանում էր նրա հետ, այնքան աւելի վառուում էր սիրով։ Եւ ահա մի օր նա ընկաւ նրա ոտները և բուռն կրքով գոչեց.

«Սիրում եմ քեզ, հոգուս ծաղիկը, և պատրաստ եմ ամէն զոհաբերութեան, միայն թէ դու իմ լինիս»։

—Ես համաձայն եմ քոնը լինելու, պատասխանեց գեղեցկուհին, բայց որպէսզի համոզուիմ, որ դու ճիշդն ես ասում, թոյլ տուր թամբեմ քեզ և մէջքիդ նստած մի քիչ զբօսնիմ։

Մեր մոլլան ցնծում է. նա շատ աւելի ծանր բան էր սպասում և պատրաստ էր նոյնիսկ մահի, ուստի և ուրախութեամբ անձնատուր եղաւ իր քմահաճ աղախնոյն։

Այդ ժամանակ գեղեցկուհին ծածուկ մարդ ուղարկեց ամիրային և խնդրեց իսկոյն գալ մոլլի մօտ։ Ամիրան եկաւ և մտաւ սենեակն այն ժամանակ, երբ գեղեցիկ աղախինը արդէն նստած էր թամբած մոլլի վրայ և սա այս ու այն կողմն էր արշաւում։ Ամիրան, որին արդէն ճանաչացրել էր վանական կեանքը, յարձակուեց մոլլի վրայ և սկսեց նախատել։

—Է՛յ, դու, անամօթ մեղապարտ, այդ ի՞նչպէս հեշտութեամբ ենթարկուեցար կնոջը։ Եւ դու, անպիտան, համարձակւում ես նախատել ինձ և խորհուրդ տալ անել այն, ինչ ինքդ էլ չես անում։

«Այդ ճիշդ է, տէր իմ, պատասխանեց հնարագէտ մոլլան, բայց եթէ լաւ ըմբռնես ասածներս՝ կը

տեսնես՝ որ ճշմարտութիւնը դարձեալ իմ կողմն է. ես մի՞թէ ճիշդ չէի ասում, որ պէտք չէ մօտենալ կանանց։ Եւ դու փոխանակ նախատելու ինձ՝ պէտք է գոհանաս Ալլահից, որ ոչ թէ դու, այլ ես եմ թամբուել այս կնոջից, որպէս մի իսկական էշ»։

2

Մոլլա Նասր-էդ-դինը ձիթապտղի իւղ էր ծախում։ Նրա մօտ եկաւ մի գնորդ և ասաց.

—Ինձ պարտքով մի քիչ իւղ չե՞ս տալ։

«Ինչո՞ւ չէ, քեզ պէս յարգելի մարդուն ես երբէք չեմ մերժիլ»։ Եւ գովելով իւր իւղը, առաջարկեց համը տեսնել։

—Չէ՛, չեմ կարող, պատասխանեց գնորդը, ես այսօր օրօջ եմ բռնել Ռամազանի օրօջի փո-

12437-58
Հայ. ՍՍՀ Գոս. Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР

խարէն, որ չեմ կարողացել բռնել։

Մոլլան մի քիչ մտածեց և հաշուեց, որ Ռամազանից անցել է ամբողջ տասն ամիս, ուստի յետ քաշելով իւր իւղը՝ վռնտեց գնողին, ասելով.

—Եթէ դու Աստծու պարտքդ այդպէս ուշ ես վճարում, իմը ե՞րբ պիտի վճարես։

+ 3

Մի անգամ մոլլի գիւղը մի դերվիշ է գալիս և սկսում երկընքի կազմութեան, աստղերի, Աստծու մասին պատմել։ Գիւղացիները կանչում են մոլլին, որ նրա հետ վիճէ։ Մոլլան գալիս է, նստում դէվրիշի առաջ և պատրաստւում վիճելու։

Բայց նախ քան վիճելը, ասում է մոլլան, պէտք է մի բան խմել, կամ ուտել, որպէսզի աշխուժի

դանք։ Եւ որովհետև խմիչքն արգելուած է՝ մի ափսէ մածուն է բերել տալիս, և երկուսն էլ սկըսում են ուտել։ Երբ լաւ բրդում են և խառնում, սկսում են ուտել։ Մոլլան ասում է դէվրիշին. «Քու բրդածը կեր»։

—Ես ինչպէս իմ բրդածս ջոկեմ, պատասխանում է դէվրիշը։

«Դէհ որ քո առաջդ դրուած մածունի մէջ քու բրդածդ չես կարողանում ջոկել, յանդիմանում է մոլլան, էլ ինչպէս ես ջոկում երկնքի եօթը յարկի մէջ եղածները»։

4

Մոլլա Նասր-էդ-դինը մի ձմերուկ է առնում, նստում մի ծառի տակ՝ ուտում։ Չկշտանալով վերցնում է կեղևները և սկսում կուծել, ասելով, թէ թող ապեն,

թէ մոլլա Նասր-էդ-դինը ծառայ էլ է ունեցել։ Բայց էլի չկշտանալով սկսում է կեղևներն էլ ուտել, ասելով, թող ասեն, թէ մոլլա Նասր-էդ-դինը էշ էլ է ունեցել։ Յետոյ էլ կոնքերն է սկսում ուտել, ասելով, թէ թող ասեն՝ որ մոլլա Նասր-էդ-դինը հաւ էլ է ունեցել։

5

Մոլլա Նասր-էդ-դինն իր ծամոնը ծամելուց յետոյ քթին էր կպցնում։ Նրան հարցրին, թէ ինչի՞ է այդպէս անում, նա ասաց.

—Ամեն մարդ իւր ունեցածն իւր աչքի առաջ պէտք է ունենայ։

6

Մոլլի մօտ մի դէրվիշ եկաւ և սկսեց նրան շատ հաճոյախօսու-

թիւններ անել։ Մոլլին այս շատ դուր եկաւ, ուստի և ասաց.

—Վաղը եկ ինձ մօտ, ես քեզ տասը լիրա կընծայեմ։

Դէրվիշն ուրախացած միւս օրը վաղ գնած մոլլի մօտ։

—Ի՞նչ ես ուզում, հարցրեց մոլլան։

—Եկել եմ խոստացածդ տասը լիրան ստանալու, պատասխանեց դէրվիշը։

—Իսկ ինչի՞ ես խոստացայ։

—Որովհետև ես քեզ հաճոյք պատճառեցի իմ զրոյցով։

—Շատ լաւ, դու ինձ հաճոյք պատճառեցիր քո զրոյցով, ես էլ քեզ հաճոյք պատճառեցի իմ խոստումով—մեկը միւսին դուս։

7

Մոլլա Նասր-էդ-դինի բնակած քաղաքի ամիրան սիրում էր բա-

նաստեղծութիւնը և ինքն էլ ոտանաւորներ էր գրում։ Մի անգամ նա մի ոտանաւոր գրեց, հրաւիրեց մոլլին, կարդաց նրա մօտ և սպասում էր գովասանքի։ Բայց հակառակ նրա սպասածի՝ մոլլան չգովեց նրա ոտանաւորը և սկսեց ցոյց տալ թերութիւնները։ Այն ժամանակ ամիրան բարկացաւ և հրամայեց բանտարկել մոլլին։

Անցաւ մի առժամանակ, ամիրան կրկին կանչեց իւր մօտ մոլլին և կարդաց մի նոր ոտանաւոր։ Մոլլան ոչ մի կարծիք չըյայտնեց և ուղղուեց դէպի դուռը։

—Ո՞ւր ես գնում, գոչեց ամիրան, յայտնիր կարծիքդ ոտանաւորիս մասին։

—Ես արդէն բանտ եմ գնում, պատասխանեց մոլլան։

Այս պատասխանը շատ սուր

թուաց ամիրային և նա այս անգամ ազատեց իւր լուռ քննադատին բանտից։

8

Մի անգամ Նասր-էդ-դինը Լանկթեմուրին մի տապակած սագ ընծայ տարաւ, բայց ճանապարհին այնպէս քաղցեց, որ էլ չկարողացաւ համբերել և սագի մի ոտը կերաւ։ Լանկթեմուրը հէնց որ նայեց սագին, իսկոյն տեսաւ, որ մի ոտը չկայ։

—Ո՞ւր է միւս ոտը, հարցրեց մոլլին, դու երևի կամեցել ես ինձ ծաղրել։

«Աստուած չանէ, մի՞թէ չգիտես, տէր, որ այս կողմերում բոլոր սագերը մի-մի ոտ ունին. ահա. ինքդ նայիր», ասաց Նասր-էդ-դինը ցոյց տալով ժոտակայ ճահիճը, ուր կանգնած էին մի

քանի սագեր մի-մի ոտի վրայ, միւսը փորի տակը քաշած։

—Ես կը խփեմ նրանց գաւազանով և դու կը տեսնես, որ ամենքն էլ երկ-երկու ոտ ունին։

Լանկթեմուրը ձգեց գաւազանը և սագերը փախան երկու ոտներով։

«Այդ դեռ ոչինչ չի ապացուցանում—վրայ բերեց մոլլան,—գաւազանով քեզ էլ կարելի է չորքոտանի դարձնել։

9

Մոլլան տանը նստած ճաշում էր. ներս մտաւ հարևանը։

—Ինչ նորութիւն կայ, հարցնում է մոլլան։

—Էշս ցկնեց, ասաց հարևանը, բայց սփան պոչ չունի։

Մոլլան շատ տխրեց և սկսեց խոր մտածել։

«Ի՞նչ պատահեց քեզ, մոլլա, ինչո՞ւ տխրեցիր, քեզ ինչ, որ հարևանիդ սփան պոչ չունի», ասաց կինը.

—Ախ, դու կարճամիտ կին, ախր չէ՞ որ սփան կը մեծանայ, նրան կը բարձեն, նա ցեխի մէջ կընկնի. և հարևանս ինձ օգնութեան կը կանչէ և քանի որ էշը պոչ չի ունենալ՝ «արի և էշը ցեխիցը հանի», պատասխանեց մոլլան [1]։

10

Մոլլան կամենալով տեսութիւն գնալ իրենց երկրի խանին, երեք մեծ դեղձ գնեց, դրեց սինու մէջ և գլխի վրայ դրած ուղևորուեց դէպի խանը։ Ճանապարհին դեղ-

---

1) Սրանից առաջացել է՝ «արի ու էշը ցեխիցը հանի» ասացուածքը։

ձերն սկսեցին օրօրուել. մոլլան կանգնեց և այս ճառն ուղղեց դեղձերին.

—Եթէ չհանգստանաք՝ ձեզ սաստիկ կը պատժեմ։ Յետոյ, մի քանի քայլ անելով տեսաւ, որ դեղձերը չեն խմբուում և շարունակում են գլորուել սինու մէջ։ Ենթադրելով, որ երեք դեղձերի մէջ հին գերդաստանական թշնամութիւն կայ՝ մոլլան կամեցաւ վերջ դնել այս խռովութեան ու կերաւ երկուսը և միայն մինը՝ ահագին սինու մէջ ներկայացրեց խանին։

Խանը իմանալով մոլլայից այդպիսի մի տարօրինակ ընծայի պատճառը՝ շատ ծիծաղեց և մոլլին մի լաւ խալաթ տուեց։

11

Մի անգամ մոլլա Նասր-էդ-

դինը կամեցաւ Լանկթեմուրին ընծայ տանել։

—Տանը լաւ-լաւ սերկևիլներ ունենք, ասաց կինը, մի հարիւր հատ ջոկենք տար, դրանից էլ լաւ ընծայ։

Մոլլա Նասր-էդ-դինը նրա ասածի հակառակն արաւ. հարիւր հատ թուզ քաղեց ծառից, դրեց ափսէի մէջ և տարաւ ներկայացրեց խանին։ Սա սաստիկ բարկացաւ մոլլի վրայ, որ այդպիսի չնչին ընծայ է բերել և հրամայեց ծառաներին, որ վերցնեն թզերը և մէկ-մէկ երեսին տան։ Ծառաներն սկսեցին կատարել խանի հրամանը և թզերը տեղացին մոլլի գլխին, իսկ սա ուրախանում էր և փառք տալիս Աստծուն։ Խանը զարմացած հարցրեց, թէ ինչի՞ է ուրախանում։

«Մեծ թագաւոր, ասաց մոլլան,

երբ ես ուզում էի քեզ ընծայ բերել, կինս ասաց, որ մեծ-մեծ սերկևիլներ բերեմ, դու գիտես, որ կնոջ քառասուն խօսքից մինը պիտի կատարել և ես այժմ ուրախանում ու փառք եմ տալիս Աստծուն, որ այդ խօսքը երեսուն և իններորդն էր, ապա թէ ոչ՝ հիմա գլուխս ջարդ ու փշուր էր եղել»։

12

Մի անգամ մոլլա Նասր-էդդինը նստաւ իւր կնոջ հետ ճաշելու. կինը արգանակը բերեց առանց հովացնելու և շտապ ուտելով՝ բերանը վառեց։

—Ի՞նչ եղաւ, հարցրեց մոլլան։

—Ոչինչ, տէր իմ։

—Ինչու այդպէս կարմրեցիր և արցունքով լցուեցար, գուցէ բերանդ վառեցիր տաք արգանակով։

«Ոչ, արգանակը բոլորովին տաք չէ, պատասխանեց կինը, կամենալով հանաք անել մոլլի հետ. ես մտաբերեցի, որ հանգուցեալ մայրս շատ էր սիրում այս արգանակը, ուստի և սիրտս լցուեց»։

Մոլլան գդալը վերցրեց և բերանը վառեց։

«Բեզ ի՞նչ եղաւ, դու էլ բոլորովին կարմրեցիր և արտասուում ես»։

—Ես էլ տխրեցի, թէ ինչու անպիտան մայրդ մեռնելով քեզ էլ հետը չտարաւ։

13

Մոլլայի Աղ-Շէհիրում եղած միջոցին մի քանի երիտասարդներ խօսք կապեցին, որ նրա հաշուով քէֆ անեն, ուստի և նրան բաղնիս տարան։ Նրանցից ամեն մէկը մոլլից ծածուկ մի-մի

ձու էր վերցրել։ Լողանալիս երի-
տասարդներից մին առաջարկեց,
որ բաղնիսի փողը նա վճարէ,
ով չի կարողանայ մի ձու ածել։
Բոլորը համաձայնեցան և Թուխս
նստելով սկսեցին կոկոալ և մի-
մի ձու ածել։ Այս տեսնելով մոլ-
լան Թռաւ Թախտի վրայ և ըս-
կըսեց կուկուլիկու կանչել։

—Ի՞նչ ես անում, մոլլա, հարց-
ին երիտասարդները։

«Այսքան հաւերին անհրաժեշտ
է գոնէ մի աքաղաղ, պատասխա-
նեց մոլլան։

14

Մոլլան տուն գնալիս մի դէվ-
ըիշի պատահեց և հրաւիրեց իւր
մօտ փլաւ ուտելու։ Դէվրիշը հա-
մաձայնեց և միասին գնացին
տուն։ Մոլլան նրան թողեց սե-

նեակում, իսկ ինքը շտապեց կնոջ
մօտ և խնդրեց փլաւ եփել։

—Ի՞նչ փլաւ, գոչեց կինը, քանի
որ ոչ իւղ, ոչ բրինձ ունինք։

Շշկլուած մոլլան վերցրեց դա-
տարկ կաթսան և վերադառնալով
դէվրիշի մօտ, ասաց.

—Ինքը Ալլահը վկայ է, որ ես
կ'եփէի այս կաթսայի մէջ փլաւ
և քեզ կը հիւրասիրէի, եթէ իւղ
ու բրինձ ունենայի։

15

Մի գիշեր մոլլա Նասր-էդ-դինը
սաստիկ ցանկացաւ մի բան ու-
տել, բայց բացի չոր հացից՝ ու-
տելու ոչինչ չկար։

—Ա՛յ կնիկ, ասաց մոլլան, մի
կտոր պանիր բեր, այդ գեղեցիկ
և շատ օգտաւէտ ուտեստը մար-
դուն ոյժ և եռանդ է տալիս։

«Ափսոս որ մի կտոր պանիր էլ

չունինք», պատասխանեց կինը։

Լսելով կնոջ խօսքերը, մոլլան ասաց.

—Լաւ է, որ չունինք պանիր, դա խանգարում է ստամոքսը, թուլացնում ատամները և բոլորովին համ էլ չունի։

—Ո՞րին հաւատամ հիմա՝ դովասանքի՞դ, թէ պարսաւանքիդ, բացականչեց կինը։

«Մի բղաւիր, այ կին, դա շատ պարզ է, եթէ ունիս պանիր, հաւատա առաջնին, իսկ եթէ չունիս՝ երկրորդին», պատասխանեց մոլլան։

16

Մոլլան առաջին կնոջ մահից յետոյ մի ուրիշն առաւ, որ հարսանիքից երեք ամիս յետոյ որդի ծնաւ։ Ազգական կանայք հաւաքուեցան նորածնին անուն դնելու։ Իւրաքանչիւրը մի անուն էր առաջարկում, բայց մոլլան ընդհատեց բոլորին ասելով.

—Այս երեխայի անունը ես պէտք է դնեմ.—Նրա անունը կլինի Հասիդ։

«Ի՞նչի ես այդ անունը դնում նրան», հարցրին ազգականները հետաքրքրուելով։

—Նա ինն ամսուայ ճանապարհը երեք ամսուայ է անցել, ուստի և լիովին արժանի է Հասիդ [1]) կոչման, տրամաբանեց մոլլան։

17

Մոլլա Նասր-էդ-դինը թառ էր ածում և շարունակ միևնոյն տեղն էր բռնած։ Կինը հարցնում է, թէ ուրիշները ածելիս ձեռը վեր ու վար են տանում, ինչպէս է, որ

[1]) Հասիդ նշանակում է քաջընթացիկ։

դու շարունակ միևնոյն տեղն ես բռնում։

—Ուրիշները տեղը չեն գըտնում, որոնում են, բացատրում է մոլլան, իսկ ես իսկոյն գտնում եմ։

18

Մինը մոլլա Նասր-էդ-դինից էշը ուզում է, ջրաղաց գնալու։

«Հայ վա՛խ, ասում է մոլլան, քիչ առաջ դաշտը ուղարկեցի»։

Այս ժամանակ էշը ախոռում զռում է։

—Հապա ասում ես տանը չէ, ասում է խնդրողը։

—Իշուն աշէ, իշուն, պատասխանում է մոլլան, սպիտակ միրուքաւորիս չի հաւատում, իշին է հաւատում։

19

Մոլլա Նասր-էդ-դինի մօտ երկու գանգատաւորներ եկան և խնդրեցին, որ իրանց գործը ճըշմարիտ օրէնքով վճռի։

Մեղադրողն սկսեց.

«Ախը, մոլլա ջան, էս Աստուած կընդունի՞, որ ես արիւն-քրտինք թափեմ, այդի տնկեմ, սրա էշը գայ մտնի,—փչացնի. բա սրան մի դատաստան չկա՞»։

—Միրուքս վկայ, որ թամամ հախ գանգատ է, պատասխանեց մոլլան, դու դրուստ ես ասում։

—Դէ, իշու տէրը ինչ գլուխը քարը տայ, մոլլա ջան, արդարացամեղադրուածը, չափառը պատրուած, ինքն անլեզու հայվան, բաղումն էլ կանանչ խոտ, նա չըլինի՞ դու լինիս, չե՞ս մտնի ուտի։

—Հախ Աստծու, դու էլ ես դրուստ ասում, կուտեմ, կուտեմ, գլուխը տմտմացրեց մոլլան։

—Ախը այդ ինչպէ՞ս կը լինի, այ

մարդ, մէջ մտաւ կինը, դանդաւաւորներից կամ մինը կամ միւսը կըլինի արդար, դու երկուսին էլ արդարացնում ես, այդպէս դատաստան կանեն։

—Ես ու իմ Աստուած, ա կնիկ, դու էլ ես դրուստ ասում, վերջնական վճիռը տուեց մոլլէն։

20

Մոլլան կարդացողներից իմացաւ, որ բամպանին պէտք է սկսեն օրօջ պահել այն օրից՝ երբ լուսինը կըտեսնեն. ուստի վճռեց երկինք չընայել, մինչև որ բամպանն անցնի։ Բայց մի անգամ, երբ կռացաւ գետի վրայ ջուր խմելու՝ տեսաւ լուսինը նրա մէջ ցոլացած և բարկանալով ասաց.

«Դէհ լաւ, մի ցցուիր աչքերուս. վաղուանից կսկսեմ օրօջ պահել»։

—

21

—Մոլլա, փլաւ են տանում։

«Ինձ ինչ»։

—Քեզ են տանում։

«Քեզ ինչ»։

22

Մոլլան մինի մօտ հովիւ մտաւ։ Մի երկու ամսից նա եկաւ հօտի տիրօջ մօտ մի կճուճ մածուն առած։

—Ի՞նչ դրութեան մէջ է հօտը, հարցնում է տէրը։

«Հարիւր գլուխ ոչխարից 15-ը գնտում խեղդուեց, 20-ը ժայռից գլորուեց հաշմացաւ, 10-ը գողացան, 25-ը գայլերը կերան, ճնացած 30-ը շատ լաւ են»։

Զայրացած տէրը վերցրեց մածընի պուտուկը և խփեց մոլլի գլխին։

—Փառք քեզ Աստուած, ասաց մոլլան, որ տիրոջս առաջ ճերմակ երես դուրս եկայ։

23

Մոլլան ընթրեց և պատրաստուում էր քնելու, երբ նրա մօտ մի ճանապարհորդ եկաւ։ Մոլլին այս դիւր չեկաւ, բայց քաղաքավարութեան համար սկսեց հետը խօսել։ Երբ խօսակցութիւնը շատ երկարեց, հիւրը կամեցաւ հասկացնել մոլլին, թէ ընթրելու ժամանակ է, ուստի և ասաց.

—Երբ ընթրենք, ո՞րտեղ պիտի քնենք։

«Մենք արդէն ընթրել ենք, իսկ դու պառկիր ուր որ ուզում ես, պատասխանեց մոլլան»։

—

24

Մոլլան հիւանդացաւ և ախորժակը կորցրեց։

—Ուզիր, ինչ որ սիրտդ ուզում է և մենք քեզ համար կըճարենք, ասում էին նրան շրջապատողները։

—Դէհ ուրեմն ճարէք ինձ համար հաւի կաթից շինած պանիր, պատասխանեց վերջապէս մոլլան։

25

Մոլլի մօտ մի կին եկաւ և ասաց.

—Մոլլա, մարդս խոստացաւ ինձ բայրամին մի զոյգ քօշեր առնել։ Ե՞րբ կըլինի բայրամը։

«Քեզ համար բայրամ կըլինի, երբ ամուսինդ առնէ քօշերդ», պատասխանեց մոլլան։

26

Մոլլան աւագ որդուն կանգնեցրել էր իւր առաջը և խրատներ էր կարդում։ Եւ երբ նա վեր ջացրեց, որդին ասաց.

—Հայրիկ, քո խօսած ժամանակը ընդամենը 75 ճանճ անցաւ մեր մօտից, ես բոլորն էլ համարեցի։

«Ապրիս, դրա համար այդպէս ուշադրութեամբ էիր լսում ինձ» քաջալերեց մոլլան։

27

Մի անգամ Լանկ-Թեմուրը կանչեց իր մօտ մոլլա Նասր-էդ-դինին և ասաց նրան, թէ մի ուրիշ մոլլա չարախօսել է նրա մասին, իբր թէ նա չափազանց անբարոյական մարդ է։ Սակայն ծածուկ կատարուած քննութիւնն այդ չէր հաստատել։

Այս պատճառով էլ Լանկ-Թեմուրն առաջարկում է մոլլին նրա հետ վարուիլ, ինչպէս իրեն հաճոյ է։

—Կուզես, հէնց կենդանի թաղիր գետնում, ասաց Լանկ-Թեմուրը։

—Բան չունիս, պատասխանեց մոլլան, ես Մովսէսը չեմ, ոչ էլ նա Կարանը, [1]) թող ապրի իրեն համար։

28

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինի խելքին փչեց մարգարէանալ, ուստի և բարձրանալով ահագին

[1]) Աւանդութեան ասելով Կարանը Մովսէսի ազգականն էր, որ զրպարտեց նրան ժողովրդի առաջ և Մովսէսի հրամանով երկիրը նրան կենդանի կուլ տուեց։

ամբոխի մէջ՝ սկսեց քարոզել, ապաշխարութեան կոչել։

Բայց ոչ ոք չհաւատաց նրա մարգարէական կոչումին, և նոյն իսկ մի քանիսը հանաքով պահանջեցին, որ մի որևէ հրաշքով ցոյց տայ, թէ ինքը ուղարկուած է։

—Ի՞նչով կապացուցանես, ասում էին նրանք, որ դու մարգարէ ես։ Կարո՞ղ ես արդեօք ճըշմարիտ մարգարէների պէս մի հրաշք գործել. ցոյց տուր քո մարգարէական շնորհքը. և գոնէ գուշակիր, թէ ամէն մէկս այժմ ինչ ենք մտածում, ասաց նրանցից մինը։

—Այժմ, պատասխանեց մոլլան, ամէն մէկդ մտածում էք.—«Մոլլան կամ կատակ է անում և կամ խափում է մեզ»։

—

29

Մինը մոլլա Նասր-էդ-դինին ճաշի հրաւիրեց, խոստանալով լաւ թզով հիւրասիրել նրան։ Ճաշը վերջացաւ, բայց տանտիկինը մոռացաւ առաջ բերել թուզը։

Մի քիչ յետոյ տանտէրը խընդրեց մոլլին Ղուրանից մի կտոր կարդալ։ Մոլլան առթից օգտուեց և կարդաց այն գլուխը, որտեղ խօսւում է թզերի մասին, բայց կարդալիս դիտմամբ բաց թողեց «թուզ» խօսքը։ Տանտէրն իսկոյն կանգնեցրեց նրան.

Ի՞նչու բաց թողիր «թուզ» խօսքը։

—Որովհետև առաջ դու և քո կինը մոռացաք թզերը և զրկեցիք ինձ թզից, ես էլ հետևեցի ձեր օրինակին։

—

30

Մոլլա Նասր-էդ-դինի էշը կորել էր։ Մոլլան երկար որոնելուց յետոյ սաստիկ բարկացաւ և երդուեց՝ գտնելիս մի զուրուշի ծախել։ Բայց երբ գտաւ, ավելորդաց այդպէս արժան ծախելու. միևնոյն ժամանակ վախենում էր երդումը չկատարել։ Որպէսզի դժուարութիւններից դուրս գայ, նա կապեց միևնոյն թոկը իւր իշի և մի կատուի վզից ու տարաւ վաճառելոց։

—Խոստումս կատարում եմ, պարոններ, ծախում եմ էշս, ո՞վ է ուզում գնել, էշս մի զուրուշի, կատուս՝ հարիւր. միայն երկուսն էլ միասին։

31

Եկան ասացին մոլլին, թէ որ-

դիդ խելքը կորցրեց։ Մոլլան բռնեց միրուքը և սկսեց երկար մտածել։

—Ինչի՞ մասին ես մտածում, հարցրին բարեկամները։

—Որդի՛ս երբէք խելք չէ ունեցել, էլ ինչպէս է կարողացել կորցնել, չեմ կարողանում հասկանալ, պատասխանեց մոլլան։

32

Երբ Նասր-էդ-դինը ցանկացաւ մոլլա դառնալ և ծուխ ունենալ, նրան հարցրին, թէ ինչի՞ է այդ կամենում։

—Պապս կտակել է, որ ծոյլ և ձրիակերը լինիմ, պատասխանեց նա։

33

Մոլլի էշը մեծ ճանապարհի վրայ սատկեց, մոլլան նստեց կողքին և սկսեց լաց լինել։

—Մի լաց լինիր, Աստուած քեզ աւելի լաւ էշ կըտայ, ասաց նրան մի անցորդ։

—Շնորհակալ եմ, եղբայր, պատասխանեց մոլլան, քեզանից լաւ գիտեմ իմ Աստծու բնաւորութիւնը, նա 15 ռուբլուց պակաս երբէք չի տալ աւելի լաւ էշ։

34

Մոլլի հարևանը գալիս է նրա մօտ և ասում.

—Ես կամենում եմ պատժել քեզ իմ սրտի վիշտը, կարող եմ յուսալ, որ իբր խորին գաղտնիք կը պահես։

—Այդ մի յուսար, որովհետև ես սիրում եմ մինչև անգամ կնոջս գաղտնիքները ուրիշներին պատմել, պատասխանում է մոլլան։

—

35

Մոլլի կինը փլաւ էր եփում և այս պատճառով ոչ մոլլան, ոչ էլ նրա որդին, սպասելով դրա պատրաստուելուն, չէին կամենում գընալ դաշտ անասուններին արածացնելու։

Վերջապէս մոլլան համոզեցուցիչ կերպով ասաց որդուն, թէ անասուններն առանց պահապանի են մնացել դաշտում, կամ դու գնա նրանց արածացնելու և ես մնամ փլաւն ուտելու, կամ ես կըմնամ փլաւն ուտելու, դու գնա անասուններն արածացնելու։

36

Երեք երիտասարդներ մոլլի վերայ ծիծաղելով առաջարկեցին գուշեմարտել։ «Դուք խոխէք էք, ասաց մոլլան, ես ձեզ հետ չեմ

զօտեմարտիլ, իսկ եթէ կուզէք փորձել իմ ոյժը, բարձրացէք այդ ծառը, ես ոտով խփեմ ծառին և երեքդ էլ վայր ընկնիք»։ Երիտասարդներն իսկոյն բարձրացան, իսկ մոլլան պառկեց ծառի տակ և պատրաստուեց քնելու։

Ի՞նչ ես անում, մոլլա, դէ խըփիր, որ վայր գլորուինք։

—Մինչև միւս տարի ես այդ ծառին չեմ դիպչելու, հանգիստ կացէք տեղերդ, պատասխանեց մոլլան։

37

Նասր-էդ-դին մոլլան ծանր հիւանդ էր, ազգականներն և բարեկամներն եկան տեսնելու և այնքան երկար նստեցին մօտը, որ սաստիկ ձանձրացրին։ Կամենալով ազատուել այս այցելուներից, մոլլան վեր կացաւ տեղից և ասաց.

—Ուրախացէք, Աստուած զթաց ձեր հիւանդի վրայ, և նա առողջացաւ. այժմ կարող էք գնալ։

38

Փաշի որդին շարունակ ծաղրում էր մոլլին։

Յիմար մի լինիր հօրդ պէս, խելացի եղիր, ասաց նրան համբերութիւնից ելած մոլլան։

Փաշան նրանից բացատրութիւն պահանջեց։

—Ես քու որդուդ լաւ խրատ տուի. ես նրան ասացի. յիմար մի լինիր, հօրդ պէս խելացի եղիր, ասաց մոլլան և խալաթ ստացաւ։

39

Էշն առաջն արած մոլլան գիւղ էր գնում։

Նրան մի ծանօթ պատահեց և խնդրեց, որ ասի տանուտէրին

շատ շուտով իր մօտ գայ, մի շատ հարկաւոր և շտապողական գործի համար։

—Եթէ այդքան շտապողական է, պատասխանեց մոլլան, իշխս յանձնարարիր. նա իմ առաջից է գնում և ինձանից առաջ կըլինի գիւղում։

40

Մի անգամ մի քանի հարևաններ կամեցան ծիծաղել մոլլա Նասր-էդ-դինի վրայ, նրան ծառը հանել և քոշերը գողանալ։ Նրանք ընտրեցին մի մեծ ծառ. կանչեցին մոլլին և սկսեցին վիճել թէ նըրանցից ո՞րը կարող է ծառն ելնել։

—Ես կարող եմ, ասաց մոլլան և իսկոյն փեշերը հաւաքեց, քոշերը մէջքին խփեց և բարձրացաւ ծառը։

—Քոշերն ի՞նչի ես հետդ առ-

նում, հարցրին նրան հարևանները։

—Գուցէ ծառի վրայից ճանապարհ լինի դէպի վերև, պատասխանեց մոլլան, այն ժամանակ կերթամ այդ ճանապարհով և այդ դէպքում քոշերը ինձ անհրաժեշտ կըլինին։

41

Մի գիշեր գողերը մտան մոլլի տունը։

—Վեր կաց, մոլլա, ասաց կինը, գող է մտել։

—Սուս կաց, այ կին, գուցէ վըրայից բան վայր ցկէ, թէ չէ ոչինչ չըկայ, որ վերցնի, պատասխանեց մոլլան [1]։

---

[1] Այս առակից յառաջացել է «վրայից բան վար ցկէ» ասացուածքը, որով ակնարկում են, թէ գուցէ բան գողանայ։

42

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դի-նին հարցրին.

—Մոլլա, քո կարծիքով ո՞վ է ամենից յիմար։

—Նա՝ ով մարդկանց երեսին կասի ճշմարտութիւնը, պատասխանեց մոլլան։

43

Մոլլա Նասր-էդ-դինի կինը շատ սիրում էր դրկիցների տունը մանգալ։ Դրկիցները սաստիկ ճանճրանալով նրա յաճախակի այցելութիւններից, եկան մոլլի մօտ և գանգատուեցան։ Մոլլան ծիծաղելով ասաց նրանց.

—Զարմանալի մարդիկ էք, մի՞թէ ես երբևիցէ կարող եմ գտնել նրան տանս մէջ, որ այդ մասին խօսիմ և պատժեմ։

44

Մոլլան ներկարարի խանութ էր բաց արել։ Մի օր գալիս է մինը և ասում. «Մոլլա, տա՛ այս կտորը և ներկիր այն գոյնով, որ չլինի ոչ սև, ոչ կանանչ, ոչ կապոյտ, ոչ դեղին, ոչ մոխրագոյն, մի խօսքով ոչ մի յայտնի գոյնի»։

—Շատ լաւ, պատասխանում է մոլլան։

—Ե՞րբ գամ։

—Արի այնպիսի օր, որ չլինի ոչ երկուշաբթի, ոչ երեքշաբթի, ոչ չորեքշաբթի, ոչ հինգշաբթի, մի խօսքով շաբաթուայ ոչ մի օրը։

45

Սափրիչը քոռ ածելիով սափրում էր մոլլի գլուխը։

—Ի՞նչ մետաղից է շինուած քո ածելին, հարցրեց մոլլան։

—Պողպատից, պատասխանեց սափրիչը։

—Դրա համար աչքերիցս կայծեր է ցայտում, եզրափակեց մոլլան։

46

Մոլլա Նասր-էդ-դինի ժամանակ մի իմաստուն կար, որի հետ ոչ ոք չէր կարողանում վիճել և որի համար ոչ մի դժուարին, անլուծելի խնդիր գոյութիւն չունէր։

Մի անգամ այս իմաստունը եկաւ այն քաղաքը, ուր ապրում էր մեր մոլլա Նասր-էդ-դինը։ Սա այստեղ հարց ու փորձ արաւ, թէ չկա՞յ մի իմաստուն, որ կարողանար լուծել իրեն զբաղեցնող խնդիրներից գոնէ մի քանիսը։ Բոլորն էլ ցոյց տուին մոլլա Նասր-էդ-դինին։ Իմաստունը գընաց նրան որոնելու, և պատահեց

մոլլին՝ մի մեծ իշի վրայ նստած։

—Սալամ ալեքում, ասաց իմաստունը։

—Ալեքում սալամ, պատասխանեց մոլլան։

—Քեզ մի խնդիր ունիմ, առաջարկեց իմաստունը։

—Շնորհ արա, ասա, պատասխանեց մոլլան։

—Ես կամենում եմ քեզ մի քանի հարցեր առաջարկել, որոնց ես դժուարանում եմ լուծել։

—Առաջարկիր, հետևեց մոլլի պատասխանը։

—Ո՞ւր է գտնւում երկրիս կենդրոնը։

—Երկրիս կենդրոնը իշիս կանգնած տեղն է, եթէ չես հաւատում՝ չափիր տես, պատասխանեց մոլլան։

Մոլլի պատասխանից ապշած՝ իմաստունը մի նոր հարց տուեց։

—Քո կարծիքով քանի՞ աստղ կայ երկնքում։

—Ուղիղ այնքան, որքան մաղ կայ իմ իշխս վրայ, եթէ կասկածում ես՝ հաշուիր, տես, պատասխանեց մեր մոլլան։

Երկրորդ պատասխանն աւելի նեղը ձգեց իմաստունին։

—Իսկ դու գիտե՞ս, թէ միրուքիս մէջ քանի՞ մաղ կայ, հարցրեց նա մոլլին։

—Միրուքիդ մէջ ուղիղ այնքան մաղ կայ, որքան իշխս պոչի վրայ, կարող ես ստուգել, եթէ կամենաս։

Երրորդ հարցի պատասխանը բոլորովին ապշեցրեց իմաստունին և նա իրեն յաղթուած համարելով, շտապեց հեռանալ, հաղիւ մնաս բարով ասելով։

—

47

Մի անգամ մոլլան շորեր է գողանում և բերում տուն։

Տար ծախիր և ինձ համար քոշեր գնիր, ասում է կինը։

Մոլլան տանում է, բայց այստեղ էլ նրանից են գողանում և նա ձեռնունայն վերադառնում է տուն։

—Քանիսի՞ ծախեցիր, հարցնում է կինը։

—Քանիսի որ գնեցի, պատասխանում է մոլլան։

48

Մի անգամ մոլլան հաց ուտելիս մատը կտրեց. իրեն վիրաւորուած համարելով պինդ փաթաթեց մատը և 3 տարի շարունակ բամադանի օրօջը չբռնեց. որովհետև մահմեդականների օրէնքով

հիւանդներն ու վիրաւորները ազատուում են այդ պարտաւորութիւնից։

49

Մոլլան կամենում էր մի խանութ կտրել։ Մի անցորդ նկատեց նրան։

—Ի՞նչ ես անում այդտեղ։

—Զուռնայ եմ ածում, պատասխանեց մոլլան։

—Ինչպէ՞ս, ոչինչ չի լսւում։

—Հեռացիր, և մի խանգարիր, վնաս կը լսուի։

50

Մոլլա Նասր-էդ-դինին մի օր մի գիւղացի մի նապաստակ ընծայ բերեց։ Սա էլ ուրթեց այդ նապաստակը, եփեց և հիւրասիրեց նրան։ Մի քանի օրից մի ուրիշ գիւղացի էլ սրան հիւր եկաւ։

Ո՞վ ես դու, հարցնում է մոլլան։

—Ես նապաստակ բերողի հարեւանն եմ։

—Լաւ, պատասխանեց մոլլան և մի աման տաք ջուր բերեց դրեց նրա առաջ, հրաւիրելով ուտել։

—Սա ի՞նչ է, հարցրեց գիւղացին։

—Նապաստակի ջրի ջուրն է, պատասխանեց մոլլան։

51

Մի անգամ մինը մոլլա Նասր-էդ-դինին ճաշի հրաւիրեց։

—Եկ մեզ մօտ, մի քիչ աղ ու հաց ուտենք։

—Մոլլան, յուսալով որ հրաւիրած հիւրին լաւ կը հիւրասիրեն՝ գնաց։ Տանտէրը նստացրեց մոլլին օջախի գլուխը և մի առաջամատոյցի մէջ միայն աղ ու հաց դրած հանդիսաւոր կերպով մատուցեց նրան։

Այդ միջոցին մի աղքատ բացեց դուռը և ողորմութիւն խնդրեց։

—Գնա, ասաց տանտէրը, թող Աստուած տայ։

Բայց աղքատը կրկին խնդրեց, միայն աւելի աղերսագին։

—Քեզ ասում են գնա, թէ չէ գլուխդ կփշրեմ այս փայտով, գոչեց տանտէրը։

—Ա՛յ թշուառական, միջամտեց մոլլան, հեռացիր շուտով, տանտէրը խօսքի տէրն է և ինչ որ ասի, բառացի կը կատարի։

52

Մի անգամ մոլլան աղուն տարաւ ջրաղացն աղալու։ Այս ժամանակ ջրաղացպանն այնքան ըղբաղուած էր, որ բոլորովին չնկատեց մոլլին։ Եւ սա օգտուելով այս յարմար բոպէից սկսեց բռով ցորեն ածել ուրիշ պարկից իւր

պարկը։ Յանկարծ ջրաղացպանը շուռ եկաւ և տեսնելով մոլլի գողութիւնը, բռնեց նրա ականջներից և գոչեց.

—Ի՞նչ ես անում, յիմար։

—Ոչինչ, վրայ բերեց մոլլան, ասածիդ պէս ես յիմար եմ, իսկ յիմարի արածի համար հատուցում չեն պահանջում։

—Բայց եթէ դու իսկապէս յիմար ես, ինչի՞ քո պարկից չես ածում ուրիշների մէջ, այլ ուրիշինից քոնի մէջ։

Այն ժամանակ ես ոչ թէ հասարակ յիմար, այլ ամենայիմար մարդը կլինէի, պատասխանեց մոլլան։

53

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինի հայրն ուղարկեց նրան մի ոչխարի գլուխ գնելու. սա գնեց,

միայն ճանապարհին կերաւ գլխի վրայ գտնուած բոլոր միսը և մերկ գանգը դրեց հօր առաջ։

—Այս ինչ է, ասաց հայրը, ուր են սրա ականջները։

«Երևի մեղք է գործել, ականջները կտրել են»։

—Իսկ աչքերն ուր են։

«Գուցէ կոյր է ծնուել»։

—Իսկ լեզուն, լեզուն ուր է։

«Հաւանական է, որ համր ծընուած լինի»։

—Իսկ գլխի կաշին ինչ եղաւ։

«Գուցէ անպիտանն է եղել և կաշին քերթել են։ Բայց նայիր, հայրիկ, աւելացրեց մոլլան, դըրանց փոխարէն ատամները ինչպէս ամուր են, մինչև հիմա մէկն էլ չէ ընկել»։

54

Մի գիշեր մոլլի տունը գող մըտաւ, կինը գողին տեսնելով, ասաց.

—Մոլլա, տունը գող է մտել։

—Տեղիցդ չշարժուիս, պատասխանեց մոլլան, տեսնենք, թէ որ մի բան գտնի, կելնեմ ձեռքիցը կառնեմ։

55

Աղ-Շէհիրի մօտի գիւղում մոլլա Նասր-էդ-դինին ճաշի հրաւիրեցին։ Մոլլան կուշտ կերաւ, խըմեց և ընծաներ ստացաւ, այնպէս որ շատ գոհ մնաց։ Գիւղացիներից մէկը նրան հարցրեց, ինչպէս անեն, որ լաւ, երջանիկ ապրեն։

—Դրանից էլ հեշտ բան, ասաց մոլլան, պէտք է միայն ինձ շուտ-շուտ հրաւիրէք։

56

Մի օր մոլլան խոսվում է կնո-

ջից և քաշում մառանը մի կա-
բասի յետև կուչ գալիս։ Աղջիկը
մի բան վերցնելու համար գալիս
է մառանը, տեսնում է հօրը այն-
տեղ պառկած և հարցնում է.

—Հայրիկ, ինչո՞ւ ես այդ տեղ
կուչ եկել։

—Աղջիկս, մօրդ ձեռքից այսպի-
սի օտար տեղերում պէտք է մեռ-
նիմ, պատասխանում է մոլլան։

57

Նասր-էդ-դինին ասացին։—
Դուրս արա կնոջդ, անամօթաբար
ուրիշների տներն է քաշ գալիս։

—Բաս որ այդպէս է, մեր տուն
ինչո՞ւ չէ գալիս, հարցրեց մոլլան։

58

Մոլլի փոքր երեխան ամբողջ
գիշերը լաց էր լինում և մօրը չէր
թողնում քնելու. խեղճ կինը ձանձ-

բացաւ օրօրելուց և խնդրեց մար-
դուն.

—Ինչ կը լինի մի քիչ էլ դու
օրօրես, խոմ կէսն էլ քոնն է։

—Իմ կէսը ինձ չի նեղացնում,
շուտ եկաւ միւս կողքին մոլլան,
դու քո կէսը օրօրիր, լաց չլինի։

59

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը
հարցրեց իւր աշակերտներին.

—Գիտէ՞ք ձեզ ինչ պէտք է ա-
սեմ։

—Չգիտենք, պատասխանեցին
աշակերտները։

—Դէհ որ չգիտէք, էլ ինչ ա-
սեմ, ասաց ու դուրս գնաց դպրո-
ցից։ Աշակերտները մնացին զար-
մացած և վճռեցին միւս անգամ
այդպէս չը պատասխանել։

Մի քանի ժամանակից յետոյ

մոլլան նորից եկաւ դպրոց ու հարցրեց.

—Ուղղափառներ, գիտէ՞ք ձեզ ինչ պէտք է ասեմ։

—Գիտենք, գիտենք, գոռացին աշակերտները։

—Դէհ որ գիտէք, էլ ինչ ասեմ, ասաց մոլլան ու հեռացաւ մօտերից։

Այս անգամ աշակերտները վըճռեցին, որ եթէ մոլլան մի անգամ էլ հարցնելու լինի, կէս մասն ասէ—գիտենք, կէսը՝ չգիտենք։ Այդպէս էլ արին, մոլլան դպրոց մտաւ, հարցրեց.—Ուղղափառներ, գիտէ՞ք ձեզ ինչ պէտք է ասեմ։

Դրանցից մի քանիսն ասացին գիտենք, միւսները՝ չգիտենք։

—Դէհ, լաւ, վրայ բերեց մոլլան, որ այդպէս է, թող գիտցողները ասեն չգիտցողներին։

—

60

Մոլլան խիստ ձրիակեր էր։ Մէկ օր իւր ժլատ հարևանին խնդրեց որ իրան ճաշի հրաւիրէ։ Հարևանը կանչեց և առաջը մի այնպիսի ապուր դրեց, որի մէջ հազիւ մի քանի ոսպ էին նշմարւում։ Մոլլան ոսպը ջոկելուց յետոյ, սկսեց շորերը հանել։

—Այդ ի՞նչ ես անում, մոլլա, հարցրեց ժլատ հարևանը։

—Ուզում եմ ջրի տակը սուզուել, որ տեսնեմ, թէ այնտեղ ոսպ կա՞յ։

61

Մի երիտասարդ ուզում էր ամուսնանալ. գնաց մոլլի տունը, խորհուրդ հարցնելու։ Մոլլան փայտը ձի էր շինել և վրան հեծած դէս ու դէն էր վազվզում։

Երիտասարդն ասաց մոլլին.

—Այ մոլլա, մի քիչ ձիդ կանգնեցրու, բան ունիմ ասելու։

—Ասա տեսնեմ ի՞նչ է։

—Ուզում եմ ամուսնանալ, երեք հարսնացուներ կան, չը գիտեմ որի՞ հետ ամուսնանամ, մէկը օրիորդ է, բայց հասակով է։

—Այդ նա գիտէ։

—Երկրորդը նոյնպէս օրիորդ է, բայց փոքր է հասակով։

—Այդ դու գիտես։

—Երրորդն էլ այրի է։

Մոլլան սկսեց փայտէ ձին վազվզացնել ու ասել.

—Հեռու, հեռու կանգնիր, ձիս քացի կը խփէ քեզ։ Երիտասարդը բան չը հասկանալով, խնդրեց մոլլայից, մեկնէ իւր ասածները, նա պատասխանեց.

—Նա որ մեծ է տարիքով, նրան էլ սրանից յետոյ չես կարող ուղղել, ինքը գիտէ. ինչպէս սովորել է, այնպէս կը պահանջէ. միւսը, որ փոքր է հասակով, դու գիտես, ինչպէս ուղղութիւն կ'տաս, այնպէս էլ կը կենայ, իսկ երրորդը, որ այրի է, կամակոր կը լինի, նրանից շատ հեռու կաց, թէ չէ քացի կը տայ քեզ։

62

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը ձին տարաւ ծախելու. մի գնորդ եկաւ, սակարկեց, տասերկու թումանով առաւ։ Մէկ էլ գնորդի ընկերն եկաւ, գինն իմացաւ ասաց. «Մոլլա, այդ գնով թանգ է, մի թուման իրան բաշխէ»։

—Լաւ, բաշխեցի, ասաց մոլլան։

Գնորդը տեսնելով, որ մոլլան շուտով համաձայնեց, մի ուրիշ միջնորդ ձգեց, որ մի թուման էլ պակասացնի։ Մոլլան դարձեալ

պակասացրեց։ Բայց գնորդը սրանով էլ չբաւականացաւ, այլ նորանոր բարեխօսներ մէջ ձգելով աւելի ու աւելի պակասեցնել տուեց գինը։ Բայց վերջապէս բարեխօսներից մինը ասաց, «Մոլլա, այդ որ ամէն մինիս մի մի թուման բաշխեցիր, էլ ինչ պիտի տանիս տունդ»։

—Չիս, պատասխանեց մոլլան։

63

Մի անգամ մինը եկաւ և մոլլա Նասր-էդ-դինի էշը խնդրեց։ «Ասպասիր, գնամ հարցնեմ, թէ կը կամենա՞յ գալ և եթէ հաճի, իսկոյն հետս կը բերեմ», ասաց մոլլան և գնաց ախոռ, մի քանի ըոպէ մնաց այնտեղ և վերադառնալով պատասխանեց. «Էշս չի կամենում գալ, ասելով, որ եթէ ինձ նրանց ձեռքն յանձնես, ոչ միայն

ինձ չարաչար պիտի ծեծեն, այլ և կնոջդ մի լաւ պիտի հայհոյեն»։

64

Մի օր Լանկ-Թեմուրը մոլլի ներկայութեամբ շատ անհաւատալի բաներ էր պատմում։ Նասր-էդ-դինն էլ հետևեց նրան։

—Մոլլա, նկատեց Լանկ-Թեմուրը, ախր դու ինչպէս ես հաւատում այդ տեսակ բաներին։

—Եթէ ձերդ վեհափառութիւնն ընդունում է անխաբեթ մարդիկ, ես, հապարակ մոլլաս, ինչպէս չը ընդունեմ անվարտիկ մարդկանց, ասաց Նասր-էդ-դինը։

65

Մոլլան ձիուց վայր ընկաւ։

—Ամօթ չէ՞ քեզ, հարցրին։

—Է՜, ասաց, միթէ՞ կարելի է երկրի և երկնքի մէջ մնալ։

66

Մի գիշեր մոլլան աղմուկից արթնանալով լսում է, որ իւր տան առաջ կռիւ են անում։ Վեր կաց, այ կին, ասում է, ճրագը վառիր, տեսնենք այս ինչ կռիւ է»։

—Պառկիր տեղդ, այ մարդ, բան չունիս, թող ինչ կուզեն անեն, պատասխանում է կինը։ Բայց մոլլան նրան ականջ չի դնում և վերմակը ուսերուն առած դուրս է ելնում։ Մարդկանցից մինը նրան տեսնելով խլում է վերայից վերմակը և փախչում. կռիւն էլ վերջանում է։ Մոլլան ցրտից սառելով և դողալով նեղս է մտնում, կինը հարցնում է կռուի պատճառը։

—Կռուի պատճառը մեր վերմակն է եղել, պատասխանում է մոլլան, որովհետև հէնց որ այն

վերայից յափշտակեցին, բոլոր աղաղակները դադարեցան։

67

Մի անգամ մոլլան էշը կորցրեց և մինին հարցրեց թէ տեսե՞լ է։ «Էշդ այս ինչ տեղը տեսայ, ասաց այդ մարդը, դատաւոր է եղել»։

—Ճիշտ է, ասաց մոլլան, գիտէի, որ դատաւոր պիտի լինէր, որովհետև երբ նրան դաս էի տալիս, ականջները տնկում էր, որ ուշադրութեամբ լսէ։

68

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը հին հանդերձներով հարսանիք գնաց, և տեսնելով, որ իւր վրայ ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում, պատիւ չի տալիս, աննկատելի կերպով դուրս ելաւ, գնաց տուն, թանգագին մուշտակը հագաւ և

նորից վերադարձաւ հարանքա-
տուն։ Իսկոյն բոլորը ոտի կանգ-
նեցան, «բարով եկաք, ներս հրա-
մեցէք», ասացին և սեղանի վերի
գլուխը նստեցրին։ Յետոյ այս ու
այն կողմից զանազան կերակրներ
մատուցանելով, համեցէք ասին։
Այդ ժամանակ մոլլան իւր մուշ-
տակի փէշից բռնելով՝ «Սիրելի
մուշտակս, ասաց, հրամէ, կեր,
այս բոլորը քեզ համար է»։ Բաղ-
մականները զարմացած հարցրին
մոլլին, թէ ի՞նչ է նշանակում այդ։

—Այս մեծարանքն ու պատիւը
մուշտակիս համար են, ասաց մոլ-
լան, պէտք է որ կերակուրներն
էլ մուշտակս ուտէ։

69

Մոլլան մի անգամ տանը նստ-
ած մաստակ էր ծամում. գլխից
մինը կանչեց նրան։ Մոլլան մաս-

տակը բերանից հանեց, կպցրեց
քթին և դուրս գնաց։

Ինչի՞ ես մաստակը քթիդ կպցը-
րել, մոլլա, հարցրեց կանչողը։

—Մարդ իրեն ապրանքը միշտ
աչքի առաջ պիտի ունենայ, թէ
չէ խէր չի ունենալ, բացատրեց
ծանրութեամբ մոլլան։

70

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դի-
նը նորապսակների սենեակի դըռ-
նից ականջ դնելով լսում է, որ
նորափեսան համբուրելով իւր
հարսնացուին հարցնում է, թէ
այս համբոյրը ի՞նչ արժէ։ Նորա-
հարսը պատասխանում է թէ ի՞նչ
գիտեմ։ Թէ հազար մանէթ արժի։
Մոլլան իսկոյն մի եղան կաշի է
ձգում վերան և մտնելով սրանց
սենեակը սկսում է բղաւել. ա՜ կա-
շի առնող, լաւ կաշի առնող։

Նորափեսան զայրացած ասում է, այս ի՞նչ ծախելու տեղ է, շուկայ է, ինչ է։

—Շուկայ չէ ի՞նչ է, պատասխանում է մոլլան, մի տեղ որ հազար մանէթի առուտուր է լինում, մի եղան կաշի չի կարող ծախուի՞լ։

71

Մոլլա Նասր-էդ-դինը նստած էր գետի ափին։ Նրան մոտեցան տասն կոյրեր և խնդրեցին իրենց գետից անց կացնել՝ խոստանալով իւրաքանչիւր կոյրի համար մի ղուռուշ վարձատրութիւն։

Նա ապահով անց կացրեց ինչին, միայն տասերորդին զցեց ջուրը։ Խեղճը յուսահատ աղաղակներով խեղդուեց։

—Ինչի՞ խեղդեցիր մեր ընկերոջը, անիրաւ մոլլա, յարձակուեցին նրա վրայ կոյրի ընկերները։

«Ձեզ ինչ, պատասխանեց մոլլան, ես նրան առ միշտ ապատեցի ոտով ման գալուց, իսկ եթէ դուք շատ ցանկանում էք, որ նա ձեր մէջ լինի, ենթադրեցէք թէ նրան էլ եմ անց կացրել. չէ՞ որ ձեզ համար միևնոյն է, դուք նրան չէիք տեսնիլ. կարող էք մինչև անգամ նրա ղուռուշն էլ տալ, որպէսզի ձեզ աւելի թուայ, թէ նա ձեր մէջն է։

72

Մոլլա Նասր-էդ-դինի բարեկամներից մինը սաստիկ ժլատ էր և ոչ մի անգամ չէր հրաւիրում նրան իւր մոտ։ Մոլլի համար այս բանը թէ վշտացուցիչ էր և թէ վիրաւորական։

—Ինչո՞ւ երբէք ինձ չես հրաւիրում քո մոտ. մեղք չի լինիլ

կարծեմ, գոնէ մի անգամ ճաշել քեզ մօտ, իմ տասնեակ ճաշերիս փոխարէն.—ասաց մոլլան իւր ժըլատ բարեկամին՝ փողոցում հանդիպելով։

«Ես քեզ չեմ հրաւիրում ոչ թէ ժլատութիւնից, այլ կեանքդ վըտանգի ենթարկելու երկիւղից, որովհետև դու անագին կոորներ ամբողջովին կուլ ես տալիս և դեռ բերանումդ գտնուած կոորը չկերած, երկրորդն ես տանում։

—Այդ շատ ճիշտ է, պատասխանեց մոլլան, բայց դու հրաւիրիր ինձ, ես ազնիւ խօսք եմ տալիս, որ ամէն մի պատառից յետոյ երկու ձեռքով նամազ անեմ։

73

Մինը իւր որդուն բերեց մոլլի մօտ և խնդրեց որ կարդալ գրել սովորեցնի։

Մոլլան իրը վարձատրութիւն մի թուման պահանջեց։

Վայ, ինչ ես ասում, մոլլա, ասաց երեխայի հայրը, մի թուման-նով մի էշ կառնեմ։

—Ա՛ռ, պատասխանեց մոլլան, այն ժամանակ որդուդ հետ միասին երկու էշ կունենաս։

74

Մոլլա Նասր-էդ-դինը սովորութիւն ունէր լուացքի ժամանակ իւր կնոջն օգնելու։ Միայն հէնց որ նրանք մտադրւում էին գետի ափը գնալ լուացք անելու, խոյն անձրև էր գալիս և նրանց խանդարում գնալու։

Մի օր էլ մոլլան պանիր առած գնում էր տուն, անձրևն սկսեց կաթել։ Մոլլան բարկացած պանիրը վերև պարզեց և ասաց.

—Չլինի այս սպիտակը տես-

նելով սապոն կարծեցիր։ Պանիր է, պանիր, սապոն չէ, մի վախենար, այս օր լուացքի չենք գընալու, թող սիրտդ չպատռի։

75

Մոլլի կինը մի օր մի մեծ կծիկ թել տուեց ամուսնուն և հետը երկար սակարգեց, որ 5—6 ռուբլիով ծախի և իրենց երկուսի համար մի ապացու և մի դէյրացու առնի։

—Մոլլան կծիկը տարաւ շուկայ, սրան նրան ցոյց տուեց, շատ գովեց, շատ ջանք թափեց, բայց ոչ ոք մի ռուբլուց աւելի չտուեց։ Ճարահատուած մոլլան դարձաւ տուն՝ կծիկը ձեռին։

—Հ՛ը, ինչի՞ չծախեցիր, հարցրեց կինը։

—Նրա համար, որ տան սա-

կարկութիւնը շուկայում չանցաւ, պատասխանեց մոլլան։

76

Ամերային մի ցուրտ և անձրևային օր մոլլա Նասր-էդ-դինի ապրած Աղ-շէհիր քաղաքը մի օտարական է գալիս։ Մոլլան նրան տեսնում է և իւր տուն հրաւիրում։ Օտարականը մոլլին հետևելով տաքացնում էր իւր մըրսած ձեռքերը բերանի գոլորշիով։

—Այդ ի՞նչ ես անում, հարցնում է մոլլան։

—Ձեռներս մրսում էն՝ տաքացնում եմ, պատասխանում է օտարականը։

Երբ տուն են հասնում և հացի նստում, հիւրը քաղցած լինելով՝ սկսում է շտապով փչել գդալով վերցրած ապուրին՝ որ հովանայ։

—Իսկ հիմայ ինչի՞ ես փչում, հարցնում է մոլլան։

—Փչում եմ, որ ապուրը հովանայ, պատասխանում է հիւրը։

—Վերկաց կորիր այստեղից, բարկանում է մոլլան, ես չեմ կարող այնպիսի հիւր ընդունել, որ թէ տաք է փչում և թէ պաղ [1])։

77

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը և իւր աշակերտները որսի են գնում և մի արջի պատահում։

—Մի մտիր որջը, տես արջը այնտե՞ղ է, ասում է մոլլան աշակերտին։

Եւ հէնց որ սա մտնում է որջը, արջը գալիս է և ուզում է ներս

[1]) Այս տեղից, երևի, առաջացել է թէ տաք կը փչէ և թէ պաղ զարձուածքը։

մտնել։ Մոլլան վրայ է վազում և պինդ բռնում արջի պոչից։ Արջը ոտներով խփում է որ ազատուի և սաստիկ փոշի բարձրացնում։

Աշակերտը այս փոշուց նեղացած՝ ներսից ձայն է տալիս.

—Մոլլա, այս ի՞նչ փոշի բարձրացաւ, քիչ է մնում որ խեղդուեմ։

—Փոշին այն ժամանակ կը տեսնէիր, երբ արջի պոչը ձեռիս բռնած չլինէի, ձայն է տալիս դրսից մոլլան։

78

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինին հարցրին.

—Մոլլա, գիտե՞ս արդեօք, թէ ե՞րբ է լինելու աշխարհիս վերջը։

—Ինչպէս չէ, այդ ամենքը գիտեն, պատասխանում է մոլլան, երբ կինս մեռնի, աշխարհս կիսով չափ վերջացած կը լինի, իսկ

երբ ես մեռնիմ՝ այն ժամանակ արդէն կը գայ աշխարհիս կատարեալ վերջը։

79

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը ասում է իւր կնոջը. Երկու բարեկամ ունիմ, ուզում եմ ճաշի հրաւիրել, ի՞նչ ունինք տանը։

—Երկու թաս մածուն կայ, ուրիշ ոչինչ, պատասխանում է կինը։

—Երկու թաս մածունը բաւական է երկու հոգուն, ասում է մոլլան ու գնում հրաւիրելու բարեկամներին։ Սակայն այս ժամանակ սրանց մօտ երկու ուրիշ մարդիկ էլ էին գտնւում, որոնք առանց հրաւիրուելու պոչ են լինում գալիս մոլլի տունը։ Մոլլան շուարում է, երկու թաս մածունը չորս մարդու առաջ ի՞նչպէս դնէ, չի հերիք անի։ Մտածում՝

հնարը գտնում է. գնում երկու թաս մածունը և երկու թաս էլ ջուր բերում դնում է սրանց առաջ և հարցնում բարեկամներին.

—Այս երկու մարդը ձեր ի՞նչն են։

—Մեր ազգականներն են, պատասխանում են բարեկամները։

—Ջուրն ու մածունն էլ ազգականներ են, ասում է մոլլան և միմեանց հետ խառնելով չորս թասի մէջ է ածում և դնում չորսի առաջը։

80

Մոլլա Նասր-էդ-դինը իւր հարևանին փող տուեց և պատուիրեց մի եզ գնել որ ոչ սև լինի, ոչ կարմիր, ոչ սպիտակ, ոչ դեղին, ոչ կանանչ, ոչ կապոյտ, մի խօսքով ոչ մի գոյնի։ Հարևանը վերցրեց դրամը, դրեց գրպանը և ասաց. Ո՛չ երկուշաբթի, ոչ երեք-

շաբթի, ոչ չորեքշաբթի, ոչ հինգշաբթի, ոչ ուրբաթ, ոչ շաբաթ և ոչ կիրակի արի տար։

Մի ժամանակ անցկացաւ, մոլլան տեսաւ, որ ոչ մի օր չի կարողանում գնալ եզը բերելու, զընաց գանգատուեց։ Դատաւորը լսեց գանգատը երկու կողմից էլ և հրամայեց, որ երկուսին էլ փոր փորի կապեն և սարից գլորեն։ Իսկոյն կապեցին ու գլորեցին. երբ մոլլէն էր տակն ընկնում, բղաւում էր. «Համաձայն եմ, ուզում է սև լինի, ուզում է սպիտակ, ինչ գոյնի ուզում է թող լինի՝ տուր պրծնի»։ Եւ երբ հարևանն էր տակն ընկնում, նա էր ասում. «Ուզում է երկուշաբթի լինի, ուզում է երեքշաբթի, ինչ օր ուզում ես արի տար պրծնի»։

—

81

Մի մարդ գալիս է մոլլի մօտ և ասում.

—Մոլլա, էշս կորցրի, շատ դէս ու դէն ընկայ չկարողացայ գըտնել, եթէ կարելի է, ժղկիթում ծանուցում արա, գտնողը բերի։

Մոլլան համաձայնում է և նոյն օրը բարձրանալով քարոզելու տեղը՝ ասում է.

—Բարեպաշտ ժողովուրդ, ձեզանից ո՞վ որ զայլան և ծխախոտ չի քաշում և քէֆ անելով ու զուարճանալով ժամանակ չի անցկացնում, խնդրեմ ոտի կանգնի։

Ժողովրդի միջից մէյն մինը ոտի է կանգնում և ասում.

—Այդ ես եմ, որ ոչ ծխում եմ և ոչ քէֆ անում, զուարճանում։

Մոլլան խսկոյն դառնում է դէպի էշը կորցնողը և ցոյց տա-

լով Նրան այդ մարդուն ասում է։

—Ահա, եղբայր, սա է քո կորցրած էշը, բեր իուլարը ձգիր բերանը և տար։

82

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը մրսում է և սկսում է սաստիկ հազալ։ Նրան սովորեցնում են, որ հարևան գիւղում ապրում է հազի դեղ իմացող մի մարդ։ Մոլլան գնում է այդ մարդու մօտ դեղն ուղելու, բայց տեսնում է, որ նա էլ այնպէս սաստիկ հազում է, որ չի կարողանում երկու խօսք իրար յետևից ասել։

—Արդեօք քո դեղը կտրո՞ւմ է հազը, հարցնում է Նրան մոլլան։

—Անմիջապէս, իմ դեղս անանման է։

—Շատ լաւ, պատասխանում է մոլլան, միայն առաջ դու քեզ

բժշկիր և ապա ինձ իմացրու որ գամ տանիմ այդ անանման դեղդ։

83

Մոլլի կինը գետն ընկել խեղդուել էր, լուղորդներն ընկան ջուրը և ջրի հոսանքով սկսեցին որոնել նրա դիակը։

Իզուր էք այդ կողմում որոնում, այդ կողմով գնացած չի լինել, ասաց մոլլան, հոսանքի հակառակ կողմում որոնեցէք։

—Ինչի՞, մոլլա։

—Նա հակառակ բնաւորութիւն ունէր, ամէն բանի մէջ հակառակում էր, հիմայ էլ, կարծում եմ, որ ջրի հակառակ կողմը գնացած կը լինի։

84

Մոլլա Նասր-էդ-դինի մի յանցանքի համար դատին որոշել էր,

որ մոլլի իշի պոչը կարեն, իբրև տուգանք։

Երբ եկան էշը տանելու՝ մոլլի կինը ձայն տուեց մոլլին, թէ ինչ ես հանգիստ վեր ընկել, եկել են էշը տանին, որ պոչը կարեն։

—Ո՞րտեղ պիտի տանեն կարեն, հարցրեց մոլլան մտատանջ։

—Հրապարակում, պատասխանեց կինը։

—Դէհ ուրեմն էշս սաղ սալամաթ յետ կըգայ, ասաց մոլլան յետ ընկնելով։

—Ի՞նչպէս, հարցրեց կինը զարմացած։

—Դէհ չգիտե՞ս,նախատեց մոլլան, բանն որ հասարակութեան ընկաւ, ոչինչ էլ չի լինիլ, մինը կասի արմատից կտրեմ, միւսը կասի ծայրից, երրորդը՝ կիսից, յետոյ էշը կը թողնեն և իրար պոչից կը բռնեն։

85

Մի անգամ խանը հրաւիրում է մոլլին միասին որսորդութեան գընալու։ Մոլլան գալիս է՝ ձեռին մի ագռաւ բռնած։

Խանը ծիծաղում է և ասում.

«Այդ ի՞նչ է, մոլլա. ագռաւո՞վ ես որս անելու»։

—Ինչ կայ որ, ես շատ ագռաւներ գիտեմ, որոնք բազէներից լաւ են որսում։

86

Մի օր Լանկ-Թեմուրը հարցրեց մոլլա Նասր-էդ-դինին.

—Ի՞նչ ես կարծում, աշխարհումս կանա՞յք են շատ, թէ տղամարդիկ։

Կանայք, պատասխանեց մոլլան։

—Ի՞նչպէս, ո՞րտեղից գիտես։

—Կանայք դէհ կանայք են, իսկ այն ազամարդիկ էլ, որոնք կանանց խելքով են նստում կանգնում, նոյնպէս կանանց դասը պիտի դասուին։ Ուրեմն՝ կանայք աւելի են։

87

Մի անգամ մի դէվրիշ է գալիս մոլլի մօտ և ասում.

—Մոլլա, ո՞վ է եղել մեր նախահայրը.

—Ադամը, պատասխանում է մոլլան։

—Իսկ մեր նախամայրը։

—Եւան։

—Ուրեմն մենք ազգական ենք։

—Այո՛, ազգական ենք։

—Հետևապէս դու պէտք է ինձ մասը հանես քո կարողութիւնից։

—Շատ լաւ, պատասխանում է մոլլան և մի գոռշ տալիս նրան։

—Այս ի՞նչ է, մոլլա, քո անագին կարողութիւնից դու միայն մի գոռշ ես բաժին հանում քո ազգականին։

—Կամաց, թէ մեր միւս ազգականները լսեն այս մասին, այն ժամանակ քեզ մի գոռշ էլ չի ընկնիլ։

88

Մի անգամ մոլլան պատուհանից դուրս էր նայում, մի աղքատ ներքևից մեկնեց ձեռքը և ողորմութիւն խնդրեց։

—Եթէ վարը լինէի՝ կը տայի, ասաց մոլլան։

Քեզ վարն էլ եմ տեսել, վերևն էլ, մրմնջաց աղքատը հեռանալով։

89

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը այնքան խօսեց կնոջ հետ, որ վեր-

ջինս սաստիկ ձանձրանալով ասաց նրան.

—Հերիք է, այ մարդ, գլուխս տարար, գնա հեռացիր ինձնից։

Մոլլան այս կծու խօսքերից վիրաւորուեց, իսկոյն ձի նստաւ և երկու օրուայ ճանապարհ կտրեց։ Ապա այնտեղից մի մարդ ուղարկեց կնոջը հարցնելու՝ թէ բաւական է արդեօք այդքան տարածութիւնը, թէ էլի հեռանայ։

90

Մի անգամ մոլլան կնոջն ասաց թէ պանդխտութեան է գնալու, ճանապարհի պաշարի համար թող գաթայ թխի։ Կինը գաթան թըխեց. մոլլան հաւաքեց, դրեց բակեղաթը, համբուրեց կնոջը և դուրս եկաւ։ Մի քիչ յետոյ մոլլի կինը տեսաւ, որ մոլլան, օրօրոցի յետևը նստած, ախորժակով անուշ

է անում հիանալի գաթաները։

—Ա՜յ մարդ, հապա պանդխտութեան պիտի գնայիր։

—Քանի երեսդ չեմ տեսնում, պանդխտութեան մէջն եմ ու կամ, չե՞ս տեսնում սարի պէս օրօրոցը խանգարում է քեզ տեսնելու։

91

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը դրկից մի մեծ կաթսայ է խնդրում, որ փլաւ եփէ։ Դրկիցը տալիս է և մոլլան հետևեալ օրը վերադարձնում է մի փոքրիկ կաթսայ էլ հետը։

—Այս ի՞նչ կաթսայ է, հարցնում է դրկիցը։

—Ձեր կաթսայի ճուտն է, նա երէկ երեկոյ մեր տանը ծնեց։

Դրկիցը մտքում ծիծաղում է մոլլա Նասր-էդ-դինի վրայ և վերցնում է երկու կաթսան էլ։

Մի քանի օրից մոլլան նորից է խնդրում մեծ կաթսան։ Դրկիցը ուրախությամբ տալիս է, յուսալով, որ այս անգամ էլ կը ծնի։ Սակայն անցնում է մի քանի օր, բայց մոլլան չի վերադարձնում կաթսան։

—Մոլլա, ի՞նչ եղաւ կաթսաս, հարցնում է դրկիցը։

—Մեռաւ, պատասխանում է մոլլան լրջությամբ, դու ողջ լինես։

—Ի՞նչ ես խօսում, բարկանում է մոլլան, կաթսան էլ մեռնի՞։

—Եթէ կծնի, ապա և կը մեռնի, պատասխանում է մոլլան, ինչի՞ ծնուելուն հաւատացիր և մեռնելուն չես ուզում հաւատալ։

92

Մոլլի ընակած քաղաքում գլուխը խուզելու համար սովորաբար երկու կոպէկ էին տալիս սափրիչին։ Մի անգամ մոլլան էլ իւր գլուխը սափրել տուեց, բայց փոխանակ երկուսի, միայն մի կոպէկ տուեց։ Սափրիչը զարմանալով ասաց մոլլին.

Ի՞նչու ես սովորութիւնը քանդում և մի կոպէկս կտրում, տուր մի կոպէկն էլ։

—Ի՞նչպէս չէ, պատասխանեց մոլլան, չէ՞ որ գլուխս ճաղատ է, և հետևաբար նրա կէսը ինքն Տէր-Աստուածն է սափրել, որի համար գիշեր ու ցերեկ շնորհա-

կալ եմ լինում նրանից. իսկ դու ուզում ես, որ ես Աստծու աշխատանքի համար էլ քեզ վճարեի։

Դժբաղդ սափրիչն ոչ ինչ չկարողացաւ պատասխանել մոլլի պատճառաբանութիւնների դէմ։

93

Մոլլա Նասր-էդ-դինը փող էր պարտ Հասանին։ Վերջինս շատ անգամ պահանջեց, բայց չկարողացաւ ստանալ, ուստի և որոշեց գանգատուիլ։ Մոլլան այս լսելով, մեռած ձևացաւ և կնոջն ու երեխաներին ուղարկեց Հասանի մօտ, խնդրելու որ այդ մուրհակը պատռի, որպէսզի մոլլան միւս աշխարհում այդ պարտքի պատճառով չտանջուի։ Կինը երեխաներին առած լալով ողբալով գնաց Հասանի մօտ, յայտնեց ամուսնու մահը և պաղատեց, որ պարտքը նուիրէ, մուրհակը պատռի։

Հասանն իսկոյն եկաւ մոլլի տունը, տեսաւ, որ մոլլան պատնուած վայր է դրուած և տանն էլ ոչինչ չկայ։ Էլ մի բան ստանալու յոյս չունենալով, պատռեց մուրհակը։ Բայց որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ մուրհակը պատռելիս մոլլան յարութիւն առաւ։

94

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը գրաղ եկաւ իւր հարևանի հետ թէ կարող է նրան խաբել։ Մի քիչ ժամանակից յետոյ հարևանը եկաւ նրա մօտ և տեսաւ, որ մոլլան պատշգամբի սիւնը բռնել կանգնել է։

—Ի՞նչ ես անում, մոլլա, հարցրեց հարևանը։

«Դժբախտութիւն պատահեց,

պատասխանեց Նասր-էդ-դինը։ Սիւնը փթել է և եթէ ձեռներս բաց թողնեմ, կընկնի և ամբողջ ծածկը վայր կը թափուի. Ատուածդ սիրես, արի դու մի բոպէ բռնիր, ես վազեմ հիւսնին կանչեմ։

Հարևանը համաձայնուեց և մոլլան գնաց։ Բաւական երկար միջոց անցաւ. հարևանը յոգնեց և մտածեց.

«Ո՞ւր կորաւ մոլլան. ես էլ չեմ կարող բռնել սիւնը. քանդուում է՝ թող քանդուի, դարդն ինձ է տուած։ Եւ թողեց սիւնն ու փախաւ, վախենալով թէ մի գուցէ ծածկը գլխին թափուի։ Բայց ոչինչ չպատահեց և շէնքը մնաց անվնաս։ Սակայն հարևանը սաստիկ զարմացաւ, երբ տան մի անկիւնից դուրս եկաւ մոլլան, որ ծիծաղում էր և բղաւում.

—Խափեցէ՛, խափեցէ՛։

95

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը իմացաւ, որ իւր ծանօթ բէկի ծառան մեռել է և այս պատճառով բէկը սաստիկ վշտացած է։ Իսկոյն ձին թամբել տուեց և լալով քշեց դէպի բէկը։ Ճանապարհին հարց ու փորձ անելով իմացաւ, որ ոչ թէ ծառան, այլ ինքը բէկն է մեռել, այն ժամանակ յետ դարձաւ, ասելով.

«Էլ կարիք չկայ գնալու, ես ուզում էի արցունքներովս արտայայտել բէկին յարգանքս և արժանանալ նրա շնորհքին. բայց քանի որ ինքն է մեռել, էլ ինչի՞ գնամ, առանց այդ էլ իրրև մոլլա քիչ չեմ զզուել մեռելների երեսներին նայելով։

—

96

Մոլլա Նասր-էդ-դինը մի ուրիշ քաղաք գնալիս մոռացաւ հաց վերցնել։ Ճանապարհին սաստիկ քաղցեց, բայց ոչինչ չունէր ուտելու։ Յանկարծ մի աղբիւրի մօտ նա պատահեց մի համաքաղաքացու, որ բակեղաթից (խուրջին) պանիր ու հաց հանել՝ մեծ ախորժակով ուտում էր։

—Փառք քեզ, Աստուած. մի բան գտնուեց ուտելու, բացականչեց Մոլլան և սաստիկ ուրախացած մօտեցաւ իւր համաքաղաքացուն և սիրալիր բարև տուեց։

—Բարև, համշարի, ո՞րտեղից ես գալիս։

—Թէհրանից, սիրելիս, ահա տասը տարի է, որ օտարութեան մէջ եմ և ոչ մի տեղեկութիւն չունիմ, ոչ որդիներիս և ոչ տանս մասին։

«Փառք Աստծոյ, բոլորը շատ լաւ են», պատասխանեց Մոլլան, կամենալով այսպիսի հաճելի տեղեկութիւնով ուրախացնել իւր համաքաղաքացուն և տրամադրել նրան՝ հրաւիրելու իրեն միասին հաց ուտելու, բայց Մոլլի համաքաղաքացին տէրը չէր լինում և շարունակում էր միայնակ ուտել. ուստի Մոլլան մտածեց ուրիշ կերպով ստանալ նրանից ուտեստ։

Համաքաղաքացին իւր գերդաստանի մասին ստացած լաւ տեղեկութիւններով ուրախացած՝ սկսեց ուրիշ հարցեր տալ։

—Ասա, խնդրեմ, մի եղջերու ունէինք կենդանի՞ է։

«Հա, այն գեղեցիկ եղջերուն, որ որդուդ հետ շատ անգամ գալիս էին իմ տանս մօտ, ափսո՞ս, նա սատկեց»։

—Ինչի՞, ի՞նչ պատահեց նրան։

«Կնոջդ ու որդուդ մահից յետոյ աղգականներդ այնքան վշտացած էին, որ բոլորովին մոռացել էին քո եղջերուին և նա քաղցից սատակեց»։

—Բայց մի՞թէ կինս ու երեխաս մեռել են։ Ա՜խ, որդիս, որդի՜ս։

Խեղճ համաքաղաքացին սկսեց հեկեկալ։

«Այո՛, հրդեհ ընկաւ տունդ ու կինդ ուերեխադ վառուեցան տանդ ունեցած չունեցածիդ հետ»։

Խեղճ համաքաղաքացին հաւատալով մոլլի ասածներին, սկսեց խփել գլխին և շտապել դէպի տուն, բոլորովին մոռանալով բակեղաթը։ Իսկ մեր մոլլան հանգիստ փոուեց աղբիւրի գլխին և սկսեց վայելել խափուած համաքաղաքացու ճամբու պաշարը։

—

97

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը տուն վերադառնալով ուտելու ոչինչ չը գտաւ, բայց իմացաւ, որ հարևանի տնում փլաւ են եփում և շուտով պիտի ճաշեն։

—Ա՛յ կնիկ, ասաց նա, ես կը-վերցնեմ ճիպոտը և կսկսեմ խփել քեզ, իսկ դու փախիր հարևանի տունը, իբր օգնութիւն խնդրելու, այսպիսով երկուսս էլ կերթանք նրանց մօտ. նրանք չեն թողնիլ, որ քեզ ծեծեմ և դեռ կը հրաւիրեն էլ իրենց հետ ճաշելու. և այսպիսով ես էլ, դու էլ փլաւ կուտենք։

Ինչ որ ասացին, այն էլ արին։ Եւ այսպիսով այդ օրը մոլլան իւր կնոջ հետ ճաշեց հարևանի մօտ, թէև այս ձրի ճաշը շատ թանգ նստեց մոլլի կնոջը։

98

Մոլլան պատրաստուելով բաղնիս գնալ, կնոջը պատուիրեց փըլաւ եփել։ Կինը եփեց, բայց յանկարծ սիրականն եկաւ, նստան բոլորը կերան։ Մոլլան վերադարձաւ տուն և փլաւը պահանջեց։

Մի՞թէ կարելի է բաղնիսից եկած փլաւ ուտել, մոլլա, ասաց կինը, կը վասի, մի քիչ պառկիր, հանգստացիր, յետոյ կուտես։

Մոլլան պառկեց հանգստանալու, բայց քունը տարաւ, քնեց, ինչպէս որ ցանկացել էր կինը։

Սա բերեց փլաւի մնացորդներից, քսեց մոլլի միրուքին ու շրթունքներին։ Մի քիչ յետոյ մոլլան զարթեց և փլաւը պահանջեց։

—Ի՞նչպէս, մոլլա, չկերա՞ր ու քնեցիր։

«Ի՞նչպէս թէ կերայ»։

—Ամօթ է, ամօթ, շրթունքներիդ, բեխերիդ նայիր, դեռ իւղը պոպղում է։

Մոլլան նայեց հայելու մէջ և ինքն իրան շշնջաց. «Ինչ իւղալին է եղել»։

99

Մոլլա Նասր-էդ-դինը վճռեց աւազակ դառնալ։ Առանձնացաւ անտառում և այստեղից յարձակւում էր մենակ ճանապարհորդների վրայ և ասում.

—Տուր ինչ որ ունիս, թէ չէ...

Այս միջոցով նա թալանեց մէկին, երկրորդին, երրորդին, բայց չորրորդը նրա ուզածը դուրս չեկաւ։

—Տուր ունեցածդ, թէ չէ... ասաց մոլլան իւր սովորական եղանակով։

—Թէ չէ ինչ, հարցրեց նրան

ճանապարհորդը սառնութեամբ։

—Ոչինչ, պատասխանեց մոլլան, տեսնելով նրա սպառնացող դէմքը և շտապեց հեռանալ։

100

Մի ախունդ խփեց մոլլին և քիթն ու բերանն արիւնեց։ Մոլլան գնաց գանգատուեց մուշդայիտին, բայց սա ախունդի բարեկամը լինելով, աշխատեց սրանց հաշտեցնել. բայց մոլլան չը համաձայնեց և պահանջեց օրինաւոր պատիժ։ Վերջապէս մուշդայիտը յայտնի կողմնապահութեամբ վճռեց պահանջել ախունդից մի բուբլի տուգանք յօգուտ մոլլայի։ Ախունդը համաձայնուեց և գնաց տուն այդ մի բուբլին բերելու։ Մոլլան մինչև երեկոյ սպասեց մուշդայիտի մօտ ախունդի վերադարձին, բայց սա չը վերադարձաւ։ Համբերութիւնից դուրս գալով՝ մոլլան խփեց մուշդայիտին և ասաց։

—Երբ ախունդը մի բուբլին բերի, դու ինքդ վերցրու, ես էլ չեմ կարող սպասել։

101

Մոլլան մի օր երեք ֆունտ միս առաւ և կնոջը յանձնարարեց երեկոյեան համար բոզբաշ եփել։ Կինը պատրաստեց կերակուրը, բայց յետոյ ;իւր սիրեկանի հետ կերաւ։

Երեկոյեան մոլլան վերադարձաւ տուն, սաստիկ քաղցած, որովհետև դիտմամբ բերանն ոչինչ չէր դրել, որպէսզի մեծ ախորժակով ուտէ բոզբաշը։

—Ա՛յ կնիկ, ձայն տուեց մոլլան, տուն մտնելով, շուտ արա, բոզբաշը բեր, մի խէյլի էլ հաց։

«Հողս գլխիդ, գոչեց կինը, քանի անգամ ասել եմ քեզ, որ պէտք է հեռացնել այս գող կատուին, իսկ դու երբէք ուշադրութիւն չէիր դարձնում, հիմի լաւ եղաւ, բոլոր միսը փախցրել, կերել է։

Մոլլան, որ առանց այդ էլ սաստիկ բարկացած էր քաղցածութեան պատճառով, տեղից վեր կացաւ, թռաւ բռնեց կատուին և դրեց կշեռքի նժարի մէջ, իսկ միւսում քարեր շարեց, մինչև որ երկու նժարն էլ հաւասարուեցան։

Եւ ինչ, կատուն երեք ֆունտից փոքր ինչ թեթև եկաւ։

—Անամօթ կին, գոչեց մոլլան այն ժամանակ,—ինչպէս ես մեղադրում անմեղ կատուին. եթէ իսկապէս նա կերած լինէր երեք ֆունտ միսը, այն ժամանակ գոնէ երեք ֆունտից մի քիչ աւելի պիտի կշռէր։

102

Մոլլա Նասր-էդ-դինը գիւղ վերադառնալիս իւր իշի հետ գրազ եկաւ, որ ով շուտ տուն հասնի՝ նա ուտէ ձուաձեղը։ Եւ անմիջապէս սկսեց վազել։ Շուտով հասնելով՝ նա կնոջը ստիպեց, որ իրեն համար ձուաձեղ եփէ, որովհետև ինքը իշից առաջ է տուն հասել։ Կերաւ, պրծաւ, տեսաւ, որ էշը չի գալիս, վեր կացաւ գընաց նրան որոնելու. գնաց տեսաւ, որ մի սպիտակամօրուս մարդ նստած է՝ ասաց.

—Կայ չկայ, սա իմ էշն է, իմ էշս սպիտակ է։

Գնաց մի քիչ խոտ վերցրեց և տարաւ դրեց նրա առաջը։

—Ի՞նչ ես անում։

Նա թէ՝ դու իմ էշս ես, խոտ եմ տալիս։

Ծերունին վախենալով աւելի մեծ խայտառակութիւնից՝ ցոյց տուեց նրան իր էշերից մինը և ասաց.

—Ահա քո էշը, վեր առ տար։

103

Մոլլան մի մատեան առաւ և սկսեց ժողովարարութիւն անել իրենց գիւղում մզկիթ շինելու։ Երկար ժամանակ նա հաւաքում էր. ամէնքն էլ տալիս էին իրենց լուժանները, բայց մոլլան դեռ չէր էլ մտածում շինութիւնն սկսելու։

Մի անգամ այդ գիւղը մի հարուստ վաճառական եկաւ. մոլլան իսկոյն մատեանն առաւ և գնաց նրա նուէրն խնդրելու այսպիսի աստուածահաճոյ գործի համար։

—Ինչի՞ այդպէս նեղութեամբ հաւաքուի, ասաց հարուստը. ես ինքս յանձն եմ առնում շինել

մզկիթը միմիայն իմ ծախսով։

Բայց հարստի այս առատաձեռնութիւնը դուր չեկաւ մոլլին և նա խոր մտատանջութեան մէջ ընկաւ։

—Ինչի՞ ես այդպէս տանջւում, հարցրեց կինը։

—Մի հարուստ է եկել մեր գիւղը, որ ուզում է իւր ծախսով շինել մզկիթը։

—Աւելի լաւ. մզկիթը կը շինուի առանց քո չարչարանքի։

—Այո, մզկիթը կը շինուի՝ բայց իմ տունս կը քանդուի, պատասխանեց մոլլան։

104

—Ես քեզ ջուրը կը տանեմ, ծարաւ յետ կըբերեմ, ասաց մոլլան իւր հարևանին։

«Ձեռ կարող», պատասխանեց հարևանը։

—Գրաղ գանք, առաջարկեց մոլլան. և երկուսն էլ ուղևորուեցան դէպի գետը և երբ մօտեցան՝ մոլլան ասաց.

«Այս չեղաւ. ուր է մեր վկան, երբ վերադառնանք, ես պիտի ասեմ խմեցիր, իսկ դու կըսկնդես, թէ չես խմել»։

—Ճիշտ է, այդպէս չի լինիլ, գնանք մէկին վկայ բերենք։

Նրանք վերադարձան, որ վկայ վերցնեն իրենց հետ։

Երբ մօտեցան մի մարդու, մոլլան հարցրեց իւր հարևանին.

—Մենք գնացինք գետը։

«Գնացինք»։

—Դու ջուր խմեցիր։

«Չէ»։

—Դէհ ուրեմն տուր բռնած գրաղս։

Հարևանը մտածեց և հասկացաւ, որ մոլլան նրան արդէն ջուրն էր տարել և ծարաւ յետ բերել։

Մոլլան և իւր բարեկամը ճանապարհ էին գնում։ Երբ սկսեց մթնել, նրանք մի գիւղի մօտ մըտան անտառը և որոշեցին այնտեղ գիշերել։

Գիւղից կաթ, բրինձ ճարեցին, կաթնապուր եփեցին և սկսեցին ուտել միևնոյն ամանից։ Մոլլի ընկերը մի քիչ շաբաթ ունէր. մանրեց և ցանեց կաթնապուրի վրայ իւր առաջը։

—Իմ առաջն էլ ցանիր, խընդրեց մոլլան։

«Չի կարելի, պատասխանեց միւսը—փող է տուած, ձրի չէ»։

—Լաւ, պատասխանեց մոլլան, քո քէֆն է, ես էլ իմ մասի վրայ գինի կածեմ։

Այն ժամանակ մոլլի բարեպաշտ

ընկերը շտապեց նրա բաժնի վը-
րայ էլ շաքար ցանելու։

106

Մի աղքատ զարկեց մոլլա
Նասր-էդ-դինի դուռը։

—Ի՞նչ ես ուզում, հարցրեց մոլ-
լան։

—Ցած արի, ասելու բան ու-
նիմ, պատասխանեց աղքատը։

Մոլլան ցած գնաց. աղքատն ա-
սաց՝ «Ողորմութիւն արէք»։

—Վերև արի, ասաց մոլլան։ Երբ
աղքատը բարձրացաւ վերև. Աստ-
ուած տայ, պատասխանեց մոլլան։

—Մոլլա, ասաց աղքատը, ինչ-
ո՞ւ ցածրում եղած ժամանակս
չասեցիր այդ։

—Դու էլ ինչո՞ւ վերև եղած ժա-
մանակս չխնդրեցիր ողորմութիւն։

—

107

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը
մի այգու մօտից անցնելիս տե-
սաւ թէ ինչպէս խնձորները կար-
մրել, հասել էին։ Թուքը կուլ
տալով յետ դարձաւ և մի սան-
դուղ առած եկաւ այդու մօտ.
սանդուղը դէմ դրեց պատին,
բարձրացաւ պատի վրայ, սան-
դուղը վեր քաշեց, դրեց պատի
միւս կողմը և իջաւ այդին։ Բայց
այգեպանը շուտով նկատեց նրան
և մօտեցաւ, գոչելով.

—Ի՞նչ ես անում այստեղ։

—Սանդո՛ւղ առէք, սանդուղ,
գոչեց մոլլան՝ ձևացնելով իբր թէ
չի նկատում այգեպանին։

Սանդուղ ծախելու տե՞ղ է սա,
բարկացաւ այգեպանը։

—Տխմա՛ր, պատասխանեց մոլ-
լան, մի՞թէ չգիտես, որ սանդուղն

այնպիսի մի բան է, որ ամէն տեղ էլ կարելի է ծախել։

108

—Մոլլա Նասր-էդ-դինը կամենում էր անցնել մի առուակով, որ այդ միջոցին սաստիկ հեղեղուել էր։ Վեր էր գնում, վայր գալիս, բայց չէր համարձակւում անցնել։ Այս միջոցին երկու մարդ ևս գալիս են այդ տեղով անցնելու, և հարցնում են մոլլին, թէ այդտեղ ինչ է անում։ Մոլլան պատասխանում է, թէ մարդ է անցկացնում և իր հոգու փրկութեան համար շատ փոքր վարձատրութիւն է վերցնում, միմիայն երկու դուրուշ։ Սրանք խնդրում են իրենց էլ անցկացնել։ Սա բռնում է երկուսի ձեռից, ինքն մէջտեղ կանգնում և մտնում ջուրը, լաւ գիտենալով՝ որ այս դէպքում ամենից

աւելի իր կեանքն է ապահովուած։ Յանկարծ ջուրը քշում է ցածի կողմը կանգնած մարդուն, միւսը ասում է. «Տարաւ, օգնիր, հասիր»։

—Զուզեցի երկու դուրուշը, պատասխանում է մոլլան. թող դըժոխքը գնայ։

109

Մոլլա Նասր-էդ-դինը բրդի փաթոյթի մէջ մի իշի գլուխ է դընում և տանում բազար ծախելու։

Մի գնող ժամանում է. ձեռքից առնում բրդի փաթոյթը և ծանր ու թեթև անում ու ասում։

—Ի՞նչ ծանր է, մոլլա, կարծես մէջը քար ես դրել։

—Քար չէ, իշի գլուխ է, պատասխանում է մոլլան։

—Սակարկողը գնում է, տանում տուն։ Տանը յետ անում բըր-

դի փաթոյթը, տեսնում, որ յի-
բաւի մէջը իշի գլուխ կայ։

Իսկոյն վազում է մոլլի մօտը։

—Անիծուած, այս ինչ բան է, բարկացած գոռում է նա, իշի գլուխը ցոյց տալով։

—Բաս դու որ հարցրիր, թէ քանի ես դրել մէջը, ես քեզ չասացի թէ իշի գլուխ եմ դրել, ինչի՞ առար, սառը պատասխանում է մոլլան։

110

Մոլլա Նասր-էդ-դինը մի մորթէ գտակ էր գնել. ով տեսնում էր՝ հարցնում էր. «Ինչ ես տուել»։ Մոլլան պատասխանում էր, թէ վեց շահի է տուել։ Բայց այնքան հարցրին, որ պատասխանելուց նեղացած մի օր կանչեց բոլորին իւր տան մօտ, թէ բան է ասելու։

Երբ ահագին բազմութիւն հաւաքուեց, մոլլան բարձրացաւ տան կտուրը և ձայն տուեց.

Վեց շահով եմ առել իմ գըտակս, վեց շահով, էլ մէկ-մէկ չը հարցնէք։

111

Մոլլա Նասր-էդ-դինը շատ պարտք ունէր։ Մի շաբաթ օր, երբ ըստ սովորութեան պարտատէրերը պիտի գային պարտքերը պահանջելու, նստած կրակի մօտ հայհոյանքներ էր թափում նրանց հասցէին։ Այս ժամանակ դուռը բացւում է և պարտատէրերը ներս են մտնում։

—Ո՛հ, ես հէնց նոր ձեր մասին էի մտածում, մի՛ անհանգստանաք այլևս, ես միջոց գտայ պարտքերս վճարելու։ Դուք գիտէք, որ գիւղի բոլոր հօտերը մեր դռնովը

են անցնում, ես այս օր կերթամ մի բեռը փուշ կը բերեմ, կը տընկեմ դռանս առջևով, հօտը կը գայ կանցնի, ոչխարները կը դիպչին, բուրդը կը մնայ փշերի վրայ, կինս կը մանէ և շատ լաւ շալ գործել գիտէ, կը գործէ, կը ծախեմ, ձեր առնելիքը կը տամ։

Պարտատէրերը սկսում են ծիծաղել։

—Ի հարկէ կը ծիծաղիք, ասում է մոլլան, ձեր անարդար պահանջն այսպէս լաւ հատուցուում է։

112

Աղուէսը փախցնում է մոլլա Նասր-էդ-դինի հաւը։ Մոլլան չորս ոտանի դառնալով մօտենում է հարևանի հաւաբունին և ատամներով մի հաւ է բռնում և տանում իւր տուն։

—Ի՞նչ ես անում, մոլլա, հարցնում է նրան հարևանը։

«Աղուէս եմ դառել», պատասխանում է մոլլան։

113

Մոլլի բանուորները եկան նրա մօտ և դանդատուեցան, որ շապիկ չունին։

—Գնացէք, իմ արտերումս կանեփ ցանեցէք, հրամայեց մոլլան։

Նրանք ծիծաղեցին։

Ա՛յ խորամանկներ, ինչպէս ուրախանում են, որ ինձնից մի-մի շապիկ պիտի քաշեն, ասաց մոլլան։

114

Մոլլա Նասր-էդ-դինը մի առաջաստաւոր նաւ. նստաւ և անցաւ լիճը. երբ նաւաստին փող պահանջեց՝ ասաց.

«Ինչի՞ տամ, դու խոմ չքշեցիր, քամին քշեց»։

115

Մոլլան սակարկեց հարևանից ձին քառասուն բուբլով, այն պայմանով որ 25 ր. առձեռն վճարէ, իսկ մնացած 15 ր. պարտ մնայ։ Հարևանը համաձայնեց, և մոլլան վճարեց 25 բուբլին։ Մի առ ժամանակից յետոյ հարևանը պահանջեց 15 բուբլին։

«Մի՞թէ պայման չկապեցինք, որ մնացած 15 բուբլին ես քեզ պարտ մնամ, ասաց մոլլան. եթէ վճարեմ՝ էլ ինչպէս պարտք կը մնամ»։

116

Մի անգամ մոլլի ապան դողացան. նա դուրս եկաւ բաղար և բարկացած բղաւեց։

Թող վերադարձնեն ինձնից գողացած ապան, թէ չէ՝ երդւում եմ Ալլահի անունով, որ վատ բան կանեմ։

Գողն այս խօսքերից վախենալով՝ բերում է մոլլի ապան։

—Իսկ ի՞նչ կանէիր գողին, եթէ չը վերադարձնէր, հարցնում է գողը հետաքրքրութեամբ։

—Ոչինչ, նոր ապա կառնէի ինձ համար, պատասխանում է մոլլան։

117

Մոլլա Նասր-էդ-դինը կողովը ձեռին մտաւ մի պարտէզ, և պարտիզպանին այնտեղ չտեսնելով սկսեց կանաչեղէններ քաղել և լեցնել կողովը։ Բայց պարտիզպանը շատ չուշացաւ, նա մահակը ձեռին վազեց մոլլի վրայ և գոչեց.

—Դու ո՞վ ես և ի՞նչպէս ես ըն-

կել այս պարտէզը։

Պարտիզպանի յանկարծակի երևալն այնպէս շուարեցրեց մոլլին, որ սա չկարողացաւ իսկոյն պատասխան տալ, բայց յետոյ շընչեցաց.

—Ես ճանապարհով անցնում էի, սաստիկ քամի բարձրացաւ և ինձ, դժբախտիս, ձգեց այս պարտէզը։

—Լաւ, նկատեց պարտիզպանը, բայց ի՞նչու ես քաղել այս կանանչները։

—Մի տաքանար, բարի պարտիզպան, այլ մտածիր. ինչպէս կարող էի ընդդիմանալ այս սաստիկ քամուն, եթէ կանանչներից չբռնէի. ուրեմն պարզ է, որ երբ քամին ինձ պարտէզը ձգեց, ես պոկոտեցի այդ կանանչները, բռնելով նրանցից։

—Լաւ, վրայ բերեց պարտիզ-

պանը, ենթադրենք իսկ, որ քամին է պոկոտել այս կանանչները, բայց ո՞վ է այդպէս հոգատարութեամբ հաւաքել կողովի մէջ։

Բայց այս հարցն էլ չշփոթեցրեց մոլլին, և նա հանգիստ պատասխանեց.

—Հէնց այդ մասին էի ես մըտածում, միայն դու քո երևալովդ խանգարեցիր ինձ, և ես չըկարողացայ հասկանալ իսկական պատճառը։

Այս բոլոր խօսակցութիւնը այնքան զուարճացրեց պարտիզպանին, որ սա ոչ միայն ձեռք չը բարձրացրեց մոլլի վրայ, այլ և նուիրեց նրան բոլոր հաւաքած կանանչները։

118

Մի անգամ, ձմեռը—ցրտին մոլլան գերեզմանատանը զբօսնելով

4 զինուորուած ձիաւոր տեսաւ, որոնք շտապով գալիս էին դէպի իրեն. հասկանալով որ նրանք աւազակներ են և անշուշտ կըթալանեն իրեն, Մոլլան խսկոյն հանեց շորերը, դրեց մի քարի տակ, մերկ նստաւ այդ քարի վրայ և սկսեց դողալ ցրտից ու վախից։

—Ինչո՞ւ այս ցրտին նստել ես այստեղ մերկ։

—Երէկ ես մեռայ, պատասխանեց Մոլլան, և ինձ թաղեցին այս գերեզմանատանը, բայց այնտեղ —զետնի տակ, այնքան մարդիկ են պառկած, և այնպէս տօթ է, որ ես ստիպուեցայ դուրս գալ փոքր ինչ թարմ օդ ծծելու։

Աւազակները նրան յիմարի տեղ ընդունեցին, և շտապով հեռացան։

—

119

Մոլլան սաստիկ ծերացել էր, ուստի և որդիներն արգիլեցին նրան աշխատել կամ խառնուել տան կառավարութեան։ Մի գիշեր Մոլլան նկատում է, որ իրենց էշը տուն չի եկել, տնեցիներն էլ չեն իմանում և հանգիստ քնել են, սկսում է բարձր ձայնով զոռալ։ Բոլորը զարթնում են, և աւագ որդին ասում է միւսներին.

—Ի դէպ, կարծեմ մեր էշը տուն չէ եկել, ինչ է եղել։

120

—Որքան էլ որ ուշ վերադառնամ տուն, կինս առանց աչք խըփելու նստած սպասում է ինձ, պարծենում էր Մոլլի բարեկամներից մինը նրա մօտ։

«Ես էլ մէկ իմ կնոջս սէրը փորձեմ, մտածում է մոլլան և մի գիշեր սովորութեան հակառակ արշալուսին է վերադառնում տուն։

—Ո՞ւր ես կորել, ասում է մոլլի կինը քնից զարթնելով, քեզ սպասելով հոգիս դուրս եկաւ, ամեն անգամ երբ շունը հաչում էր, ես մտածում էի, թէ ամուսինս է, երբ գամբռը ոռնում էր՝ մտածում էի, թէ մոլլան է...

«Հէ՛, աւելի լաւ է չուշանալ և այսպիսի փորձերի չենթարկուել» մտածեց մոլլան։

121

Մի օր մոլլան մի արագիլ է տեսնում ու ինքն իրեն ասում. «Ինչ անճոռնի թռչուն է, արի մի կերպ շնորհքի բերեմ, խեղճ է»։ Բռնում է արագիլին, քիթը, ոտները կտրտում, մի բարձր տեղ

դնում, վրան նայում և ուրախուրախ ասում. «Այ, հիմա թռչունի նման եղար»։

122

Մոլլա Նասր-էդ-դինը մի անգամ ինչ որ բանի համար անպատուեց իր թաղեցիներին։ Նրանք էլ վճռեցին նրան ծեծել ու գետը ձգել։ Մոլլան առաջուց գուշակելով գլխի գալիքը, տնից փախաւ. թաղեցիներն էլ ընկան յետևից։ Գետի ափին մի հովիւ պատահեցաւ։

—Ո՞ւր ես փախչում, հարցրեց նա մոլլին։

—Ժողովուրդը թագաւոր է ընտրել ինձ, իսկ ես ծեր եմ, չեմ ուզում թագաւորել, հիմայ յետևիցս ընկել են որ համոզեն։

—Դրա համար էլ մարդ փախչի՞, այ թէ ինձ կընտրէին։

—Եթէ ուզում ես, արի շորերս փոխենք, նրանք կը գան քեզ կը բռնեն և իսկոյն թագաւոր կանեն, իսկ յետոյ երբ կը ճանաչեն, կը զղջան, բայց էլ ուշ կը լինի։ Հովիւն համաձայնեց և նրանք շորերը փոխեցին. մոլլան հովուի շորեր հագած, ոչխարները քաղաք քշեց, իսկ հովիւը մնաց իւր տեղում։ Մոլլի թաղեցիները վրայ վազեցին, հովուին բռնեցին, ու ջուրը նետեցին։

Հետևալ օրը մոլլան շուկայում ծախում էր հովուի ոչխարները։ Մոլլին խեղդուած համարողները նրան կենդանի տեսնելով, զարմանքն էակ կարծեցին ու աւելի ևս յարգանք ու պատիւ տուին։

123

Մոլլան կէս գիշերին կնոջն ասաց

—Այ կնիկ, վեր կաց, լաւ միջոց գտայ հարստանալու։

—Ի՞նչպէս, ի՞նչ կերպով։

—Հալուա, հալուա շինելով։

—Ախր հալուին շաքար կամ մեղր է հարկաւոր, մենք չունինք։

—Փառք Աստծու, խոմ ալիւր ունինք, շաքար ու մեղր հարկաւոր չէ, առանց դրանց էլ կարող եմ հալուան ծախել։

—Քաղցր որ չլինի, ո՞վ կառնէ, սխալմամբ մի անգամ գնողը միւս անգամ չի գնիլ։

—Աշխարհումս այնքան յիմարներ կան, որ եթէ նրանք մի-մի անգամ գնեն՝ ես կը հարստանամ։

124

Մէկ անգամ մոլլա Նասր-էդ-դինը անտառից փայտ էր բերում։ Ձեռի տակ էշը խիստ յոգնեց և չնայելով մոլլի հարուածներին,

տեղից չէր շարժւում։ Անցորդի մէկը խորհուրդ տուեց նրան նաշադիր դնել իշու պոչի տակ... մոլլան կատարեց նրա խորհուրդը և էշը նաշադիրի կսկծից, սկսեց առաջ վազել։

Հիմայ մոլլան չկարողացաւ իշուն հասնել։ «Արի՛ ինձ վրայ էլ փորձեմ», ասաց ու իրեն էլ նաշադիր դրեց։

Նաշադիրն այնպէս սաստիկ աղդեց, որ մոլլան վեր-վեր ընկնելով, վազեց իշուն հասաւ. յետևը թողեց ու անցաւ։ Տուն որ հասաւ, կնոջն ասաց.

—Կնիկ, էշը բռնիր, բեռը վայր բեր, յետևիցս գալիս է, իսկ ես վազեմ, մինչև որ նաշադիրը թուլանայ, շատ թունդ է։

125

Մոլլան քանի անգամ որ Ջիգար

տուն տարաւ, կինը սիրողին ուտեցրեց և մարդուն բաժին չհանեց։ Սա ճարը կտրած մի օր հարցրեց.

—Այ կին, բերած Ջիգարներս ո՞վ է ուտում։

—Ո՞վ պէտք է ուտէ, ուրուրն է տանում, ասաց կինը։

Մոլլան կացինը վերցրեց դրեց պահարանն ու կողպեց։

—Ի՞նչ ես անում, մարդ, կացինն ինչո՞ւ ես պահում։

—Ի՞նչ անեմ, այ կին, երկու կոպէկանոց Ջիգարին աչք դնող ուրուրը, յիսուն կոպէկանոց կացինը չի՞ տանիլ։

126

Մի օր Մոլլան շուկայից մի Ջիգար էր տուն տանում։ Յանկարծ ագռաւը վրայ պրծաւ, խլեց Ջիգարն ու թռաւ։ Մոլլան սովորութիւն չունէր բանի յե-

տևից ընկնելու։ Այդ միջոցին մի մարդ պատահեց, որ նոյնպէս ջիգար էր տանում։ Հիմա էլ ինքը վրայ վազեց խլեց ու փախաւ, թաղնուեց ժտիկ ժայռի մէջ։

—Մոլլա, ինչի փախցրիր ջիգարս, հարցրեց զարմացած մարդը։

—Ուզեցի փորձել, որ տեսնեմ թէ ինքս էլ կարող եմ ագռաւի պէս փախցնել ջիգարը, ասաց մեր մոլլան։

127

Հին ժամանակ սովորութիւն էր որ թագաւորներին հպատակներն ընծայ էին տանում։ Մի անգամ մի դերվիշ Լանգ-Թեմուրին ընծայ բերեց մի կողով ամենաընտիր պտուղներ։ Թագաւորն ընդունեց և Նասր-էդ-դինին հրամայեց պալատը տանել։ Մոլլան ժտածեց որ թագաւորը չի կարող

բոլոր բերուած ընծաները միտքը պահել, ուստի և պտուղները մէկը միւսի յետևից կերաւ։

Մէկ օր թագաւորը Նասր-էդ-դինից պտուղները պահանջեց։ Մոլլան սարսափահար եղաւ և խոստովանուեց, որ կերել է։

Լանգ-Թեմուրը դաժան մարդ լինելով՝ հրամայեց նրան կախել, որպէս զի ուրիշներին օրինակ լինի։ Մոլլի աղաչանք-պաղատանքը զուր անցաւ. վերջապէս ոտքերն ընկաւ, և ասաց. Իմաստուն թագաւոր, եթէ ինձ կախել ես տալիս ուրիշներին օրինակ տալու համար՝ քո պալատում աւելի շատ ուտողներ կան, նրանց կախիր, ես նրանցով կը խրատուեմ։

Թագաւորը ծիծաղեց և ներեց մոլլին։

—

128

Մոլլա Նասր-էդ-դինը աղօթելիս միշտ ասում էր. «Աստուած իմ, ինձ հազար ոսկի տուր, և եթէ մէկ հատ պակաս լինի՝ չեմ վերցնի։ Մոլլան մի հրէայ դրացի ունէր, որ շատ անգամ լսել էր մոլլի այս խօսքերը։ Մի օր սա կամեցաւ կոտրել մոլլին, և մի քսակի մէջ ինն հարիւր ինանասուն և ինն ոսկի ածելով տարաւ մոլլի երդիկը և երբ նա աղօթելով միևնոյն խօսքերը կրկնում էր, վայր ձգեց քսակը մոլլայի առաջ։ Սա գժուած վերցրեց քսակը և ոսկիները համարելով երբ տեսաւ՝ որ մէկ հատ պակաս է, ասաց. «Ոչինչ, այսքան տուողը մէկ հատն էլ կըտայ» և պահեց քսակը։ Հրէան, որ հերթիկից դիտում էր, իսկոյն ներս վազեց և հեքնական

ձայնով ասաց. «Հապա անում էիր մէկ հատ պակաս լինի չեմ վերցնի, այդ ինչպէս եղաւ որ վերցրիր, դէս տուր, դէս։

—Ի՞նչը, հարցրեց մոլլան։

—Ոսկիները, ես քեզ փորձելու համար հերթիկից վայր ձգեցի։

—Գժուե՞լ ես, ինչ է, ասաց մոլլան բարկանալով, ես Աստծուց էի խնդրում, նա էլ ինձ տուեց, դու ինչացո՞ւ ես այստեղ։

—Դէհ որ այդպէս է՝ գնանք դատարան, առաջարկեց հրէան։

—Գնանք, պատասխանեց մոլլան, բայց ես հիմայ հարուստ մարդ եմ, դատարան չեմ գնայ, մինչև որ տակս մի լաւ ջորի, մէջքիս էլ մի լաւ մուշտակ չունենամ։ Հրէան գնում մի ջորի և մի մուշտակ է բերում։ Մոլլան հագնում է մուշտակը, փառաւորապէս բազմում ջորու վրայ և

հրէայի հետ գնում դատարան։

«Այս մոլլ ն ոսկիներս առել, չի վերադարձնում», գանգատուեց հրէան։

Դատաւորը նայում է մոլլի երեսին.

—Ես Աստծուց հազար ոսկի խնդրեցի, Աստուած էլ տուեց, հաժարեցի, տեսայ, որ մէկը պակաս է, ոչինչ, ասի, այսքան տուողը մէկն էլ կըտայ. այս հրէան այդ տեսաւ, և իմս է ասաց. այս աներեսի սովորութիւնն է դա, հիմայ հեծած ջորիս և հագած մուշտակս էլ իմս է կասէ։

—Հապա ո՞ւմն է, գոչեց հրէան։

«Ահ, գաբշելի՜ հրէայ, ինչ որ տեսնի, կը կամենայ խլել, ասացին բազմականները և հրէային թակելով դուրս վռնտեցին։ Մոլլան ինքնագոհ նստաւ ջորին և վերադարձաւ տուն, ասելով.

«Էս էլ մնացած մէկ ոսկին»։

129

Մոլլա Նասր-էդ-դինը տեսաւ, որ չորս մոթալ ջրի երեսին լող էին տալիս, իսկոյն ընկաւ գետը, մինը աջ ձեռքով բռնեց, միւսը ձախ, երրորդն էլ ատամներով կանգնեցրեց։

Այս միջոցին տեսաւ որ մի խեղճ մարդ չորրորդ մոթալը դուրս է քաշում, մոթալի բոջաղը բերնին բդաւեց.

—Կարդմունքս վկայ որ դրա կիսին էլ ընկեր եմ։

130

Մոլլա Նասր-էդ-դինի կովը սատկելու վրայ էր, մոլլան վրայ հասաւ մոթեց։ Կանչեց գիւղացիներին, որ գան միսն առնեն, բայց ոչ ոք չեկաւ, որովհետև

գիտէին նրա հիւանդ լինելը։

Մոլլան նայեց շուրջը, տեսաւ որ շները շրջապատել են և բերանները բացած նայում են մրսին, իսկ մի կարմիր մեծ շուն աւելի է յառաջացել և մոտենում է։

«Ի՞նչ, ուզում ես երաշխաւորել, որ այս շները իրենց պարտքը կը վճարեն, եթէ միսը նրանց բաժանեմ, ասաց մոլլան՝ դիմելով կարմիր շանը։

Շունը շարունակեց մոտենալ։

—Լաւ, դու որ երաշխաւորում ես, ես էլ կը հաւատամ, միայն տես, շատ չուշացնեն, ես էլ ընտանիքի տէր եմ, հազար ու մէկ պէտք ունիմ։

Շունը դարձեալ մոտեցաց, և մոլլան գոհ սրտով բաժանեց միսը շներին, կրկնապատիկը տալով կարմիր շանը։

Անցաւ մի երկու շաբաթ, մոլ-

լան տեսաւ, որ ոչ մի շուն ոչինչ չի բերում, գնաց կարմիր շան մօտ և բոլորի պարտքը նրանից պահանջեց։

Շունն սկսեց մոտենալ։—Ժամանակ, մամանակ չը գիտեմ. անգին ընտանիքի տէր եմ, էլ չեմ կարող համբերել, շուտ արա, փողերս տուր, բարկացաւ մոլլան։

Շունն իսկոյն սկսեց հաչել։

—Ի՞նչպէս, գոչեց մոլլան, բաւական չէ, որ փողերս չես տալիս, դեռ համարձակւում էլ ես բղաւել վրաս, ասաց մոլլան, շան պոչից բռնեց ու սկսեց փայտով թակել։

Շունը հարուածներն ուտելով առաջի ոտներով սկսեց ճանկռտել աւերակ տան պատը. յանկարծ մի քար վայր ընկաւ և տակից սկսեց ոսկի վայր թափուել։

—Այդպէ՞ս կտաս, ասաց մոլլան

տեսնելով ոսկին. քո ցեղդ այն
ցեղը չէ, որ առանց ծեծ ուտելու
պարտքը վճարէ, աւելացրեց նա,
շան պոչը բաց թողնելով։

131

Մի անգամ մի մոլլա սաստիկ
վիրաւորում է մոլլա Նասր-էդ-
դինին։ Վերջինս այդ օրուանից
էլ հանգիստ չի ունենում, գիշեր
ցերեկ մտածում է, թէ ինչպէս
վրէժխնդիր լինի։ Կինը տեսնելով
նրա մտատանջութիւնը, օգնու-
թեան է հասնում։ «Մի այդքան
անհանգստանար, ես նրա հախիցը
կը գամ, ասում է նա։ Դու գնա
մի մեծ արկղ առ, բեր տուն, ես
էլ կերթամ նրան կը հրապուրեմ,
կը բերեմ այստեղ. երբ ես դուռը
կը փակեմ, դու մի քիչ յետոյ եկ
և դուռը ծեծիր, ես նրան կը
մտցնեմ այս արկղը. Յետոյ դու

գիտես, ինչ ուզում ես արա»։

Մոլլան հաւանում է կնոջ ա-
ռաջարկութեանը և գնում մի մեծ,
սև արկղ է առնում բերում տուն։
Կինն էլ գնում, անցնում դուռ-
նում է վերոյիշեալ մոլլի դռնից,
նրան աչքով ունքով անում։ Մոլ-
լան հրապուրւում է և հետևում
կնոջը, գալիս մտնում մոլլա Նասր-
էդ-դինի տունը։

Բայց հապիւ նա սկսում է իւր
սիրախօսութիւնը, երբ մոլլա
Նասր-էդ-դինը ծեծում է դուռը։

—Վայ, գոչում է կինը, այս ինչ
կրակի մէջ ընկանք, կայ չկայ
սա իմ ամուսինն է, կը գայ եր-
կուսիս էլ այստեղ կը սպանի, ի
սէր Ալլահի, մտիր այս արկղի
մէջ, պահ մտիր, մինչև որ խա-
փեմ, մի տեղ ուղարկեմ։

Սիրահար մոլլան ճարահատուած
մտնում է արկղը, կինը բաց է

անում դուռը և մոլլա Նասր-էդ-դինը կրակ զարձած յարձակւում է կնոջ վրայ, թէ ինչ էիր անում, որ այսքան ուշ բացիր դուռը։

—Ոչինչ, պատասխանում է կինը, արկղս էի կարգի դնում, մինչև շորերս դարսեցի, ուշացայ։

—Դու քո խելքդ ու միտքդ այդ արկղին ես տուել, ամբողջ օրը նրա առաջն ես անցկացնում, պէտք է, որ ես այդ տանեմ, կորցնեմ, ասում է մոլլան, շալակում արկղը և տանում գետը ձգում։

132

Մոլլա Նասր-էդ-դինը մի նապաստակ էր բռնել և ձգել պարկի մէջ, բերել տուն։ Դուրս գալով հրապարակ, նա սկսեց պարծիլ, թէ մի զարմանալի մշահաւ է բռնել։ Շատերը ցանկացան տեսնել և նրա հետ եկան տուն։

Բայց մինչ այս՝ մոլլի կինը հետաքրքրուելով թէ ինչ կայ պարկի մէջ, բացել էր այն և նապաստակը փախել էր։ Կամենալով անհնկատելի դարձնել իւր յանցանքը մոլլից, նա նապաստակի փոխարէն մի խան էր դրել պարկի մէջ և բերանը պինդ կապել։

Մոլլան զգուշութեամբ բացեց պարկի բերանը և նապաստակի փոխարէն խանը գտնելով՝ չզուարեց, այլ դարձաւ և հանդիսաւոր կերպով ասաց.

«Ես ուզում էի ձեզ սովորեցնել, որ այսպիսի չորս խանը մի կոտ է կազմում, այժմ կարող էք գնալ ձեր գործին»։

133

Մոլլա Նասր-էդ-դինը գերանդին ձեռին մտել է գետը, կանգնել մէջտեղը, թրել ձեռի սրոցին

և սրել գերանդին։ Ընկերներն այս տեսնելով հարցրել են թէ մոլլա, ջրի մէջ կանգնած ես, ինչի՞ սրոցը դետի մէջ չես թաթախում։

—Չէ՛, ուրիշի միննաթը չեմ ուզում քաշի, պատասխանել է մոլլան։

134

Մի մրգավաճառի խանութում մոլլան մի ամանով մեղր է տեսնում, վերցնում է մի կտոր հաց և ձևացնելով իբր թէ թաթախում է մեղրի մէջ, սկսում է ախորժակով ուտել։ Ուտում վերջացնում է չոր հացի կտորը, սբրում է բերանը և կամենում է հեռանալ, բայց խանութպանը բռնում է նրա օձիքից և փող պահանջում։

—Ինչի՞ համար, հարցնում է նա։

Ի՞նչպէս թէ ինչի համար, կերածդ մեղրի։

—Բայց չէ՞ որ ես քո մեղրին ձեռք չտուի։

—Միևնոյն է, դու այնպիսի բաւականութիւն ստացար, ինչպիսին կըստանայիր՝ եթէ իսկապէս ուտէիր։

Սրանք սկսում են վիճել, մարդիկ հաւաքւում են սրանց գըլխին և քաշ տալիս դատու ժամ։ Դատին վճռում է յօգուտ խանութպանին։

—Ի՞նչ արած, ասում է մոլլան, պէտք է վճարել, առ։

Խանութպանը մեկնում է ձեռքը և մոլլան մատները միմեանց քսելով ձևացնում է իբր փող է համարում։

—Ահա քեզ մէկ, երկու, երեք…

—Ի՞նչ ես անում, մոլլա, ո՞ւր է փողը…

—Այն տեսակ մեղրին, որ քեզ մօտ կերայ՝ այս տեսակի փողով կը վճարեն, պատասխանում է մոլլան։

135

Մի անգամ հարևանները գալիս մոլլից յարդ են ուզում։ Մոլլան պատասխանում է, թէ չունիմ, բայց նկատում է, որ հարևանները չեն հաւատում։ Նրանց գնալուց յետոյ մոլլան թաք է կենում և կնոջն ուղարկում է այդ միևնոյն հարևաններին ասելու, թէ յարդանոցը քանդուեց և մոլլան յարդի տակը մնաց, ի սէր Աստուծոյ, եկէք, դուրս հանեցէք։ Հարևանները գալիս տեսնում են, որ յարդանոցը կանգուն և բոլորովին դատարկ է։

—Հիմայ հաւատացի՞ք, ասում է մոլլան՝ մի անկիւնից դուրս գալով,

որ ես յարդ չունեմ, դէհ հիմայ գընացէք, և այլևս մի բաժբասէք։

136

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը անտառում զբօսնելիս տեսաւ, որ մի կին կախուել էր մի ծառից և խեղդուել։ Մեր մոլլան իսկոյն վազեց տուն, մի սղոց վերցրեց և եկաւ սկսեց սղոցել այդ ծառի ճիւղերից մինը։ Այդ միջոցին նրա ծանօթներից մինն անցաւ այդ տեղով և հարցրեց.

—Մոլլա, ինչի՞ ես այդ ճիւղը կտրում։

—Նրա համար որ, պատասխանում է մոլլան, ինչպէս երևում է, կանայք սիրում են կախուիլ այս տեսակ ծառերից։ Ես էլ ուզում եմ տանել պատուաստել այս ճիւղը իմ այգու ծառերից մինի վրայ, ով գիտէ, գուցէ մի երջանիկ բո

էլ իմ կինը կախուի նրանից ու ինձ հանգիստ պարգևէ։

137

Մոլլա Նասր-էդ-դինի կինը շարունակ տրտնջում էր և ասում ամուսնուն.

—Ո՞րքան դժբախտ եմ, մէկ չեղաւ որ մի օր ջրի ափին, կանաչ խոտի վրայ ժամանակ անցկացնէի։

Այս տրտունջներից ձանձրացած մոլլան գնաց մի գիրկ կանաչ խոտ քաղեց, բերից սփռեց իրենց տան գաւթում, վազեց գըրկեց կնոջը, տարաւ նստեցրեց խոտի վրայ և ջրով լի մի ափսէ դնելով առաջը՝ ասաց.

—Ահա, այ չտես կին, ջրի ափին, կանաչ խոտի վրայ ես, ինչքան կուզես զուարճացիր, որ յետոյ էլ չը տրտնջաս, թէ ջրի ափին, կանաչ խոտի վրայ երբէք չես զուարճացել։

138

Լանկ-Թեմուրը շատ էր ծառայեցրել իրեն մոլլա Նասր-էդ-դինին և շատ անգամ հետը կատակներ էր անում, այսպէս, օրինակ, բերերն ու միրուքը քաշում էր և այլն։ Մի անգամ էլ երբ բազմաթիւ նշանաւոր մարդիկ էին հաւաքուել Լանկ-Թեկուրի ծոտ, վերջինս չբաւականանալով սովորական կատակներով՝ թքեց նրա երեսին։

Երբ հրաւիրուածները ցրուեցան, ճանապարհին մի քանիսը կշտամբեցին մոլլին՝ ասելով.

—Ձե՞ս ամաչում, մոլլա, որ այդքան ստորանում ես, և Լանկ-Թեմուրի այդպիսի անպատուութիւնները տանում։

—Այդտեղ ինչ ամաչելու բան կայ, պատասխանեց մոլլան, եթէ ձկնորսները մի երկու չնչին ձուկ բռնելու յուսով ոտից մինչև գլուխ ջրումը կը թրջուին, մի՞թէ պարսաւանքի արժանի կը լինիմ ես, եթէ որ հզօր Լանկ-Թեմուրին ուռկանիս մէջ ձգելու համար երեսս մի քիչ թրջեմ։

139

Մոլլա Նասր-էդ-դինը մի աղջիկ ունէր, որ ոչ միայն տգեղ, այլ և շատ վատ բնաւորութեան տէր էր։ Ինչպէս եղաւ՝ մոլլի մի թշնամին, ուրիշի խորհրդով, եկաւ աղջկան ուզեց։ Մոլլան էլ մեծ ուրախութեամբ տուեց։ Այս որ իմացան ծանօթները՝ հարցրին.

—Մոլլա, չէ՞ որ այդ մարդը քո ոխերիմ թշնամին է, ինչի՞ ես աղջիկդ տալիս նրան։

155

Մոլլան ժպտաց ու ասաց. Հէնց նրա համար եմ տալիս, որ գոնէ այսպիսով կարողանամ նրանից վրէժս առնել։

140

Մոլլա Նասր-էդ-դինը մի կտոր շատ հին ու չորացած սապոն ունէր։ Մի օր հարևանը դեղի համար մի փոքրիկ կտոր խնդրեց։

—Չեմ կարող տալ, ասաց մոլլան։

—Ինչո՞ւ, հարցրեց հարևանը։

—Նրա համար որ այդ սապոնը ես հնացրել եմ չգործածելով, և ուրիշներին չտալով, եթէ այդպէս չվարուէի, այժմ ոչ մի կտոր էլ չէի ունենալ, ոչ հնից և ոչ նորից։

141

Մոլլա Նասր-էդ-դինը ամէն

անգամ շուկայ դուրս գալիս ինքն իրեն գովում էր և ասում. «Ես այնքան շնորհք ունիմ, որ իշին անգամ գրել կարդալ ու խօսել կարող եմ սովորեցնել»։ Այդ ինքնագովութեան լուրը Լանկ-Թեմուրի ականջն էլ հասաւ։ Սա կանչեց մոլլին և ասաց. «Լսել եմ, որ դու քո շնորհքների մասին շատ ես խօսում. մի ցոյց տուր տեսնեմ, թէ ինչպէս դու իշին գրել կարդալ և խօսել կը սովորեցնես. ընտրիր իմ էշերից որը ուզում ես՝ և սովորացրու»։

—Տէր, պատասխանեց մոլլան, դրա համար երկար ժամանակ է պէտք և աշխատանքի լաւ վարձատրութիւն։

—Լաւ, ասաց Լանկ-Թեմուրը, ես կտամ քեզ քսան տարի ժամանակ և երկու հարիւր թուման կանխավճար, եթէ խօսքդ կատարեցիր՝ մեծ ընծաներ կստանաս, իսկ եթէ չէ՝ գլուխդ թոցնել կը տամ։

Մոլլան ուրախութեամբ համաձայնեց պայմանին, առաւ երկու հարիւր թուման կանխավճարը և ընտրելով ամենալաւ էշը՝ քշեց եկաւ տուն։ Էշը կապեց բակում և փողը յանձնեց կնոջը՝ ասելով. «Հիմայ այլևս մի վախենար, այսուհետև կարող ենք թշնամու հետ թշնամութիւն, բարեկամի հետ բարեկամութիւն անել, ունենալով այս գումարը և այս հրաշալի էշը»։

Սակայն կինը, որ արդէն լսել էր ծանր պայմանի մասին, պատասխանեց.

«Ի՞նչ եմ անում այդ փողը ու էշը, որ գլխիդ արիւնով են գնուած։ Աստծուն էլ է յայտնի՝ մարդուն էլ որ անկարելի է իշին գը-

ըել կարդալ սովորեցնել, հետևապէս և պայմանաժամը կըգայ, և դու խօսքդ կատարած չես լինի, գլուխդ կըտաս»։

—Ի՞նչ ես դարդ անում, ա՛յ կին, մխիթարեց մոլլան, մինչև պայմանաժամը հասնի, կամ էշը կը սատկի, կամ իշատէրը [1])։

142

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը սաստիկ վիրաւորեց իւր համապիւղացիներին։ Եւ սրանք, նրանից վրէժ առնելու համար նրա տունը հասարակաց արտաքնոց դարձրին։ Այս միջոցին մոլլան տանը չէր, այլ գնացել էր Դերբենտ։

---

*) Թերևս այս առակից է առաջացել՝ «կամ էշը կը սատկի կամ իշատէրը» դարձուածքը։

Մոլլան վերադառնալով գտաւ իւր տան մէջ բաւական մեծ քանակութեան աղտեղութիւններ։ Ո՛չ մի դժգոհութիւն ցոյց չտալով, նա հաւաքեց այս աղտեղութիւնները, չորացրեց, մանրեց, յետոյ ածեց տոպրակների մէջ, իշերին բարձեց և ուղևորուեց ժողովրդական քաղաքը։

Այստեղ յայտարարեց, որ մըկընդեղ է բերել ծախելու։ Իսկոյն ամեն կողմից վրա թափուեցան և մի երկու օրում բոլորը գնեցին, և այն էլ շատ թանդ գնով. մի մատնոց փոշին քսան կոպէկի։ Մոլլան բարձեց իշերը արծաթի փողերով, վերադարձաւ գիւղ և իւր խորին շնորհակալութիւնը յայտնեց ժողովրդին, որ իրեն միջոց էր տուել հարստանալու։

—Ի՞նչպէս, հարցնում է ժողո-

վուրդը, միանգամայն զարմացած։

Մոլլա Նասր-էդ-դինը պատմում է, թէ աղտեղութիւնը տարաւ քաղաք և ծախեց, բայց թէ ինչպէս, իրը մկնդեղ, այդ մասին ոչինչ չի ասում։

Գիւղացիներն սկսում են մաքրել իրենց արտաքնոցները, բարձել իշերի վրայ և տանել քաղաք ծախելու։ Այս ժամանակ եկաւ մոլլի մօտ քաղաքից ուղարկուած մի մարդ և հարցրեց, թէ ինչպէս պէտք է գործ ածել մկնդեղը։

Մոլլան պատասխանեց. «Մուկը կը բռնէք և մկնդեղը աչքերը կածէք»։

Մարդը վերադարձաւ քաղաք և հաղորդեց մոլլայի բացատրութիւնը։ Գնողները սաստիկ բարկացան.

«Էլ ինչի՞ նեղութիւն քաշենք՝ մուկը բռնելուց յետոյ դեղը նրա աչքերն ածելու, էն է տեղն ու տեղը կսպանենք»։

Բայց արդէն ուշ էր, մկնդեղի փողերը արուած վերջացած էին։

Հէնց այս միջոցին մոլլի համագիւղացիները մտան քաղաք և առաջարկեցին գնել մարդկային կղկղանք։

Քաղաքացիք սաստիկ զայրացած յարձակուեցան նրանց վրայ և մի լաւ «զխկեցին»։

Մէջք ու կուռ կոտրած գիւղացիները յետ դարձան գիւղ, ընկան մոլլի տան վրայ, և տանը չգտնելով, իրենց բարկութիւնը նրա խեղճ մօր վրայ թափեցին՝ խփեցին սպանեցին նրան։

Մոլլա Նասր-էդ-դինը վերցրեց իւր մօր դիակը և հեռացաւ գիւղից։ Երեք օր, երեք գիշեր գնաց, հասաւ մի ջրաղաց։ Ներս մտնե-

լուց առաջ տարաւ դիակը գետի ափը դրեց այնպէս, որ հեռուից նայողին թւում էր թէ կենդանի պառաւ է։

Մոլլան ներս մտաւ ջրաղաց, տեսաւ ջրաղացպանը իւր ընտանիքի հետ նստած հաց է ուտում։ Նրան էլ հրաւիրեցին ճաշելու։ Մոլլան նստաւ և սկսեց երկու երկու պատառ վերցնել, մինն ուտել և միւսը գրպանը դնել։ Զարմացած ջրաղացպանը հարցրեց, թէ նա ինչի՞ է գրպանը դնում։ Մոլլա Նասր-էդ-դինը պատասխանեց, թէ պահում է իւր մօր համար, որ սպասում է իրան ջրաղացի դրանը։ Ջրաղացպանը հրամայեց աղջկան՝ կանչել նրան։ Նա գնաց և վերադարձաւ ասելով՝ թէ շատ կանչեցի՝ չեկաւ։

—Նա շատ ամաչկոտ է, ասաց մոլլա Նասր-էդ-դինը։

—Գնա՛ քաշ տուր բերը, ասաց ջրաղացպանը աղջկան։

Աղջիկը գնաց դիակի մօտ և սկսեց նորից հրաւիրել։ Բայց երբ չշարժուեց, քաշեց նրան։ Դիակը կորցրեց իւր հաւասարակշռութիւնը և ընկաւ գետը։

Մոլլան այս որ իմացաւ, սկսեց լալ, կոծել ասելով, թէ խեղդեցին իւր մօրը։ Նրան հանգստացնելու համար ջրաղացպանը տուեց նրան իւր գեղեցիկ աղջիկը, մեծ հարստութիւն, թանգագին ընծաներ։

Մոլլան այս բոլորն առած վերադարձաւ գիւղ և ասաց գիւղացիներին.

—Շնորհակալ եմ ձեզանից, որ սպանեցիք իմ պառաւ մօրը։

—Ինչո՞ւ, հարցնում են գիւղացիներն։

—Նրա համար որ ես տարայ

նրա դիակը քաղաք և փոխեցի այս գեղեցիկ աղջկայ հետ։ Այնտեղ ուրախութեամբ փոխում են և դեռ տեսէք, որքան էլ վրան են տալիս։ Եւ նա ցոյց տուեց ջրաղացպանից ստացածները։

Գիւղացիներն սկսեցին սպանել ովը իւր մօրը, որը հօրաքրոջը, որն էլ իւր պառաւ կնոջը, դրին էշերի վրայ, գնացին քաղաք ծախելու։

Այստեղ ձայները ձգեցին և ամէն անցնողի առաջարկեցին փոխանակել պառաւի դիակը մատաղահաս աղջկայ հետ և այն էլ օժիտով։ Քաղաքացիները նրանց խելագարների տեղ դրին և մահակներով դուրս արին։

Գիւղացիները չդիտենալով թէ ինչպէս վրէժխնդիր լինին մոլլա Նասր-էդ-դինից նրա խաբելու համար, վառեցին նրա տունը։

Մոլլա Նասր-էդ-դինը հաւաքեց ածուխները, իւր տան մնացորդը, լցրեց տոպրակները, բարձեց իշերին և գնաց քաղաք։ Բայց տոպրակները ածուխով լցնելուց առաջ, մի քանի արծաթեայ ապասիներ ձգեց տոպրակների տակը։

Քաղաքում նա գնաց գիշերելու մի հարուստ հրէայի մօտ։ Առաւօտեան մոլլան վեր կացաւ, նայեց իւր տոպրակներին, սկսեց վեր վեր ցատկել, լալ ու բղաւել, ասելով, որ իւր տոպրակներն արծաթով էին լցուած և որ գիշերն արծաթը դատարկել ու ածուխ են ածել։ Յետոյ քաշ տուեց նա հրէային դատու մօտ։

Դատին վճռեց. եթէ մոլլա Նասը-էդ-դինը ճիշտ է ասում, պարկերի տակ մնացած կըլինին գոնէ միքանի դրամներ, որովհետև գողերը շտապելով, չեն

կարողանում բոլորը վերցնել, այդ պատճառով էլ, որոշեց անձամբ գնալ հրէայի տունը քննել պարկերը։ Ղատին հրամայեց դատարկել պարկերը։ Ածուխը թափեցին և նրանց տակից դուրս թափեցին և՛ միքանի ապասիներ։

Ղատին մոլլա Նասր-էդ-դինի պահանջը արդարացի գտաւ և հրամայեց հրէային լցնել պարկերը արծաթով։

Մոլլա Նասր-էդ-դինը վերադարձաւ գիւղ արծաթով լի պարկերով և սկսեց շնորհակալ լինել գիւղացիներից՝ որ այրեցին իւր տունը։

—Ինչու՞, հարցնում են նրանք։

—Դուք վառեցիք իմ տունը, ես հաւաքեցի նրա ածուխը և տարայ քաղաք ծախելու։ Այնտեղ մի պարկ ածուխին մի պարկ ապասի են տալիս, միայն պէտք է ասել, որ ածուխը վառած տանից է։

Գիւղացիներն սկսեցին վառել իրենց տներն և այսպիսով վառեցին ամբողջ գիւղը։ Ստացած ածուխը բարձեցին իշերի վրայ և տարան քաղաք ծախելու։ Քաղաքացիները տեսնելով որ նրանք իրենց ածուխի համար առասպելական գներ են ուզում, իհարկէ, չգնեցին, և դեռ, նրանց խելագար համարելով, շները վրաներն արձակեցին։

Գիւղացիները գիւղ վերադարձան և խորհուրդ արին, թէ ինչպիսի պատժի ենթարկեն մոլլա Նասր-էդ-դինին։ Միքանիսն ասում էին թէ պէտք է նրան ըսպանել, միւսները՝ թէ պէտք է կախել, այլք՝ թէ պէտք է քարկոծ առնել, իսկ մեծ մասը՝ թէ պէտք է նրան ծովը ձգել, որ երկրիս վրայ նրա հետքն էլ չմնայ։

Այս իմանալով մոլլա Նասր-էդ-դինը, վազեց դէպի ծովը։ Ճանապարհին նա տեսաւ մի հովիւ՝ որ ուրախ արածացնում էր մի ահագին հօտ։

—Աստուած բարաքեաթ տայ քու ոչխարին ու հօտին, ասաց մոլլան։

—Ողջ լինիս, պատասխանեց հովիւը։ Ո՞ւր ես այդպէս շտապում, մոլլա Նասր-էդ-դին։

—Գիւղի բոլոր բնակիչները յետևս են ընկել, ասում է մոլլան, որ ինձ ստիպեն իրենց տանուտէր դառնալ, ես էլ, պարզ է, չեմ ուզում և փախչում եմ։

—Ինչի՞ չես ուզում։

—Այնպէս. ես ինձ չեմ կարողանում կառավարել, ժողովրդին ի՞նչպէս կառավարեմ... Սակայն ժամանակ է որ ես բաժանուեմ քեզնից, ահա ուր է ուր չէ կգան։

—Բայց ափսոս, որ ես քո տեղը չեմ, ես սիրով կը համաձայնէի տանուտէր լինել։

—Հաստատ, հարցնում է մոլլա Նասր-էդ-դինը։

—Այո, պատասխանում է հովիւը։

—Եթէ դու այդքան ցանկանում ես տանուտէր լինել, հագիր շորերս, վազիր դէպի ծով և կանգնիր ափին։ Նրանք քո ետևից կը վազեն, քեզ կը բռնեն և կը տանեն, տանուտէր կը դարձնեն։

Հովիւը շուտով հագաւ մոլլա Նասր-էդ-դինի շորերը, վազեց դէպի ծովը և կանգնեց ափին։ Գիւղացիները հասան նրան և ձգեցին ծովը։

Երեք օրից յետոյ մոլլա Նասր-էդ-դինը վերադառնում է գիւղ, քշելով 10,000 գլուխ ոչխար։ Գիւղացիները սաստիկ վախենա-

լով սկզբում կամենում էին անտառ փախչել, կարծելով թէ մոլլան խորթլամիշ է եղել, բայց յետոյ սիրտ առան, մօտեցան և հարցրին, թէ նրան ի՞նչ է պատահել։

Մոլլա Նասր-էդ-դինը շնորհակալ եղաւ նրանցից, որ իրեն ծովը ձգեցին։ «Այժմ ես գիտեմ, թէ որտեղ կարելի է ոչխարներ գտնել, աւելացրեց նա, այնտեղ, ծովի յատակում, անթիւ անհամար ոչխարներ կան. բայց ափսոս, որ ես միայնակ լինելով աւելի շատ չկարողացայ քշել բերել»։ Գիւղացիներից շատերը թափուեցան ծովը ոչխարներ բերելու։ Երբ նրանք երկար ժամանակ չը վերադարձան, մնացածներն սկսեցին նեղել մոլլին։ Բայց մոլլա Նասր-էդ-դինը ասաց նրանց, թէ նրանք կամենում են

քշել բոլոր ոչխարներին, որոնք, արածում են ծովի յատակում, բայց սրա համար նրանք սակաւաթիւ են։ Այդ ժամանակ միւս մնացածներն էլ ծովը թափուեցան գոչելով. «Գալիս ենք օգնելու»։ Սրանից յետոյ մոլլա Նասր-էդ-դինը սկսեց հանգիստ, խաղաղ կեանք վարել։

143

Մի անգամ մի մարդ մի հրէայից 5000 ղուրուշ պարտ վերցրեց, այն պայմանով, որ եթէ մի ամսից լիովին չվերադարձնէ, հրէան իրաւունք ունենայ նրա ազդրից մի հոխա միս կտրելու։ Ամիսն անցնում է և պարտապանը չի կարողանում վճարել։ Հրէան դանակը վերցնում է նրա միսը կտրելու, սա փախչում է, հրէան ընկնում է սրա յետևից։

Պաշտպանուելու համար պարտապանը մի քար է ձգում դէպի հրէան, բայց քարը փոխանակ հրէային, դիպչում է մի ուղտի և աջ աչքը փչացնում է։ Ուղտապանն էլ հրէայի հետ ընկնում է պարտապանի յետևից, սա վազում, բարձրանում է մի մինարէ, և երբ տեսնում է, որ այդտեղ էլ են հետևում, վայր է թռչում, ընկնում մի հիւանդի վրայ, որ մինարէի տակ պառկած է եղել։ Հիւանդը հարուածից մեռնում է և նրա տէրը ևս ընկնում է սրա յետևից։ Սա գալիս ապաւինում է մոլլա Նասր-էդ-դինին։ «Սպասեցէք, ասում է մոլլան հալածողներին, ես ձեր դատը կը կարեմ, միայն այն պայմանով, որ ով իմ վճիռը չկատարէ, 500 դուրուշ տուգանքի ենթարկուի»։ Հալածողները համաձայնում են։

Մոլլան ասում է հրէային. «Վերցրու դանակը և կտրիր մի հոխա միս, միայն այն պայմանով, որ ոչ մի մսխալ աւելի կամ պակաս չլինի և արիւն դուրս չը գայ, որովհետև պայմանի մէջ խօսք չէ եղած արեան մասին։ Իսկ եթէ աւել կամ պակաս կըտրես, սա կրկնապատիկը կտրելու է քեզանից»։ Հրէան մտածում է և աւելի լաւ է համարում տուգանքը վճարել, քան դանակը բարձրացնել իւր պարտապանի վրայ։

Ապա Մոլլան դառնում է ուղտապանին.

«Թող սա կանգնի քեզնից այնքան հեռու, որքան հեռու էր նրանից քո ուղտը՝ երբ սա նրան խփեց, և դու վերցրու մի քար և խփիր, հանիր սրա աջ աչքը, միայն այն պայմանով՝ որ եթէ քա-

ը ուրիշ տեղ դիպչի, կամ բացի աչ աչքից մի ուրիշ տեղ էլ վը-նասէ, նա կրկնապատիկը պիտի հատուցանէ քեզ»։

Ուղտապանն էլ հրաժարւում է իւր պահանջից, լաւ համարելով տուգանքը վճարել, քան վտանգի ենթարկուել։

Այս երկուսից ազատուելով, մոլլան դառնում է հիւանդի տիրոջը. «Թող սա պառկի մինարէի տակ, և դու ել, մինարէի գլխից թռիր վրան, սպանիր։ Բայց եթէ վերան չթռչես և չսպանես, այն ժամանակ մահապարտ ես»։

Սա էլ շարւում է մոլլի վճռից և լաւ է համարում տուգանքը վճարելով ազատուել փորձանքից։

144

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը ծանօթներին բաղնիս է հրաւիրում։ Բոլորն ուրախութեամբ հաւաքւում են և միասին գնում։ Մոլլան շտապով հանւում է, մրտնում լողանում և շուտով դուրս գալիս, հագնւում, իւր փոխած սպիտակեղէնի հետ գնում միւսների լաւ զգեստները, առնում կռան տակ և տուն վերադառնում, ասելով բաղնեցպանին, որ իւր փոխարէն էլ մնացածներն են վճարելու։

Մոլլան գալիս է տուն, հանում բերած շորերը, թարս դարձնում և թաքցնում։

Մոլլի ծանօթները հանդիստ լողանում են, դուրս գալիս, որ հագնուեն՝ տեսնում են հանդերձները չկան։ Այս ու այն կողմ են նայում, սրան նրան, բաղնեցպանին հարցնում, ոչ ոք չի կարողանում ասել, թէ ով է տարել։ Ճարահատուած ուղարկում են

իրանց տներից ուրիշ շորեր բերել տալիս, հագնւում և կամենում են շտապով գնալ մոլլի մօտ, որ տեսնեն թէ նա՞ է կատակով տարել։

Ուզում են գնալ՝ բայց բաղնեցպանը թոյլ չի տալիս, բաղանիսի վարձն է պահանջում։

—Մի՞թէ մոլլան չէ տուել, հարցնում են սրանք, չէ՞ որ նա է մեզ հրաւիրել։

—Նա ոչ միայն ձեր, այլ և իւր լողանալու վարձը չէ տուել, պատասխանում է բաղնիապանը, և մինչև որ ձերն էլ, նրանն էլ չտաք, ես ձեզ այստեղից բաց չեմ թողնիլ։

Սրանք ճարահատուած վճարում են թէ իրենց և թէ մոլլի լողանալու վարձը և սաստիկ բարկացած շտապում մոլլի տուն։

—Այս ի՞նչ խաղ խաղացիր մեր

գլխին, մոլլա, ասում են նրանք ներս մտնելով, ամօթ չէ՞ քեզ, հրաւիրում ես, յետոյ էլ բաղնիսի փողը չես տալիս, շորերս էլ վերցնում բերում։

—Ի՞նչ ամօթի բան կայ, ասում է մոլլան, ես ձեզ հրաւիրեցի, կարծելով թէ բոլորդ չէք գալ և իմ դրամս կը բաւականանայ, բայց դուք բոլորդ էլ եկաք, ուստի և ես, չկարողանալով բոլորիդ համար վճարել, չկամեցայ բացառութիւն անել և միքանիսիդ վիրաւորել, դրա համար էլ լաւ համարեցի, որ դուք բոլորդ ինձ համար վճարէք։

—Այդ լաւ, բայց մեր շորերն ինչի՞ ես վերցրել բերել։

—Ձեր շորերը թաքս են թէ շիտակ, հարցնում է մոլլան։

—Ի՞նչպէս թէ թարս, իհարկէ, որ շիտակ են, պատասխանում

են մոլլի ծանօթները զարմացած։

—Աստուած, երկինք, գետինք, իմ տանը շիտակ շոր չկայ, երդ-ւում է մոլլան և սրանք հաւա-տալով մոլլի երդումին, թողնում են հեռանում։

ՄՈԼԼԱՆ ՏԽՄԱՐ

145

Մոլլա Նասր-էդ-դինի կինը կերակուր եփել չգիտէր, միշտ աղը կամ շատ և կամ քիչ էր ձը-գում, այնպէս որ մոլլան երբէք կերակրի համը չէր առնում։ Խեղճ ամուսինը շատ խօսեց, տեսաւ ճար չկայ, կնկայ խորհրդով ե-լաւ գնաց զոքանչի մօտ, որ մի հնար սովորացնէ, կերակրի ան-լին ու աղին աղջկանը հասկացնէ։

Զոքանչը երբ տեսաւ մոլլին, կարծեց թէ իրեն համար ընծայ է բերել, ղէմ գնաց, սիրով ըն-դունեց։ Բայց յետոյ երբ մոլլան

փորի ցաւը յայտնեց, ու դառն կերպով աղջկանիցը գանգատուեց.

—Թաղեմ գլուխդ, ասաց զոքանչը, այդ էլ մի բան է, որ ծանը ու բարակ ելել եկել ես. գնա ասա աղջկանս, որ շատին շատ աղ ցկի, քչին քիչ, այն ժամանակը կերակրները ոչ աղի կը լինին, ոչ անլի։

Մոլլան ճաաս բարով ասաց զոքանչին, յետ դարձաւ. և որպէսզի չմոռանայ զոքանչի ասածը, սկսեց շարունակ կրկնել. «Շատին շատ, քչին քիչ»։

Այս խօսքը բերանին հասաւ մի կալի մօտ, ուր երկու եղբայրներ՝ մինը պսակուած և երեխաների տէր, իսկ միւսը՝ անպսակ, ցորենը կասել էին և կամենում էին բաժանել, բայց մէջերը վէճ էր ծագել։ Ամուսնացածը կամենում էր աւելի վերցնել, որովհետև, ասում էր, ես շատուոր եմ, կնկայ, երեխաների տէր, իսկ անպսակը պատասխանում էր, թէ ի՞նչ անեմ, հաւասար աշխատել ենք, հաւասար էլ բաժնելու ենք։ Ահա այս կռուի տաք ժամանակը մոլլան անցկացաւ ասելով. «Շատին շատ, քչին քիչ»։ Շատ ընտանիքի տէրը լսելով մոլլի խօսքերը՝ դարձաւ եղբօրը. Տես. ահա սուրբ մոլլան էլ է իմ կողմից խօսում, շատին շատ, քչին քիչ տուր է ասում։

Արդէն կրակ դարձած եղբայրն որ այս լսեց, էլ բանի չնայեց, եղանը վերցրեց ու ժոլլի գլխին տուեց ասելով. «Բո ի՞նչ բանն է որ մեր գործի մէջ ես խառնըւում»։

—Բայց ի՞նչ ասեմ, հարցրեց մոլլան շուարած։

—Ի՞նչ պիտի ասես, տեսար

կալ ենք կալում՞ ասա. «Աստուած բարաքեաթ տայ», ու անցի գնայ։

—Լա՛ւ, ասաց մոլլան, ու «Աստուած բարաքեաթ տայ» կրկնելով շարունակեց ճանապարհը։ Եկաւ հասաւ մի դաշտ, տեսաւ մի հակայ հովիւ շապիկը հանել քրթւում է, «Աստուած բարաքեաթ տայ», ասաց ու անցաւ։ Բայց հովիւը վեր նայեց, տեսաւ մոլլին, ցուպը քաշեց, ընկաւ ջանին, տուր թէ կըտաս։

—Ինչի՞ ես սպանում, ասաց մոլլան, հապա ի՞նչ ասեմ։

—Ասա Աստուած դրանց բոլորի էլ քոքը կտրի։

Հիմայ էլ այս խօսքերը կրկնելով մոլլան առաջ գնաց, և երբ յանկարծ մի մեռելի պատահեց, էլ չիմացաւ, թէ այնքան բազմութիւնը ինչպէս իրեն վրայ

յարձակուեց, ու քիչ էր մնում, որ «սաղ տեղն ականջը թողնէր»։

—«Լա՛ւ, ի՞նչ ասեմ. դուք ասէք՝ կրկնեմ», բղաւում էր մոլլան։

—Ա՛յ ապուշ, տխմար, տեսար մեռել են տանում, ասա. «Աստուած հոգին լուսաւորէ»։

«Աստուած հոգին լուսաւորէ», կրկնեց մոլլան ու առաջ անցաւ։ Գնաց տեսաւ, որ միքանի մարդ մի սատկած շուն են քաշ տալիս, որ տանեն դէն ձգեն։ «Աստուած հոգին լուսաւորէ», ասաց մոլլան և ուզում էր անցնել, բայց շուն քաշողները շունը վայր դրին, մոլլին ձեռք առան, տուր թէ կըտաս։

—Բաս ի՞նչ ասեմ, որ ջուրն ընկնեմ, ասաց մոլլան.

—Տեսար սատկած շուն են տանում, քիթդ բռնի ասա. փուֆ, ի՞նչ հոտած է։

—Սրանց ձեռքից էլ ազատուելով, մեր մոլլան առաջ գնաց, տեսաւ դաշտի մէջ մակարները շրջան են բռնել ու նորահարսին պար են ածում, խմբով ծափ տալիս, ուրախանում։ Զուռնի ձայնից գլուխուեց, մօտ գնաց, մտաւ մակարների մէջ, տեսաւ նորահարսին, քիթը բռնեց ու ասաց. «Փուֆ, ինչ հոտած է»։

Իսկոյն պարը դադարեց. դաւուլչին կոպալով, զուռնաչին զուռնով, մակարները գաւով այնքան տուին խեղճ մոլլի գլխին, որ ուշքը գնաց։ Վերջապէս մինը նրա վրա կթաց, մի քիչ հեռացրեց, ջուր լցրեց գլխին, ուշքի բերեց և ասաց.

«Կերածը, ա՛յ յիմար, այս քեզի խրատ, մէկ էլ որ հարսանիք տեսնես, փոխանակ յիմար յիմար դուրս տալու, ձեռքերդ բարձրացրու ու մարդավարի պար եկ»։

Մոլլան բարձրացրեց ձեռքերը և պար գալով շարունակեց ճանապարհը։ Նրա չար բաղդից այս անգամ էլ մի որսորդ հրացանը ուղղել էր և կամենում էր մի թռչուն սպանել։ Թռչունը երբ տեսաւ մոլլին գլխարկը ձեռին պար գալիս՝ իսկոյն թռաւ փախաւ։ Որսորդի արիւնը գլուխը տուաց, երբ աչքերը բարձրացրեց ու պար եկող մոլլին տեսաւ։ Հրացանը դարձրեց և նրա կոթով մեր խեղճ մոլլին այնքան տուաց, որ բոլոր պարերն էլ մի անգամից պարեց։

«Ախր ո՞ր քարին տամ գլուխս, ինչպէս տուն դառնամ, որ այսքան ծեծից ազատուեմ», ասաց մոլլան մղկտալով։

—Ի՞նչ ես գժի պէս պարում, տեսար որսորդը նշան է դրել։

գտակդ վերցրու, կուչ արի և կամաց կամաց անցի գնայ։

«Լաւ», ասաց մոլլան, գդակը վերցրեց և կուչ եկած շարունակեց ճանապարհը մի այգու մոտով։

Մէկ էլ յանկարծ մի այգեպան վրայ վազեց ու բռնեց մոլլին։

«Երեք օր անքուն այստեղ անց եմ կացրել, որ բռնեմ այգուս գողին, ասաց այգեպանը, հաղիւ ձեռք ընկար, անիծից ծնունդ»։

«Ինչ գող, Աստուած, երկինք, գետինք վկայ ես գող չեմ», պատասխանեց մոլլան։

—Գող որ չլինիս, գդակդ չես վերցնի ու այդպէս կուչ եկած գաղտագողի չես մանգայ, ասաց այգեպանը, մի լաւ զխկեց, ու առաւ հետը քաղաք տարաւ դատու մօտ։ Դատին լսեց խեղճ մոլլի գլխին եկած արկածները,

խղճաց ու մի մարդ տուեց, որ տուն հասցնի *)։

146

Մի անգամ մոլլա Նասր-էդդինը իւր երեխային նստեցրեց ուսին և խաղացնում էր։ Երեխան յանկարծ մոլլի վիզը թրջեց։ Մոլլան վար դրեց երեխային, մի սափորով ջուր բերեց և ոտից մինչև գլուխը թրջեց նրան։

—Մոլլա, այդ ինչ տեսակ հանաքներ ես անում երեխայի հետ, ասաց կինը։

—Ի՞նչ հանաք, այ կին, ինչեր ես ասում, գոռաց մոլլան, մի նայիր տես, թէ ի՞նչպէս վիզս ու

*) Բացի ժողովրդի պատմածից, օգտուել եմ նաև Մեղու Հայաստանի 1858 թ. № 10 և Աբովեանի «Պարսպ վախտի խաղալիք»-ի մէջ տպուած նոյն առակից։ Սրա մի վարիանտն էլ ինձ տուեց պ. Ս. Մալխասեան։

օձիքս թրջել է. փոքր հասակում որ այդպէս է վարուում հետս, որ մեծանայ՝ գլխիս կը նստի։

147

Մոլլան երազում խաղողի որթ տեսաւ, մեկնեց ձեռքը, որ մի ճութ քաղի՝ ձեռքը դիպաւ կողքը դրուած վառ մոմին. սա վայր ընկաւ և իրերն սկսեցին այրուիլ։

Կինը այս տեսնելով սկսեց գոռալ. «Օգնեցէ՛ք, այրուում ենք»։

Մոլլան այս աղմուկից զարթեց և յանդիմանեց կնոջը՝ ասելով.

—Ինչ յիժար կին ես եղել. չէ՞իր կարող մի քիչ ուշ բղաւել, դուցէ կարողանայի խաղողի ճութը քաղել։

148

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինի պարտէզը մի սպիտակ և մի

սև այծ մտան։ Մոլլան վրայ հասաւ, ընկաւ նրանց յետևից բռնելու։ Սևը փախաւ, բայց սպիտակը մոլլի ճանկն ընկաւ։ Սա փայտը վերցրեց և սկսեց ծեծել ասելով.

—Տо, անտէր, ասենք թէ այն ընկերդ դեռ ես ջահիլ է, ոչինչ չի հասկանում, չէ՞ որ դու ծերութիւնից սպիտակել ես, դու քո խելքիդ ի՞նչ էիր ասում, որ ուրիշի պարտէզն էիր մտնում, մի՞թէ չը-գիտէիր որ քեզ արժան չի նստիլ։

149

Մի օր մոլլան ուսուցիչարան էր գնում դաս տալու։ Ճանապարհին պատահեց մի աւազակի, որին ձերբակալել էին և տանում էին։ Աւազակը աղի արցունք թափելով լաց էր լինում։ Մոլլան մոտեցաւ նրան և ասաց.

—Ի՞նչ է պատահել, ինչի՞ ես լալիս»։

—Ի՞նչպէս լաց չլինիմ, պատասխանեց աւաղակը, տանում են կախելու։

—Մի՞այն, ասաց մոլլան, շատ չնչին պատճառով ես լաց լինում, հապա ե՞ս ինչ անեմ, որ գնում եմ անմիտների գլուխն մի բան մտցնելու։

150

Մոլլա Նասր-էդ-դինն երկու կարաս նաշարաբ ունէր. դրանցից մինին դեռ ևս ձեռք չէր տուել, և ամուր կնքած պահում էր, իսկ միւսից քիչ քիչ հանում էր և իսկոյն նորից կնքում, որպէս զի ո՛չ ոք չհամարձակուի ձեռք տալ։ Այս բանը կնոջը դիւր չեկաւ, ուստի և ծակեց լի կարասի տակը և մինչև կէսը դատարկեց։

Երբ առաջին կարասը դատարկուեց, մոլլան երկրորդը բաց արաւ։ Բայց ո՞րքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ կնիքն իւր ձեռքով կոտրելուց յետ, կարասը կիսով չափ դատարկ գտաւ։ Զարմանքին յաջորդեց հայհոյանքը։ Կինը վրայ հասաւ, ու հարցրեց.

—Ի՞նչ պատահեց, մոլլա, ինչի՞ ես բղաւում։

—Նրա համար որ, իմ ձեռքով կնքած կարասը իմ ձեռքով բանալով կիսով չափ դատարկ եմ գտնում, և չեմ կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ պէտք է այդպէս լինի։

—Գուցէ տակը ծակել են ու նաշարաբը գողացել, ասաց կինը։

—Ի՞նչ ես դուրս տալիս դու էլ, չե՞ս տեսնում, որ կարասի վերևիցն է պակաս և ո՛չ թէ տակից, նախատեց բարկացած մոլլան։

151

Մոլլան կուժը տուեց իւր որ-դուն որ գնայ աղբիւրից ջուր բե-բի։ Բայց գնալուց առաջ մի լաւ խրատեց, որ չլինի թէ կուժը կոտրի։ Եւ դեռ այս բաւական չէ՝ սկսեց ծեծել նրան։

—Ինչի՞ ես երեխային թակում, քեզ ի՞նչ արաւ, հարցրեց կինը։

—Նրա համար եմ թակում, որ կուժը չկոտրի։

—Զարմանալի մարդ ես, դեռ հօ չէ կոտրել,— երբ կոտրէ՝ այն ժամանակ ծեծիր, հիմայ ինչի՞ ես ծեծում, ասաց կինը զարմա-նալով։

—Կուժը կոտրելուց յետոյ էլ ծեծը օգուտ չիտար, ընդհատեց կնոջ խօսքը մոլլան։

—

152

Մոլլա Նասր էդ-դինը արտի մի ծայրում աղան էր կանչում, յե-տոյ վազում, միւս ծայրում ականջ դնում։

—Այդ ի՞նչ ես անում, մոլլա, հարցրին արտաւորները։

– Ասում եմ, թէ իմ ձայնս հեռ-ւում շատ քաղցր է լսւում, դրա համար էլ փորձում եմ ու ականջ դնում, պատասխանեց մոլլան։

153

Մոլլա Նասր-էդ-դինի էշը ճա-նապարհին սատկեց։ Մոլլան քեր-թեց էշը, մորթին ձգեց ուսին և դարձաւ գիւղ։ Մի համագիւղացու պատահելով՝ մոլլան հարցրեց.

—Ի՞նչ նոր լուր կայ մեր գիւ-ղում։

—Ոչինչ չկայ, ասաց գիւղացին։

—Ի՞նչպէս, մի՞թէ գիւղում չեն խօսում, որ էշս սատկեց։

—Ո՛չ։

—Աստուած տայ որ սուտ դուրս գայ այդ լուրը, վրայ բերեց ուրախացած մոլլան։

154

Մոլլի կինը վախճանուեց. մոլլան սկսեց սաստիկ լաց լինել։ Նրա մտերիմներից մինը ասաց նրան.

—Ողորմած հոգու հետ վաղուց ի վեր հաշտ չէիր ապրում, հիմայ էլ ազատուեցար, էլ ինչի՞ ես լալիս, ընդհակառակը հիմայ պէտք է ուրախանաս։

—Նրա համար եմ լաց լինում, պատասխանեց մոլլան, թէ ինչու ողորմած հոգին սրանից մի երեք-չորս տարի առաջ չմեռաւ։

155

Մոլլի կինը լուաց նրա աբան և տարաւ այգին ծառի ճիւղից կախեց։ Երեկոյեան մոլլան տուն վերադառնալիս մտաւ այգի և տեսնելով աբան՝ կարծեց թէ մարդ է, եկել է գողութեան։ Իսկոյն վերցրեց հրացանը և արձակեց վերան։ Յետոյ կամաց կամաց մօտենալով տեսաւ՝ որ դա ոչ թէ գող, այլ իւր աբան է։

—Փառք Աստուծոյ, ասաց մոլլան, որ այդ աբան հագիս չէր, ապա թէ ոչ՝ հիմայ ես այն աշխարհումը կը լինէի։

156

Մոլլա Նասր-էդ-դինի էշը գետն անցնելիս՝ ջուրը քշեց տարաւ։

Մոլլան տեսնելով նրա խեղդուելը, սաստիկ ցաւեց, և գթա-

լով նրան, հանեց գրպանից երկու շահի և ձգեց գետն ասելով.

—Խղճուկ էշս, բոբիկ էիր, առ, ահա քո պայտի փողը։

157

Մոլլա Նասր-էդ-դինը ձմրան սկզբում պատուհանները բաց էր անում, երբ հարցնում էին, թէ ինչո՞ւ է բացել՝ պատասխանում էր, թէ առաջը գարուն է. իսկ երբ գարուն էր գալիս պատուհանները, դռները փակում էր, և երբ հարցնում էին, թէ ինչի՞ է այդպէս վարուում, պատասխանում էր, թէ ի՞նչ անէ, գալածը ձմեռ է։

158

Մի անգամ մինը հարցնում է մոլլա Նասր-էդ-դինին, թէ աչքի ցաւի դեղ չգիտէ՞։

—Ի՞նչպէս չէ, պատասխանում

է մոլլան, սև ձիւթը նշանաւոր դեղ է։

Մարդն ուրախացած գնում է տուն, վերցնում մի կտոր սև ձիւթ, հալում և լցնում աչքին։ Լցնում է աչքին և խկոյն կուրանում։ Կատաղած վազում է մոլլի մօտ.

—Ա՜յ մոլլա, Աստուած լուսդ խաւարեցնէ, ինչպէս որ դու իմ լուսս խաւարեցրիր, այս ի՞նչ դեղ էր, որ սովորեցրիր։

—Ես ինչո՞վ եմ մեղաւոր, արդարանում է մոլլան, աշխարհք էլ գիտէ, որ սև ձիւթը դեղ է, ես ի՞նչ անեմ, որ մի ցաւի օգնում է, մի ուրիշին վնասում։

159

Մոլլա Նասր-էդ-դինը կամենում է թռչել մի վարարած առուակի վրայով, բայց չի կարո-

դանում և ընկնում է ջուրը։

—Ա՜խ, երիտասարդութիւն, երիտասարդութիւն, ուր ես. բացականչում է նա հառաչելով, բայց յետոյ, տեսնելով, որ շուրջը մարդ չկայ՝ աւելացնում է.

—Երիտասարդ ժամանակս էլ մի բան չէի...

160

Մոլլան տոպրակը կորցրել էր։ Երբ կինը այս կորուստի համար շատ տխրեց, մոլլան մխիթարեց նրան ասելով.

Բան չկայ, խուրջինի մէջտեղից կը կարենք երկու տոպրակ կը դառնայ։

161

Մոլլա Նասր-էդ-դինը ասում էր. Ես ու իմ կինս իմաստուն ենք. նա ասում է անձրև պիտի

գայ, ես ասում եմ արև պիտի անի, կամ նրա խօսքն է լինում, կամ իմ։

162

Մոլլի կինը ծննդեան ծանր ցաւով բռնուած տանջւում էր։

«Մոլլա, աղօթիր Աստծուն, որ երեխան շուտ ծնուի», ասում է տատմէրը։

—Ես ուրիշ միջոց գիտեմ, ասում է մոլլան և վազում շուկայ, գնում է մի ֆունտ քիշմիշ և բերում տուն։

—Հանգստացիր, կին, ասում է նա, ածելով քիշմիշը նրա առաջ, քո երեխան իսկոյն աշխարհ կը գայ ժողովելու այս քիշմիշները։

163

Մի օր մոլլի աշակերտները

գնում են բակում թաղուած ահագին կարասից ջուր բերելու. իրենց դէմքերը մէջը տեսնելով լեղապատառ վազում են մոլլի մօտ և ասում, թէ կարասի մէջ մարդ է մտել։ Իսկոյն մոլլան աշակերտների հետ մահակներ առած գալիս է գողին բռնելու։ Մոլլան մտնում է կարաս, ձեռներով դէս ընկնում, դէն ընկնում, մարդ չի գտնում։ Յոգնած վեր է բարձրանում առանց մի ձայն հանելու։ Աշակերտները կարծելով թէ գողին է վեր բարձրացնում, մահակներով տալիս են և խեղճի գլուխն ու մէջքը ջարդում։

164

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը պատահում է մի հայ պառաւի, որ սաստիկ լալիս էր։

—Ի՞նչ է պատահել, նանի, ինչի՞

ես լաց լինում, հարցնում է մոլլան։

—Ի՞նչպէս լաց չլինեմ, երբ իմ միակ որդին մահմեդականութիւն ընդունեց։

—Վայ ինձ, ասաց մոլլան, հապա ե՞ս ինչ անեմ, նանի, ես եօթը որդի ունիմ, եօթն էլ մահմետական են։

165

Մոլլա Նասր-էդ-դինը էշը խոտ բարձած ուզում էր գետն անցնել, բայց իշի թարս տամարը բռնել էր, չէր ուզում ջուրը մտնել։ Մոլլան երկար աշխատելուց յետոյ, երբ տեսաւ, որ չի կարողանում նրա կամակորութիւնը կոտրել, վերցրեց կրակ տուեց խոտը։ Էշն սկսեց վեր վեր ցատկոտել։

—Տեսէք կանես, որ գոնէ հիմայ ինձ լսես՝ գետը մտնես, և ոչ թէ

վեր վեր ցատկոտես, խրատեց մոլլան։

166

Մոլլա Նասր-էդ-դինը տեսնում է, որ իւր կինը մեծ խնամք է տանում ու սաստիկ փայփայում թուխս նստած հաւին։ Ցանկանալով նոյն խնամքին ու փայփայանքին արժանանալ, մոլլան վճռում է ինքն էլ թուխս նստել։ Եւ ահա մի օր, երբ կինը բաղնիս է գնում, վերցնում է մի մաղ, մէջը յարդ ածում, մի քսան ձու դարսում և վերան պլպլզում։

Կինը լողանում, վերադառնում է տուն և դուռը ծեծում։ Մոլլան մտածում է, եթէ վեր կենամ դուռը բանամ, հաւկիթներս կը պաղին *), լաւ է տեղիցս չշարժուեմ, թող մի քիչ էլ սպասի։

Սակայն մոլլի կինը այնպէս անողորմաբար սկսում է ծեծել դուռը, որ մոլլան ճարահատուած վեր է թռչում տեղից, բացանում դուռը և սկսում նախատել կնոջը.

—Աստուած կորէ համբերութիւնդ, ինչ եղաւ քեզ, քիչ մնաց դուռը կոտրէիր, գլուխ քար հաւկիթներս, որ քո երեսիցդ լակացան, անճախ հաւերիդ սիլի բիլի անես, չթողիր թէ մենք էլ մէկ առօք փառօք թուխս նստէինք, ձագ հանէինք։

167

Մի գիշեր գողը մտնում է մոլլի տունը և նրա ունեցած չունեցածը տանում։ Առաւօտը նրա հարևանները լսելով այդ դժբաղդութիւնը՝ հաւաքւում են մոլլի մօտ՝ նրան մխիթարելու։

*) Այստեղից առաջացել է «Հաւկիթներդ կը պաղին» դարձուածքը, որ ասում են ուշ շարժուողին։

—Ափսոս, ափսոս, ասում է մինը, այս ինչ դժբաղդութիւն է պատահել խեղճին. բայց եթէ տան դռները պինդ փակած լինէր՝ այս դժբաղդութիւնը չէր պատահի։

Միւսն աւելացնում է. «Եթէ պատուհանն էլ լաւ կողպած լինէր, գողը չէր կարող ներս մտնել»։

Երրորդն էլ վրայ է բերում. «Եթէ այս պատուհանը երկաթի վանդակ ունենար, գողը մոլլի տանից ոչինչ չէր կարող տանել»։

Միւս հարևաններն էլ ուրիշ պատճառներ են ցոյց տալիս։

—Շատ լաւ, ասում է մոլլան դժգոհութեամբ, ասենք թէ այդ բոլորը իմ մեղս է, բայց մի՞թէ գողացողն էլ ոչ մի մեղ չունէր, որ նրա մասին ոչինչ չէք ասում։

168

Մոլլա Նասր-էդ-դինը կամենում էր բռնել իւր հորթը, բայց սա աքացի տուեց ու փախաւ։ Մոլլան բարկացած փայտն առաւ և ընկաւ հորթի մօր՝ կովի վրայ և սկսեց խփել։

—Ցիմար, ինչո՞վ է կովը մեղաւոր, գոչեց կինը։

«Հէնց նա է մեղաւոր, նա է սովորեցրել նրան աքացի տալ և փախչել մարդկանցից, ապա թէ ոչ վեց ամսական հորթը կարո՞ղ էր այնպէս ճարպիկութեամբ աքացի տալ և փախչել և մինչև անգամ պոչն էլ չգրու վեր ցցել»։

169

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինից հարևանը իշի փորքաշը խնդրեց։

—Կինը վերան աղուն է փռել, պատասխանեց մոլլան, թէ չէ ամենայն սիրով կը տայի։

—Ի՞նչ ես ասում, մի՞թէ կարելի է փորքաշի վրայ աղուն փռել, թէ չես ուզում տալ, ուղղակի մերժիր, ասաց հարևանը։

—Եթէ մերժելու ժամադրութիւն ունենայի, կասէի թէ կինս ոչ թէ ցորեն, այլ ալիւր է փռել, արդարացաւ մոլլան։

170

Մոլլան մի լերան գագաթին կամուրջ է շինում. նրան նկատում են, թէ կամուրջը վերի վրայ են շինում և ոչ լերան գագաթին։

—Իմ քէֆս այսպէս է տալիս, ասում է մոլլան, ես լերան գագաթին եմ շինում, ջուրն ուզում է թող գայ տակովը անցնի։

171

Մի անգամ մոլլա Նասր-էդդինը հանդիպելով իւր մի քանի ծանօթներին՝ հրաւիրեց տուն՝ ճաշելու. բայց յետոյ մտածելով, որ ոչինչ չունի նրանց հիւրասիրելու, խնդրեց մի քիչ սպասել դրան առաջ և ինքը մտաւ տուն։

—Ի սէր Աստծու, ասաց նա կընոջը, վոնդիր այդ ձրիակերներին. նրանք ինձանից ճաշ են պահանջում, իսկ մենք այսօր ոչինչ չունենք։

Կինը դուրս եկաւ և ասաց հիւրերին, թէ մոլլան տանը չէ։

—Ի՞նչպէս թէ տանը չէ, հէնց նոր ներս մտաւ, պատասխանեցին հիւրերը և սկսեցին հայհոյել կընոջը, որ սուտ է խօսում։

Սրանք երկար կուում էին, երբ վերջապէս մոլլան բաց արեց

պատուհանը և բղաւեց հիւրերին.

—Ինչո՞ւ էք այդպէս բարկանում. մի՞թէ այս տունը չէ կարող երկու դուռ ունենալ և ես չէի կարող մինից մտնել և միւսից՝ դուրս գալ. և կինս իրաւացի չէ՞ր լինիլ, ասելով թէ ես տանը չեմ։

172

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը գնաց բաղնիս և այնտեղ բազմութիւն չգտնելով սկսեց բարձր երգել։ Մոլլին շատ դիւր եկաւ իւր ձայնը, թէև, պէտք է ասել, որ շատ վատ ձայն ունէր։ Դուրս գալով բաղնիսից՝ մոլլան բարձրացաւ մօտակայ մինարէի վրայ և սկսեց երգել երեկոյեան աղօթքը, թէև դեռ նոր էր կէս օրը անցել։

— Փու, ինչ վատ ձայն ունի այս

մոլլան, բղաւեց հաւաքուած ամբոխը։

«Դուք այդ չէիք ասիլ, եթէ այս մինարէի վրայ շինուած լինէր այն բաղնիսը, ուր ես այնքան լաւ երգեցի, պատասխանեց մոլլան։

173

Մի անգամ մոլլան իշի վրայ նստած վերադառնում էր շատ հեռու տեղից։ Ծարաւից տանջուած էշը հեռուում մի շամբ տեսնելով՝ վայր ձգեց մոլլին և վազեց ջուր խմելու։ Բայց էշը սիրտ չարաւ, որովհետև շամբը լիքն էր կոկորան գորտերով։ Մոլլան շատ ուրախացաւ, որ անհամբեր էշը այսպէս պատժուեց, ու հանելով գրպանից երկու դուրուշ, ձգեց շամբի մէջ ու ասաց.

—Շնորհակալ եմ ձեզանից, ճան-

ճի սոխակները, որ իշխս համբերութիւն սովորեցրիք, ահա, գնացէք ձեզ համար քիշմիշ առէք։

174

—Մոլլա Նասր-էդ-դինը կնոջն ասաց.

Այ կին, ուզում եմ ճանապարհորդութեան գնալ։

—Գնա, ասաց կինը և սա գընաց, մի քաղաքի մօտ նստեց և սկսեց ծառերը հաշուել։ Մի անցորդ նկատելով, որ սա խելքից թեթև պիտի լինի, որ բան ու գործ թողած ծառեր է համարում՝ օձիքից բռնեց և ասաց. «Քանի՞սը համարեցիր։

—Քսանը։

«Դէհ քսան ղուրուշ տուր, որովհետև մեր քաղաքի օրէնքն այնպէս է, որ ով ինչքան ծիտ համարի՝ այնքան ղուրուշ տուգանք վճարելու պատժին պիտի ենթարկուի։

Մոլլան անտրտունջ վճարեց։ Եւ երբ անցորդը հեռացաւ, ետևից բղաւեց.

—Ինչ յիմար մարդ ես, ես քեզ խաբեցի, ոչ թէ քսանը, այլ քառասունն էի համարել։

175

Մի անգամ մոլլան գնաց վաճառանոց հաց առնելու։ Մի մսագործ նրան առաջարկեց մի ջիկեար եղ առնել, ասելով թէ շատ լաւն է։ Մոլլան պատասխանեց։

—Կառնէի, բայց եփել չըգիտեմ։

Մսագործը սովորեցրեց և նա առաւ։ Կէս օր էր. շոգը շատ նեղացնում էր նրան։ Տան ճանապարհը անցնում էր անտառով. մոլլան այլևս չդիմանալով շոգին՝ կախեց ջիկեարը մի ծառից և ինքն էլ պառկեց ստուերում։ Հիա-

ցած ջիկեարն էր դիտում, երբ մի ագռաւ յանկարծ խլեց ջիկեարն ու տարաւ։

—Տար, գոչեց մոլլան, որ եփելը չը գիտես։

176

Մոլլա Նասր-էդ-դինը մի քանի հաւ տապակեց, դրեց մի կաթսայի մէջ, բերանը ծածկեց և գնաց բարեկամներին ճաշի հրաւիրելու։

Այս միջոցին նրա կինը, ժողովրդի բացակայութիւնից օգտուելով, իւր սիրականի հետ կերաւ հաւերը և կաթսայի մէջ մի քանի կենդանի աղաւնիներ փակեց։

Մոլլան բարեկամների հետ վերադարձաւ տուն, ժամեցաւ կաթսային և հազիւ թէ վերցրեց խուփը՝ երբ աղաւնիները դուրս թռան և փախան զանազան կողմեր։

Մոլլան շուարած մնաց։

—Ողորմած Աստուած, բացականչեց նա վերջապէս. Քո զօրութիւնն անվիճելի է, դու գթացիր տապակած հաւերի վրայ, կենդանացրիր և ազատեցիր նրանց, բայց ասա ինձ, ո՞ւմից պիտի ստանամ իւղի, հաւերի և վառելիքիս արժէքը։ Ինչո՞վ հիւրասիրեմ հիւրերիս։

177

Մոլլան բակեղաթը (խուրջին) ձգեց իշի վրայ, մի աչքը ցորեն ածեց, միւսումն էլ քարեր դրեց հաւասարակշռելու համար և քշեց դէպի ջրաղաց։

—Բակեղաթումդ ի՞նչ կայ, հարցրեց նրան մի անցորդ։

«Մի աչքում ցորեն, միւսում քարեր՝ հաւասարակշռելու համար։

—Ա՜յ յիմար մարդ, ասաց անցորդը, ինչո՞ւ իզուր ծանրաբեռ-

նում ես իշիդ, վայր թափիր քարերը և ցորենի կէսն այնտեղ ածա, պրծաւ դնաց։

Մոլլան հիանալով նրա խելքի և հնարագիտութեան վրայ, հետևեց նրա խորհրդին, բայց յետոյ մտածեց և դարձրեց.

—Դու հարուստ մարդ ես։

«Ոչ, աղքատ եմ, ես ոչինչ չունեմ»։

—Էհէ, իսկ ես լսեցի այս յիմար մարդու խորհուրդը. մտածեց մոլլան, յետ ածեց բակեղաթի աչքը, միւսում քարեր դրեց և շարունակեց ճանապարհը։

178

Մի անգամ մոլլա Նասր-էդդինը էշը տանում էր ծախելու. ճանապարհին էշը ցեխն ընկաւ և պոչը ցեխոտեց։

—Թողէ, ըղաւեց մոլլան։

էշը կանգնեց։ Մոլլան ինքն իրեն մտածեց. «եթէ էշս այսպէս տանիմ շուկայ՝ ոչ ոք չի առնիլ. կը կարծեն թէ թուլութիւնից է ընկել ցեխը»։ Ուստի առանց երկար մտածելու կտրեց պոչը և պահեց բակեղաթում։ Շուկայում բաւական գնորդներ հաւաքուեցան մոլլի շուրջը և բոլորն էլ, կարծես, միաձայն ասացին.

—Լաւ էշ է, լաւ էշ է, ափսոս որ պոչ չունի։

«Պոչի համար մի անհանգստանաք, շտապով յայտնեց մոլլան, ով որ գնէ էշը, նա էլ կստանայ ինձնից պոչը»։

Այս խօսքերով նա բակեղաթից հանեց ցեխոտ պոչը և, ի հաճոյս բոլորի, ցոյց տուեց գնողներին։

179

Մի քաղաքում մոլլան տեսաւ,

որ ամբոխը հաւաքուել և հետաքրքրութեամբ հետևում էր նոր լուսնի երևալուն։ Այս այնքան զարմացրեց մոլլին, որ նա բացականչեց.

—Աստուած իմ, ինչ յիմար մարդիկ են, խմբով հաւաքւում են, որ տեսնեն փոքրիկ լուսինը, մինչդեռ մեր քաղաքում ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում նրա վրայ, մինչև անգամ երբ նա երկանաքարի մեծութեան է։

180

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը մի թաշկինակի մէջ կապած դեղձեր էր տանում։

Մի խումբ ծանօթների մօտով անցնելիս նա մտածեց մի հանաք անել և ասաց.

—Որքդ որ իմանայ թէ թաշկինակիս մէջ ինչ կայ՝ ես նրան

այս դեղձերից ամենամեծը կըտամ։

Իսկոյն մինը գոչեց.

«Դեղձեր»։

—Այդ ո՞ր շան որդին է ասել քեզ, բարկացած ասաց մոլլան, խոստման համաձայն տալով նըրան ամենամեծ դեղձը։

181

Մոլլա Նասր-էդ-դինի մայրը իւր ծանօթի թաղման պիտի գնար, ուստի պատուիրեց որդուն, որ դուռը պահպանէ։ Նասր-էդ-դինը նստեց և շարունակ նայում էր դռանը։ Մայրն ուշացաւ և նա ձանձրանալով կամեցաւ գնալ, մի քիչ զբօսնել, բայց որովհետև մայրը պատուիրել էր դուռը պահել, ահագին չարչարանքով հանեց դուռը ծխնիներից, շալակեց և գնաց շուկայ։ Մայրը վերադարձաւ և չտեսնելով ոչ որդուն և ոչ

էլ դուռը, շուարած գնաց որոնելու։ Եւ երբ գտաւ նրան ահագին դուռը մէջքին, սկսեց բարկանալ վրան։

—Ի՞նչ ես բարկանում, գոչեց մոլլան, դու պատուիրեցիր դուռը պահել, ես էլ հոգիս բերանս առնելով պահեցի, էլ ի՞նչ ես ուզում։

182

Մոլլա Նասր-էդ-դինը քաղաքից տուն էր վերադառնում և ապահովութեան համար պատրաստ բռնել էր մի ձեռում սուր, միւսում ատրճանակ։ Յանկարծ նրան պատահում է մի հետևակ և բոլոր ունեցածը խլում է նրանից, նոյն իսկ արխալուղն ու անդրավարտիկը։ Մոլլան գալիս է բարեկամների մօտ և պատմում, թէ ինչպէս ճանապարհին մի մարդ

յարձակուեց իւր վրայ և թալանեց։

—Բայց մի՞թէ դու զէնք չունէիր, հարցնում են նրան բարեկամները։

«Ի՞նչ կարող էի անել, պատասխանում է մոլլան, երկու ձեռքումս էլ բան կար, մինում սուր, միւսում ատրճանակ, իսկ եթէ ձեռքերս ազատ լինէին, ես նրան կը խեղդէի»։

183

Մի անգամ մոլլան մի լաւ մուշտակ է առնում, տանում տուն։ Մի ուրիշ մարդ գիտենալով որ մոլլի կինը փոքր ինչ թեթևամիտ է՝ ուզում է նրանից այդ մուշտակը փախցնել։ Գնում է տուն մտնում, մոլլի կինը բարկանում է, թէ ինչի՞ ես այստեղ եկել, դժողքը գնա։

Սա պատասխանում է, թէ այնտեղից եմ գալիս, այնտեղ էլ պի-

տի վերադառնամ իսկոյն։

—Թէ որ այդպէս է՝ ասում է մոլլի կինը, իմ եղբօրից մի լուր չունիս։

—Թէ ինչպէս չէ, սաստիկ մըրսում է, ինձ խնդրեց, որ քեզանից մի շոր, մի չէր կտոր ուզեմ։

—Առ այս մուշտակը տար իրեն, ասում է մոլլի կինը և մուշտակը նրան տալիս։

Սա առնում և գնում է։

Մի քիչ յետոյ մոլլան գալիս է տուն, կինն ուրախութեամբ պատմում է նրան, թէ մուշտակը իւր մեռած եղբօրն է ուղարկել։ Մոլլան իսկոյն ձի է նստում և ընկնում տանողի յետևից։ Վերջինս տեսնելով, որ մոլլան գալիս է, մտնում է մի ջրաղաց։ Մոլլան իսկոյն քշում է ձին, վայր իջնում, ձին կապում, մտնում ջրաղաց նրան բռնելու, բայց այս միջոցին մուշտակը տանողը ջրաղացի ցրտոնն է մտնում, ջրի նաւով դուրս գալիս, ձին հեծնում և փախչում։ Մոլլան ճարահատուած վերադառնում է տուն։

—Ի՞նչ արիր, հարցնում է կինը։

—Դու մուշտակը տուիր, ես էլ ձիս՝ որ շուտ հասնի, պատասխանում է մոլլան։

184

Մոլլան գալիս է Դիարբէքիր քաղաքը, որ յայտնի էր իւր ահագին մեծութեան ձմերուկներով։ Վաճառականոցում մեծ մեծ ձմերուկներ տեսնելով և կասկածելով որ դրանք ձմերուկներ են՝ հարցնում է ծախողին, թէ դրանք ի՞նչ են։

—Սրանք իշի ձուեր են, իշի ձուեր, որոնցից ծնւում են էշեր մեծ, ահագին էշեր, պատասխանում

է ծիծաղելով ձմերուկ ծախողը։

Մոլլան հաւատում է և սկսում է մտածել. «Ի՞նչ լաւ դէպք է էժան էշ ձեռք բերելու»։ Գնում է մի ձմերուկ և վերադառնում Աղշէհիր՝ իրենց քաղաքը։ Դեռ քաղաք չը հասած՝ յանկարծ ձեռքից վայր է ընկնում ձմերուկը. սա գլորւում է, դիպչում մի քարի և կոտրւում, իսկ քարի տակից դուրս է պրծնում մի նապաստակ և փախչում դէպի մօտակայ այգին։

—Բռնեցէք, դա իմ էշն է, բըղաւում է մոլլան և ընկնում նրա յետևից։

Այգում պատահում է կնոջը։

—Զը տեսա՞ր, ո՞ւր փախաւ էշս, հարցնում է մոլլան շտապով։

—Է՞շ ես առել, ինչ լաւ, կընստեմ, կերթամ հօրանցս, ասում է կինը՝ հաւատացած լինելով՝ որ

մոլլան յիրաւի էշ է գնել։

—Անխիղճ կին, ի՞նչ անգութ ես. ուզում ես կոտրել սփայիս մէջքը, հա՞, բղաւում է մոլլան և սկսում թակել կնոջը։

185

Մի անգամ մոլլին հարցրին թէ որքան է հասկանում մատիմատիկայից։ Նա պատասխանեց, թէ այդ գիտութիւնն այնքան լաւ գիտէ, որ դեռ ես դրան վերաբերեալ մի խնդիր չէ եղել, որ դըժուարանար լուծել։ Որպէսզի քընեն մոլլին, առաջարկեցին բաժանել չորս դրախմը երեք ընկերների մէջ։ Մոլլա Նասր-էդդինը ասաց.

—Այդ էլ բան է ու... առաջին երկուսին կըտանք երկու երկու դրախմա, իսկ երրորդին կասենք սպասէ, երբ Աստուած ուրիշ եր-

կու դրախմա էլ կը տայ, այն ժամանակ նրան էլ կը բաւակա-նացնենք։

186

Մոլան վտանգաւոր կերպով հի-ւանդ էր, ուստի և կտակեց իրեն հին գերեզմանատանը թաղել։

—Ի՞նչու ես կամենում, որ քեզ հին գերեզմանատանը թաղեն, հարցրին հաւաքուած բարեկամ-ները։

«Եթէ հին գերեզմանատանը թաղէք, այն ժամանակ մունկիրը*) ինձ հին մեռելի տեղ կ'ընդու-

*) Մունկիրը այն հրեշտակի ա-նունն է, որ ըստ մահմեդականների, մի ուրիշ, Նիլկիր անունով հրեշտակի հետ քննութեան է ենթարկում մեռել-ներին, հէնց որ նրանց գերեզման են իջեցնում։

նի և այլ ես չի քննիլ, բացա-տրեց մոլլան։

187

Մոլլի երկու տարեկան երեխան մեռաւ։ Վշտացած հայրը գնաց հրաւիրեց իւր բարեկամներին թաղման հանդիսին մասնակցե-լու։ Իսկոյն այնքան մեծ բազ-մութիւն հաւաքուեց տան դռան առաջը, որ մոլլան տեսնելով՝ շփո-թուեց։

—Ես, պարոններ,—դիմեց մոլ-լան բազմութեանը, ես սաստիկ յուզուած եմ ձեր սիրալիրու-թիւնից, իմ մեռած որդին այն-քան փոքր է, որ արժանի չէ ձեր ցոյց տուած պատուին, ուստի ես նրան չեմ տանիլ ձեր յուզար-կաւորութեամբ, սպասեցէք, շու-տով Աստուած կը տայ, մեր տան

մեծերից մինը կը մեռնի, այն ժամանակ մենք նրան կը թաղենք այսպիսի հանդիսով։

188

Մարդու մէկը բռի մէջ մի ձու պահած՝ ասում է մոլլին.

—Եթէ իմանաս, թէ բռիս մէջն ինչ կայ, քեզ մի ձու էլ կը բաշխեմ։

—Լաւ, բայց առաջ պատմիր, թէ ինչ ձև ունի։

—Դէհ, մէջը դեղին է, երեսը սպիտակ։

—Լաւ, լաւ, ընդհատեց մոլլան, նրա բերանը բռնելով, էլ մի շարունակիր, գտայ, շաղկամը ճեղքել, մէջը գազար են դրել։

189

Մի օր մոլլան նստել էր իշու վրայ երեսը պոչի կողմը դարձրած. նրան նկատեցին թէ թարս ես նստել։

—Զարմանալի մարդ էք, ասաց մոլլան, ինչից գիտէք թէ ես որ կողմն եմ գնում, աջ թէ ձախ։

190

Մէկ անգամ Նասր-էդ-դինը հաւով փլաւ պատրաստեց և ուզում էր ուտել, բայց մտածեց, թէ հիմա ախորժակ չունիմ, գընամ մի փոքր ման գամ, յետոյ գամ ուտեմ։

Ամանը թողեց այնպէս դրուած, դուռը փակեց, բանալին էլ դրեց դռան առաջ, քարի տակն ու գնաց։ Ճանապարհին նրան երկու մարդ պատահեցան. մոլլան կասկածոտ աչքով նայեց նրանց վրայ և ասաց.

—Էյ, գողեր, գիտեմ, գնում էք փլաւս ուտելու, հը՞, հասկացայ

ձեր միտքը, թէ՞ չէ։ Չէ, չէք կարող, դուռը կողպել, բանալին դրել եմ դռան առաջ քարի տակ։ Եթէ ուտէք, դատարան քաշ կը տամ ձեզ։

Այս խօսքերով մոլլան հեռացաւ նրանցից։ Անցորդները փլաւի մասին չէին էլ մտածում, չգիտէին անգամ թէ մոլլան փլաւ է պատրաստել։ Բայց. ամեն բան նրանից իմանալով, դուռը բաց արին, փլաւն էլ, հաւն էլ կերան, դուրս եկան։

Մոլլան տուն դարձաւ, տեսաւ միայն հաւի ոսկորներն են մնացել։

—Ի՞նչ ճարպիկ գողեր են եղել, որ համ փլաւս են կերել, համ դուռն են կողպել։ Թէ չէին կողպել, ես գիտէի...

—

191

Մոլլէն մի տիկ պանիր էր գողացել. շատ վախենում էր թէ մի գուցէ մարդիկ տեսած լինին իր գողութիւնը։ Այդ կասկածը փարատելու համար, դուրս եկաւ տանից և երբ տեսնում էր, որ երկու մարդ իրար հետ խօսում են, իւր գողացած պանիրը նրանց խօսակցութեան նիւթն կարծելով, մօտենում էր ու հարցնում.

—Հը՞մ, ինչ կայ, չլինի՞ պանրի մասին էք խօսում։

192

Մոլլա Նասր-էդ-դինը մի օր տասն էշ առաջը խառնած՝ գնում էր։ Ճանապարհին դադրելով, նստեց մէկի վերայ և ինչպէս պատահեց, սկսեց միւսները համարել։ Համարեց մէկ, երկուս...

ինքը, էլի համարեց՝ ինքը։ Շփոթուած իշուց վայր իջաւ ու [illegible]-բից համարեց. տեսաւ, որ տասը հատը լրիւ է. կրկին [illegible] նըստաւ իշուն ու նոր մէկից համարեց։ Բայց այ զարմանք, քանի համարում էր, ինն էր դուրս գալիս։ Ճանապարհին մի մարդ տեսաւ ու հարցրեց պատճառը։

Նա հասկացրեց, որ հեծած իշուն էլ պէտք է համարել։

Մոլլան չուզելով կոտրուիլ, ասաց.

—Ախը գիտէի որ մի այդպիսի բան պէտք է լինէր։

193

Երաշտ տարի էր։ Մոլլան ժամանակին չկարողացաւ իշուն ուտելիք պատրաստել։ Ջմեռը էշը մնաց անօթի և զռում էր։ Մոլլի սիրտը մղկտում էր, ու չէր դի-

մանում իշու զոռոցին, սկսեց մխիթարել նրան.

—Մի սատկիր, էշ ջան, մի սատկիր, գարունը կը գայ, եօնջա ([illegible]) կը բուսնի, կուտես, կ[illegible] կշ[illegible]անաս։

194

Մի անգամ մոլլան կնոջը հարցրեց, թէ մեռած մարդն ինչից է ճանաչւում։ Կինը բացատրեց, որ ձեռքերն ու ոտները սառչում են։

Մի օր մոլլան փայտ կտրելիս ձեռքերն ու ոտքերը մրսեցին։

—Էհ վախ, գոչեց մոլլան, բանս բուրդ է, ես մեռայ, ու գնաց մի ծառի տակ ձգուեց։

Գայլերն եկան, սկսեցին էշն ուտել։ Մոլլան գլուխը բարձրացնելով ասաց. «Հայ վախ հայ, մեռնելուս էք հանդիպել, կերէք, անուշ լինի ձեզ»։

195

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը էշը կորցրեց և տուն վերադառնալով ուրախ ուրախ ասաց կնոջը.

—Բա չես ասի, կին, էշս կորցրի։

—Երեսդ պարզ, լաւ բան ես արել՝ ուրախանում էլ ես, յանդիմանեց կինը։

—Ինչպէս չուրախանամ, արդարացաւ մոլլան, չէ՞ որ, եթէ վերան նստած լինէի, ես էլ կը կորչէի։

196

Մի անգամ մոլլան բարձրանում է մզկիթի գլուխը և բարձր ձայնով ասում է.

«Սիրելի ժողովուրդ, այսօր մեր բէկի տանը մեծ ճաշկերոյթ կայ, ուստի սրանով յայտնում

եմ որ բոլորդ էլ ներկայ լինիք։

Ժողովուրդը լսելով վազում է բէկի տուն. մոլլան տեսնելով, որ բոլորը գնացին՝ մտածում է, թէ մի գուցէ ճիշտ լինի, արի ես էլ գնամ, ու շտապով վազում է բէկի տուն։

197

Մոլլա Նասր-էդ-դինի բարեկամը խնդրեց, որ գայ դատարան և սուտ վկայութիւն տայ թէ այս ինչ մարդը գողացել է մի թաղար ցորեն։

Մոլլան համաձայնեց և գնաց։

—Ահա այս մարդը ինձանից գողացել է մի թաղար ցորեն, ասաց գանգատաւորը ու մոլլան էլ վկայ է։

—Դրուստ է, հաստատեց մոլլան, այս մարդը սրանից գողացել է մի թաղար գարի։

—Ցորեն է, ցորեն, գարի չէ, ուղղեց գանգատաւորը։

—Միենոյն չէ՞, վրայ բերեց մոլլան, մի բան որ սուտ եմ ասում, կուզէ ցորեն լինի, կուզէ գարի։

198

Մոլլա Նասր-էդ-դինը երազում տեսաւ, թէ մեռելը թաղելուց յետոյ իւր ընկերներին ասէր, արծաթէ և թղթէ փողեր տուին, իսկ իրեն՝ սև փող։

Զայրացած մոլլան խփեց տուողի գլխին, բայց խփելիս ձեռքը կըպաւ պատին և ցաւից գաղթնեց։

Կէս քուն, կէս արթուն մոլլան տեսաւ որ սև փողիցն էլ զրկուեց, աչքերը խփեց և ձեռքը երկարացրեց ասելով.

«Վաւ, տուր, թող սև փող լինի։

—

199

Մոլլան քաղաք գնալիս կինը յանձնարարում է մի տաշտ առնել։ Մոլլան առնում է, և վերադարձին մտածելով, որ մի օր պիտի կոտրուի և ինքը ստիպուած պիտի լինի նորից դալ քաղաք կարկատել տալու՝ խփում է գետնին՝ կոտրում և տանում կարկատել տալիս, որ էլ սրա համար նորից քաղաք չդայ։

200

Երբ մոլլա Նասր-էդ-դինը երեխայ էր, հայրը նրան դերձակի մօտ աշակերտ տուեց։ Երեք տարուց յետոյ հայրը գնաց Նասր-էդ-դինի մօտ և հարցրեց թէ ինչ է սովորել այնքան ժամանակում։ Սա պատասխանեց, թէ համարեա դերձակութեան արհեստի կէսը

իւրացրել է. արդէն գիտէ ասեղը թելել, մնում է միայն ասեղը գործ ածելը սովորել։

201

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը գնաց անտառ փայտ բերելու, էշը թողեց անտառի ծայրում, իսկ ինքը մտաւ խորքը՝ փայտ կտրելու։ Մէկ էլ յանկարծ մի ահագին աղաղակ լսեց. դուրս եկաւ անտառից և տեսաւ, որ գայլը ուտում էր էշը, և մի հեռու անցուորական տեսնելով այս՝ ամենայն ուժով բղաւում էր.

—Օգնեցէք, գայլն ուտում է էշը։

Մոլլան բարկացած դիմեց անցուորականին.

«Գայլն իմ էշն է ուտում, էլ դու ինչո՞ւ ես կոկորդդ պատռում»։

202

Մոլլան ու իր կինը վիճում էին միմեանց հետ, թէ ո՞րը պիտի էշը ջուրը տանի։

Ով առաջինը խօսի՝ թող նա տանի. վճռեցին նրանք և երկուսն էլ լուռ նստան։

Գողերը մտան և սկսեցին հաւաքել իրերը. նրանք լուռ նայում էին և ձայն չէին հանում։ Վերջապէս կինը բղաւեց.

—Տանում են իրերը, տեղիցդ չե՞ս շարժուելու։

«Դու առաջինը խօսեցիր, պատասխանում է մոլլան, տար էշը ջրելու։

203

Մի անգամ մոլլան մի քանի ծանօթների հետ գնաց ձկնորսութեան։ Երբ թոռը ձգեցին, մոլլան

ինքն իրեն ձգեց մէջը։ Նրան դուրս քաշեցին։

—Ինչու՞ ընկար թոռի մէջ, հարցրին նրան։

«Ինձ ձուկ երևակայեցի», պատասխանեց մոլլան։

204

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը մի տեղ պպզում է ջուր թափելու, մի ասիր որ այդ տեղ մի աղբիւր կլկլալիս է եղել։ Մոլլան այս կլկլոցը իւր մեզի ձայնը կարծելով, մի օր մի գիշեր պըպզված մնում է։ Կինը գալիս ասում է, թէ այ մարդ, հերիք չէ՞, վերկաց։

Ինչ կայ շտապելու, պատասխանում է մոլլան, չե՞ս լսում մեզիս ձայնը։

—

205

Մի անգամ մոլլան գլխի փաթաթանը փաթաթելիս ծայրը կորցնում է, որոնում է և երբ չի կարողանում գտնել, բարկանում է և տանում շուկայ ծախելու։ Մի մարդ կամենում է գնել, և հարցնում է գինը։ Մոլլան նայելով մարդուն, խղճում է նրան, ու մտածելով ականջին՝ փսփսում է. «Մեղք ես, մի գնիր, այս փաթաթոցի ծայրը չի գտնւում»։

206

Մոլլան կէս գիշերին զարթեցը նում է կնոջը ասելով.

—Վեր կաց, կին, վեր կաց, շուտով ճրագը վառիր, ես կամենում եմ ոտանաւոր գրել, շուտ արա, քանի որ ոգևորութեանս լոպէն չէ անցել։

Մոլլի կինը վեր է կենում, ճը-
լաք վառում և մոլլան գրում է.
«Ես տեսնում եմ երազումս ինչ-
պէս կանաչ հաւը կոցահարում է
քիթս»... Սրա վրայ նա կանգ է
առնում և կրկին քնում։

207

Վաճառանոցում մինը մոլլին
շատ հայհոյեց, բայց մոլլան լռեց
և ոչինչ չպատասխանեց։ Յետոյ,
երբ եկաւ տուն և մտաւ իւր սե-
նեակը՝ սկսեց բղաւել.
—Դու ինքդ ես յիմար, էշ,
շուն, խոզ...

208

Մոլլան դանակը կորցրեց և
կարծելով թէ ալրի պարկի մէջ
ընկած կը լինի, տարաւ կտուրը
և մինչդեռ քամին փչում էր՝
դատարկեց բոլոր ալիւրը, բայց

չգտաւ։ Յետոյ նայեց գրպանը և
գտաւ։

209

Մոլլան ցեխն ընկաւ և սկսեց
բղաւել, որ օգնութեան հասնին։
Երբ տեսաւ որ ոչ ոք չի գալիս,
ինքը իւր մազերից բռնեց և ըս-
կսեց քաշել, յուսալով այսպիսով
ինքն իրեն հանել ցեխից։

210

Մոլլի բարեկամները նրան միշտ
էշ էին կանչում։ Այս բանը շատ
անախորժ էր կնոջը, ուստի և
միշտ ստիպում էր մոլլին, որ ա-
նունը փոխել տայ։ Մոլլան կան-
չեց իւր բարեկամներին, նրանց
լաւ հիւրասիրեց և խնդրեց, որ
անունը փոխեն։ Նրանք էլ փո-
խեցին և անունը դրին սվայ։
—Յիմար, բացականչեց կինը,

սփան մեծանալով էշ կը դառնայ և դու միայն մի քանի շաբաթ կը մնաս այդ անունով։

Ճիշտ որ, մտածեց մոլլան։

211

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը մի օտար քաղաք գնաց, մտաւ մի փոխինդավաճառի խանութ և սկսեց փոխինդ ուտել։

—Է՛յ, ի՞նչ ես անում, բղաւեց փոխինդավաճառը և բռունցքի մի քանի հարուածներ հասցրեց մոլլին։

—Ի՞նչ լաւ քաղաք է այս, ասաց մոլլան, այստեղ զօռով ու ծեծով են մարդու ուտեցնում։

212

Մոլլի աղջիկը գալիս է նրա մօտ և գանգատւում է ամուսնուց.

—Նա ձախ այտիս մի ապտակ

տուեց և այսպիսով անպատուեց աղջկանդ, ասում է նա հօրը։

«Փեսաս վիրաւորեց աղջկանս, ես նրանից վրէժ առնելու համար կը վիրաւորեմ նրա կնոջը». և այս ասելով մի ապտակ էլ ինքը տուեց աղջկայ աջ այտին։

213

Մոլլան լսեց, որ հարևան գիւղում մի շատ նշանաւոր ստախօս կայ, վեր կացաւ գնաց, որ տեսնի նրան։

—Հայրդ տանն է, հարցրեց նա ստախօսի աղջկան, մօտենալով նրա տան դռանը։

«Ոչ, ասաց նա, գնացել է ամպերը կարկատելու, որ պատռուտուել էին երեք տարի առաջ տեղի ունեցած փոթորկից։

—Աղջիկն որ այսպիսի ստախօս է, հայրն ի՞նչ կը լինի, շշնջաց ինքն

իրան մոլլան ու յետ դարձաւ։

214

Երբ Նասր-էդ-դինը մոլլա դարձաւ, կանչեց ծխականներին մըզկիթ և գոհութեան աղօթք կատարեց։ Երբ վերջացրեց, նրան հարցրին թէ ինչ առիթով նա կատարեց այդ գոհութեան աղօթքը։

—Նրա համար, պատասխանեց մոլլան, որ Աստուած թևեր չէ տուել գոմէշին և ուղտին, ապա թէ ոչ այս ահագին կենդանիները կը թռչէին կտուրների վրայ, և ձեր տները կը քանդուէին։

215

Գիւղացիները հարցրին մոլլին, թէ երբ լուսինը սանում է, ինչ են անում կամ ուր են դնում։

Մոլլան մտածեց, մտածեց և

յետոյ խորիմաստ կերպով պատասխանեց.

—Ի՞նչպէս է, որ այսպիսի մի հասարակ բան չէք հասկանում։ Հին լուսինը կոտրատում են և փոքրիկ աստղեր շինում։

Գիւղացիները համբուրեցին նրա ձեռքը, որ այդպէս փարատեց նրանց տարակուսանքը։

216

Մոլլի այգին մի եղ մտաւ և սկսեց փչացնել ծառերը։ Այս տեսնելով մոլլան մահակը վերցրեց և կամեցաւ մի լաւ դաս տալ եղին. բայց սա փախաւ, ապատուեց։

—Մի քանի օրից յետոյ մոլլան պատահեց միևնոյն եղին փողոցում, սայլի մէջ լծուած. մոլլան առանց մի խօսք ասելու յարձակուեց եղի վրայ և սկսեց ծեծել։

Ինչու՞ ես խփում եղիս, հարցնում է կենդանու տէրը։

«Դու թող, ինքը շատ լաւ գիտէ թէ ինչու եմ թակում իրեն», պատասխանում է մոլլան։

217

Մոլլան 9 ձուն առնում էր մի ղուռուշի, ներկում և 10 մի ղուռուշով ծախում։

—Մոլլա, չէ՞ որ այդպիսով դու վնաս ես անում, ասում են նրան հարևանները։

«Ոչինչ, միայն թէ ասեն թէ մոլլան էլ առևտուրով է պարապում», պատասխանում էր մոլլան։

218

Մոլլի էշը գողացան։

—Փառք Ալլահին, փառք Ալլահին, բացականչում էր մոլլան։

«Ինչու՞ ես, մոլլա, այդպէս հանդով փառք տալիս Ալլահին։

—Նրա համար, որ ես էշի վրայ չէի, թէ չէ իշիս հետ ինձ էլ կը գողանային։

219

Մոլլան երեք ֆունտ միս բերեց տուն։

—Այս մսից ի՞նչ կարելի է պատրաստել, հարցնում է կնոջը,

«Ամէն տեսակ կերակուր», պատասխանում է կինը։

—Ուրեմն պատրաստիր այս մսից ամեն տեսակ կերակուր։

220

Մի անգամ մոլլան գերեզմանատան մօտով անցնելիս մի պառաւ շուն տեսաւ և կամեցաւ նրան վռնդել։ Բայց շունը ատամները կրճատացրեց և պատրաստուեց նրա վրայ յարձակուելու։

Մոլլան յետ քաշուելով ասաց.

—Չէ, սխալուեցի, դու աղնուական ես, դու աղա ես, գեղեցիկ, լաւ, էհ էլ ի՞նչ ես ուզում։

221

Մի անգամ մոլլի կինը գնաց գետը լուացք անելու։ Մոլլան էլ գնաց յետևից։ Յանկարծ մի ագռաւ թռաւ և մի մեծ կտոր սապոն փախցրեց։ Մոլլի կինը վազեց սապոնը խլելու։

—Թող, կին,—բղաւեց մոլլան—չե՞ս տեսնում որքան սև է և ցեխոտ, թող տանի սապոնը, լուացուի և գեղեցկանայ։

222

Գիւղում մի նշանաւոր մարդ մեռնում է. գիւղացիները տունը մի գրուանքայ իւղ է խոստանում մոլլին, որ այդ օրը մեռելատուն

չգայ, ոչ ոքի չը ծիծաղացնէ։ Մա համաձայնում է. բայց հէնց որ սգաւորները հաւաքւում են մեռելատանը՝ սա մի շուն է փաթանում և մի կշեռք առած գնում մեռելատուն։ Երբ տեսնում են սրան, մեռելը մոռանում են, ըսկսում են ծիծաղել։

«Ի՞նչ է, ի՞նչի ես եկել», հարցնում են այս ու այն կողմից։

—Թէ բերէք ինձ խոստացած իւղը հէնց հիմա տուէք, ես գիտեմ որ այստեղից ցրուիք թէ չէ, էլ իմ իւղը չէք տալու։

223

Մոլլա Նասր-էդ-դինը ձին քաշելով գնում էր և կամենում էր ծախել։ Բոլոր գնորդները մոտենում էին, նայում և հարցնում մոլլին, թէ այդ այծը ո՞ւր է տանում։ Ի՞նչպէս թէ այծ. սա ձի է,

պատասխանում էր մոլլան, սա-
կայն գնորդները նորից հաւա-
տացնում էին, թէ այծ է. միայն
նրա աչքին ձի է երևում։ Զը կա-
մենալով այծի արժէքով ծախել
իւր ձին, մոլլան յետ է բերում
ձին և պատահածը պատմում է
կնոջը։ Սա էլ գիշերը քաշում է
ձին դուրս, տալիս իւր սիրեկա-
նին և նրա տեղ մի այծ կապում։
Առաւօտեան երբ մոլլան ներս է
մտնում ախոռ և ձիու տեղը մի
այծ կապած տեսնում, սրբում է
աչքերը և նորից նայում, ասելով.
«Ուղիղ էին ասում երէկ, աչքերս
հիմի պարզուել են»։

224

Մոլլան մեղը տարաւ քաղաք
ծախելու։

—Մեղը, քաղցր, համեղ, հոտա-
ւէտ, հրաշալի մեղը,—կանչում էր

մոլլան բարձրաձայն և եռանդով։

Անցորդները մօտենում էին,
համը տեսնում և հեռանում՝ ա-
ռանց առնելու. կէս օրին ամանի
մէջ մեղը չէր մնացել։ Այդ ժա-
մանակ մոլլան ինքը սկսեց լիզել
ամանը և ասաց.

«Ճիշտ էի ասում. մեղրն իս-
կապէս քաղցր ու հիանալի էր»։

225

Մոլլան 25 օր շարունակ օրօջ
էր բռնել, բայց մինչև նորալու-
սինը էլի հինգ օր էր մնացել։ Ել-
կարատև պասից նուաղուած, նի-
հարացած մոլլան լուսաբացին գը-
նաց կտուրը և տեսաւ վերջին
քառորդին հասած լուսինը։

—Թէև դու ինձ նուաղացրիր,
բայց դու էլ, այ լուսին, հալուել
ես. երկու օրից դու այլևս բոլո-
րովին չես երևալ, բայց ես այ-

նուհետև էլ կենդանի կլլինեմ.— դիմեց լուսնին մեր մոլլան։

226

Մոլլա Նասր-էդ-դինը պսակեց իւր աղջկան ու տուեց մակարներին, որ տանեն։ Երբ սրանք բաւական գնացին հեռացան, յանկարծ մոլլի միտքը մի բան ընկաւ, վազեց մակարների հետևից, շնչասպառ հասաւ նրանց ու բոլորին կանգնեցրեց ասելով.

—Սպասեցէք, սպասեցէք, աղջկանս մի խրատ պիտի տամ, քիչ էր մնում որ բոլորովին մոռանայի։

Ապա մօտեցաւ աղջկան և ասաց. «Երբ կարի նստիս, առաջ թելի ծայրը հանգոյց ձգիր և ապա կարիր, թէ չէ՝ թելը կարից դուրս կըգայ և քո աշխատանքդ զուր կանցնի։

—

227

Մոլլա սասր-էդ-դինը մի օր մի քանի ամերուկ գնեց և գնաց անտառը փայտ կտրելու։ Այստեղ մի ծառի ստուերի տակ նստեց, կտրեց մի ամերուկ, որ ուտի, չհաւանեց. խակ էր, մի ուրիշը կտրեց՝ նա էլ չհաւանեց, անհամ էր, երրորդը կտրեց՝ փչացած էր. բարկացաւ. թքեց բոլորի վրայ և ոտով տրորեց։ Յետոյ ելաւ ու սկսեց ծառ կտրել։ Քրտնքի կաթիլներն սկսեցին թափուիլ ճակատից. սաստիկ յոգնեց և ծարաւեց։ Վայր դրեց կացինը, մօտեցաւ ամերուկներին, վերցրեց մի կտոր, նայեց և ասաց. «Կարծեմ թուքս սրան չէ դիպել» ու կերաւ։ Այս կտորը նրան շատ համեղ և զովացուցիչ թուաց, վերցրեց երկրորդը. «Սա էլ, կարծեմ,

ոտիս տակ չէ ընկել, մի քուր է», ասաց ու կերաւ։ Այսպէս պատճառաբանելով նա բոլոր ձմերուկներն էլ ժողովեց, յերաւ։

228

Մի օր մոլլա Նասր-էդ-դինը էշը առաջը ձգեց գնաց անտառից փայտ բերելու։ Սաստիկ շոգ էր, մոլլան մի քիչ փայտ կտրեց, յետոյ պառկեց մի քիչ հանգստանալու։ Վախենալով թէ մի գուցէ քունը տանի և էշը շատ հեռանայ, նա իշու նոխտան կապեց իւր ոտքից և քնեց։ Այս միջոցին երկու մարդ անցկացան, և տեսնելով մոլլին քնած, իրար հետ խորհուրդ արին, մինը հանեց նոխտան իշի գլխից, անցկացրեց իւր գլուխը, իսկ միւսը առաւ էշը և հեռացաւ։ Մի քիչ յետոյ մոլլան զարթնեց, նայեց տեսաւ, որ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅ-Арм. ССР

իշի փոխարէն մի մարդ է կողքին կանգնած, նոխտան գլխին։ Զարհուրեցաւ, աչքերը սրբեց, նորից նայեց և մի բան չկարողացաւ հասկանալ։

—Մի զարմանար, մոլլա, ասաց մարդը, ես քո էշն եմ, միայն Աստծու հրամանով մարդ եմ դարձել։

—Ի՞նչպէս, հարցրեց մոլլան շուարած։

—Ես առաջ էլ մարդ էի, մի օր սաստիկ բարկացրի վարպետիս, նա ինձ անիծեց և ես էշ դարձայ. այսօր Աստուած գթաց ինձ վերայ և կրկին մարդ դարձրեց։

—Հա, բացականչեց մոլլան, դէհ որ այդպէս է, Աստուած քեզ հետ, գնա, միայն զգուշացիր, որ միւս անգամ էլ չբարկացնես տիրոջդ։

Մարդը հանեց նոխտան գլխից և գնաց։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅ-Арм. ССР

Մի օրից ժոլլան պատահեց իւր իշուն բեռի տակ ընկճուած, ցաւակցութեամբ մօտեցաւ նրան և ականջին կամացուկ շշնջաց. «Քեզ չասի՞ թէ վարպետիդ էլ չբարկացնես, ինձ որ լսէիր, այդ օրը խօ նորից չէիր ընկնիլ»։

NL 0015735

015

2001